ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-10** (1656) Հոկտեմբեր 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Իսրայելի դերակատարությունը 44-օրյա պատերազմի օրերին և ոչ միայն (հոդված 1) (էջ 1-2)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայության կենսական շահերի զիջումներով հնարավոր չէ հագեցնել Թուրքիայի և Ադրբեջանի ախորժակը (էջ 3-5)

3- Տարածաշրջանային

Արտյոմ Տոնոյան
Իրանա-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները. նոր իրավիճակ, նոր հնարավորություններ (էջ 6-9)

Լիանա Պետրոսյան
Թուրք-ադրբեջանական շարունակական զորավարժությունները Ադրբեջանում և Իրանի արձագանքը (էջ 10-12)

4- Հասարակություն

Սյուզան Խարտալեան
Քաղաքական բովանդակութեան վերադառնալու «Հայաստան» դաշինքի փորձը (էջ 13-17)

Տիգրան Չանդոյան
Էրդողանի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում, կամ Յենի Սուլթան Էրդողան (հոդված 1) (էջ 18-21)

5- Իրավաքաղաքական

Արմեն Մարուքյան
1921 թ. Կարսի «պայմանագրի» պատմահրավական գնահատականը (էջ 22-26)

6- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Կարսից Արցախ (էջ 27-30)

7- Հայ դատ

Էդիկ Մինասյան
Արցախի անկախության 30-ամյա ուղին (2-րդ մաս) (էջ 31-39)

8- Հայրենի եզերք

Նորեկ Գասպարյան
Իմը (էջ 40-41)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ի՞նչ երկիր կ'ուզենք կառուցել (էջ 42)

10- Անմահները

(էջ 43-44)

Իսրայելի դերակատարությունը 44-օրյա պատերազմի օրերին և ոչ միայն (հոդված 1)

Արցախի դեմ սանձազերծված լայնամասշտաբ ագրեսիայի օրերին Ադրբեջանին Թուրքիայի և իսլամ ծայրահեղականների աջակցության հետ հաճախ էր շրջանառվում Իսրայելի ակտիվ դերակատարության հարցը: Համացանցի էջերում հայտնվում էին լուսանկարներ Թել Ավիվից Բաքու և հակառակ ուղղությամբ բեռնատար ինքնաթիռների չդադարող թռիչքներից: Միջազգային ավիացիոն կազմակերպության և այլ աղբյուրների արձանագրած տեղեկություններից բացի՝ հավաստի տեղեկատվությունը ամեն օր տարածվում էր ճակատային գծից ստացվող լուրերի հետ, թե իսրայելական արտադրության ժամանակակից ռազմական ինչ տեխնիկա, այդ թվում՝ արգելված զինատեսակներ, է օգտագործվում հայկական զինված ուժերի և խաղաղ բնակչության դեմ, պատմամշակութային կոթողների և ենթակառուցվածքների հետևողական ոչնչացման գործողություններում:

Այս փաստն իհարկե աննախադեպ չէր, որովհետև 2016 թվականի քառօրյային ադրբեջանցիների գրավը դրված էր հիմնականում իսրայելական անօդաչուների վրա: Իրականում այս համագործակցությունը սկսվել է դեռևս Արցախյան առաջին պատերազմի օրերին, երբ Իսրայելը ադրբեջանական բանակը զինում էր օրինակ «Stinger» տիպի զենիթահրթիռային համակարգերով: Գաղտնիք չէ նաև, որ անցած երեք տասնամյակներին Իսրայելը եղել է Ադրբեջանի՝ զենքի մեծ մասի մշտական մատակարարներից մեկը:

44-օրյա պատերազմում Իսրայելն իր դերակատարությամբ չի զիջել Թուրքիային, իսկ նրա տրամադրած ռազմատեխնիկական օգնությունը վճռորոշ նշանակություն է ունեցել ադրբեջանական կողմի հաջողությունների հարցում: Իհարկե, դաշնակից տանդեմի կողմերից յուրաքանչյուրն իր պատճառներն ուներ և ունի, որ Իսրայելի մասնակցության հարցը մնա ստվերում:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարով Իսրայելը Ադրբեջանից ներկրում է իր նավթի ավելի քան 40 %-ը, որի դիմաց նա տասնամյակներ շարունակ վճարել է ռազմատեխնիկական միջոցներով: Իսրայելի համար այս համագործակցությունը բխում է որպես գլխավոր թշնամի ճանաչած Իրանի դեմ պայքարի ռազմավարական նպատակից: Մահմեդական Ադրբեջանի հետ գործակցությունը պայմանավորված է նաև ընդհանրապես իսլամական աշխարհի հետ ունեցած և զարգացող հարաբերություններով:

Ավելացնենք նաև, որ այս երկու երկրների հարաբերությունների վրա որոշակի ազդեցություն է ունենում Ադրբեջանի հրեական համայնքը: Իսկ թե ադրբեջանցի հրեաները ինչպիսի աջակցություն են ցուցաբերում ծննդավայր երկրին կանդրադառնանք հետագայում:

Իսրայելն ու Ադրբեջանը համագործակցում

Իսրայելի վարչապետ Նաթանյահու, ԱՀ նախագահ Ալիև

են միջազգային հարթակներում՝ պաշտպանելով միմյանց շահերն ու գործողությունները, լոբբիստական աշխատանքներ տանելով դաշնակցի հեղինակությունը պահպանելու հարցում:

Ինչպես նշվեց, Իսրայել-Ադրբեջան մերձեցումը սկսվել է դեռևս Արցախյան առաջին պատերազմի օրերին: 1993 թ. Իսրայելը դեսպանություն բացեց Բաքվում, սակայն Ադրբեջանը չշտապեց կատարելու փոխադարձ քայլը, ինչը պայմանավորված էր Իրանի նկատմամբ զգուշավոր քաղաքականությամբ:

Ադրբեջանի հյուսիսում Իսրայելը ստեղծել է հենակետեր, որտեղից պատերազմի դեպքում կարող է գործողություններ սկսել Իրանի դեմ:

Հայտնի է նաև իսրայելական հետախուզության ազատ գործունեությունը Ադրբեջանում: Իրանը լրջագույն կասկածներ ունի, որ ժամանակ առ ժամանակ ատոմային ֆիզիկայով զբաղվող իր ականավոր գիտնականների սպանությունները կատարվել են Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից, և այդ գործում կարևոր դերակատարություն է ունեցել Ադրբեջանը: Տեղեկատվական դաշտ սպրդող այս կցկտուր տեղեկություններին տարիներ շարունակ Իրանը ձեռնպահ է մնացել լրջորեն արձագանքելուց, քանի որ դրանից հետո հարկադրված կլիներ վերանայելու Ադրբեջանի հետ ունեցած հարաբերությունները: Իսկ, ինչպես հայտնի է, այս երկու մահմեդական հարևան երկրները թաքցնելով խորքային հակասությունները առերևույթ մշտապես փորձել են ջերմ բարեկամներ ներկայանալ: Մասնավորապես իրանական կողմը չափավոր դժգոհությամբ է միշտ արձագանքել Ադրբեջանի հավակնություններին իր երկրի ազերի բնակչության ու ազերիաբնակ տարածաշրջանի հանդեպ: Այս դիվանագիտությամբ նա փորձել է որքան հնարավոր է մոտ պահել, թույլ չտալ, որ ամբողջովին հակառակ ճամբար մղվի Ադրբեջանը: Մյուս կողմից երկու երկրների հարաբերությունները ուղղակիորեն ազդում են Իրանում պանթուրքիստական խմբավորումների վարքի վրա: Կարելի է ասվածին ավելացնել այլ հանգամանքներ ևս, սակայն դա այլ քննարկման նյութ է:

Ինչպես վերևում ակնարկվեց, պայմանա-

վորված Իրանի հետ Իսրայելի ունեցած աշխարհաքաղաքական խնդիրներով, Ադրբեջանի աշխարհագրական դիրքը Իսրայելի համար այս գործակցությունը դարձնում է խիստ յուրահատուկ և կարևոր: Մյուս կողմից էլ, ելնելով Իրանի նկատմամբ իրական վերաբերմունքից, Ադրբեջանին ձեռնտու է եղել Իսրայելի հետ զարգացնել անվտանգության ու մասնավորապես հետախուզության գծով սերտ գործակցություն, ինչը, նա իհարկե անում է նաև Թուրքիայի հետ: Իսրայելի հետ այդ համագործակցության շրջանակում են քարոզչական աջակցությունը, տեղեկատվության փոխանակումը (ներառյալ իսրայելական արբանյակներից ստացվող տեղեկատվությունը): Համագործակցելով անվտանգության ու հետախուզության հարցերում՝ Իսրայելը միաժամանակ ուսուցանում է ադրբեջանական կադրերին:

Իսրայելը լսումների էլեկտրոնային կայաններ է տեղադրել Կասպից ծովի և Իրանի սահմանի երկայնքով:

Ադրբեջանը մաս է կազմում Թուրքիա-Վրաստան-Իսրայել առանցքին, որին վերջիններս համարում են Իրանի համար հակառակորդ: Ասվածը հաստատող իրողություն է այն, որ իրանցի մի խումբ բարձրաստիճան սպաներ 2004 թ. Բաքվում հորդորել են դրացի երկրի ղեկավարությանը դադարեցնելու անվտանգության գծով համագործակցությունը Իսրայելի հետ և ռազմական ու հետախուզական ոլորտի սպաների տեղակայումը Ադրբեջանի տարածքում՝ Կասպից ծովում իրավունքների շուրջ ընթացող վեճի դրական լուծման դիմաց: Այնինչ Բաքուն Իսրայելի հետ համագործակցությունը դիտում է հենց որպես Իրանից եկող սպառնալիքը չեզոքացնող գործոն:

Ադրբեջանն իրական է համարում Իրանի ազդեցության, մասնավորապես իրանական հեղափոխության գաղափարների ներմուծումը իր տարածք:

Հիմնվելով «SIPRI database»-ի և այլ աղբյուրների տեղեկատվության վրա՝ կարելի է եզրակացնել, որ Իսրայելը Ադրբեջանին մատակարարում է ռազմատեխնիկական բարձր որակի արտադրանք և առաջին հերթին անօդաչու սարքեր ու հրթիռներ, որոնց ողջ տեսականիով համալրված է ադրբեջանական բանակը: ԼՂՀ-ի դեմ պատերազմի նախօրյակին Ադրբեջանին մատակարարվել էին գրեթե 120 տակտիկական և 500 մարտական կամիկաձե անօդաչու թռչող սարքեր, որոնց ճնշող մեծամասնությունը իսրայելական էր, այն դեպքում, երբ թուրքական «Baykar Makina» ընկերությունից գնվել էին ընդամենը 50 «Bayraktar TB2» անօդաչուներ: Իսրայելական «Elta Systems» ընկերությունը թվայնացված քարտեզագրել է Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքը, ինչը մեծ առավելություն է տվել ադրբեջանական ալյանսի ուժերին, իսկ անօդաչու թռչող սարքերի կողմից հայկական տանկերի, ծանր հրետանու և ՀՕՊ համակարգերի սպառազինության կորուստների գրեթե 90 %-ը հասցվել է մարտական

Բաքվում ցույց են անում նաև իսրայելական դրոշներով

իրավիճակի թվային մոդելավորման շնորհիվ: Տարբեր տեսակի անօդաչու սարքերից բացի՝ Ադրբեջանին մատակարարվել են նաև ավիացիոն պաշտպանության համակարգեր, հակատանկային սպառազինություն՝ հակատանկային հրթիռային համակարգեր: Թուրքիայի և Վրաստանի օդային տարածքով Իսրայելը Ադրբեջանին մատակարարել է զինամթերք և սարքավորումներ՝ շուրջ 100 «Boeing 747» և «IL-76TD/MDs» բեռնատար ինքնաթիռներով, որոնք պատկանում են ադրբեջանական «Silk Way Airlines» ավիաընկերությանը և օգտագործվում են նաև ռազմական փոխադրումների համար:

Իսրայելն է ստեղծել Ադրբեջանի նոր նավատորմը նոր ռազմանավերով, ինչպես և 2019 թ. Բաքվի արևելքում կառուցել է նավահանգիստ:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված պատերազմը բացահայտեց Իսրայելի և Ադրբեջանի միջև տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող ռազմական ու ռազմավարական համագործակցությունը: Թեև Ադրբեջանին զենքի վաճառքը Իսրայելը մշտապես փորձել է արդարացնել բիզնես շահերով, ակնհայտ է, որ առկա է Իսրայելի ու Ադրբեջանի, ինչպես և Թուրքիայի միջև ռազմաքաղաքական գործակցություն, որն ուղղված է առաջին հերթին Հայաստանի ու Իրանի դեմ և հետապնդում է թշնամի հայտարարված տերություններին քաղաքական և ռազմական պարտության մատնելու և տարածաշրջանի վրա գերիշխանություն հաստատելու նպատակ: Իսրայելը, առավել քան իր դաշնակիցները, հակված է հնարավորինս քողարկելու իր այս նպատակներն ու գործողությունները՝ նկատի ունենալով տարածաշրջանում ազդեցություն ունեցող և շահագրգիռ այլ ուժերի հետ հակադրության մեջ հայտնվելու հեռանկարն ու այն հանցավոր մեթոդները, որոնցով դաշնակից ուժերը փորձում են հասնել իրենց նպատակներին:

Իհարկե, այս գործակցության մեջ կարևոր ու առանցքային է Թուրքիայի դերակատարությունը, սակայն այդ և առնչակից այլ հարցերի մասին կխոսվի հաջորդող հոդվածում: ■

Հայության կենսական շահերի զիջումներով հնարավոր չէ հագեցնել Թուրքիայի և Ադրբեջանի ախորժակը

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրավերով սեպտեմբերի 8-9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այցով մեկնել էր Վրաստան: Երկու օր տևած հանդիպումներից ու բանակցություններից հետո Հայաստանի ու Վրաստանի ղեկավարները, ըստ էության, փորձագիտական ու անգամ լայն շրջանակների համար հետաքրքիր որևէ գնահատականով կամ նախաձեռնությամբ հանդես չեն եկել: Առաջին հայացքից սա պարզ մի այց էր, որի ընթացքում երկու երկրների միջև անգամ նոր փաստաթղթեր չեն ստորագրվել: Այս հանգամանքը ստիպում է կարծել, որ Նիկոլ Փաշինյանը պարզապես շարունակում է ՀՀ նախկին բոլոր ղեկավարների ավանդույթը և իր՝ որպես երկրի նոր ընտրված ղեկավարի առաջին արտասահմանյան այցերի շարքում է դասում հարևան այն պետությունները, որոնց հետ Հայաստանը լավ հարաբերություններ ունի: Սակայն Փաշինյանի վրաստանյան այցից տասն օր անց՝ սեպտեմբերի 19-ին, պարզվեց, որ նրա հանդիպումը Վրաստանի վարչապետի հետ այդքան էլ անհետաքրքիր չի եղել, որքան դա ներկայացվում էր հանրությանը: Այդ օրը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վրաստանի իր գործընկերոջ միջոցով հանդիպման առաջարկ է ուղարկել իրեն՝ ավելացնելով, որ Թուրքիայի իշխանությունները պատրաստ են նման հանդիպման, եթե Հայաստանը որոշակի քայլեր կատարի: Ավելի ուշ՝ սեպտեմբերի 23-ին, Էրդողանն արդեն ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընթացքում հայտարարեց, որ Հայաստանից դրական ազդակներ են ստացել:

Հայաստանի և Թուրքիայի իշխանությունների՝ միմյանց հղած դրական ազդակների մասին երկու կողմերն էլ վերջին շրջանում շատ են բարձրաձայնում: Պաշտոնական Երևանն էլ չի հերքել Ղարիբաշվիլու միջոցով Էրդողանին հանդիպման հրավեր ուղղելու փաստը: Մեկնաբանելով այդ լուրը՝ ՀՀ կառավարության ղեկավարի մամուլի խոսնակը հայտարարել է. «Վարչապետ Փաշինյանն իր բոլոր միջազգային շփումներում գործընկերներին ներկայացնում է կառավարության ծրագրում արձանագրված՝ Հայաստանի և տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու տեսլականը և արտահայտում է այդ ուղղությամբ ջանքեր գործադրելու Հայաստանի կառավարության պատրաստակամությունը»: Վերջինս նաև նշել է, որ «չնայած Հայաստանի կառավարությունը պատրաստ է նման շփումների, Հայաստանի և Թուրքիայի պաշտոնյաների միջև որևէ շփում դեռևս տեղի չի ունեցել»: Ի դեպ, նշենք, որ վարչապետի մամուլի խոսնակի այս վերջին հայտարարությունն

արդեն իսկ վիճարկվել է Հայաստանի մի շարք փորձագետների և առաջատար լրագրողների կողմից: Վերջիններս հիմնավոր կասկածներ են հայտնում այն մասին, որ արդեն իսկ հիշատակված վրաստանյան այցի վերջին օրը, երբ Փաշինյանը շատերի համար անսպասելիորեն Բաթում մեկնեց, մեր պատվիրակության անդամները որոշակի շփումներ են ունեցել Թուրքիայի ներկայացուցիչների հետ: Պաշտոնական հաղորդագրության մեջ այդ մասին ոչինչ բնականաբար նշված չէր: Նրանում միայն խոսվում է Փաշինյանի և Ղարիբաշվիլու «ոչ ֆորմալ» հանդիպման մասին:

Ինչևէ, կարևորն այն է, որ Փաշինյանն իսկապես հանդիպման առաջարկ է արել Էրդողանին, որ Հայաստանի և Թուրքիայի իշխանությունները միմյանց անընդհատ դրական ազդակներ են հղում, և այդ գործընթացում Վրաստանը ստանձնել է միջնորդի դեր: Այս վերջին հանգամանքն ավելի քան հետաքրքրական է, որովհետև ակնհայտ է, որ Վրաստանը չունի տարածաշրջանային զարգացումներում լուրջ դերակատարում ստանձնելու, առավել ևս տարբեր գործընթացներում ներգրավված կողմերին երաշխիքներ տրամադրելու ներուժ: Իսկ Թուրքիայի հետ հարաբերություններում հայկական կողմին նման երաշխիքներ այն էլ որքան են հարկավոր…

Ընդհանրապես, խոսելով հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում Վրաստանի «միջնորդական առաքելության» մասին, բացի վերը հիշատակված խնդրից, պետք է ուշադրություն դարձնել ևս երկու կարևոր հանգամանքների վրա: Նախ՝ հայտնի փաստ է, որ մեր տարածաշրջանում Վրաստանը լրջագույն խնդիրներ ունի Արցախի և Հայաստանի անվտանգային կարևոր գործընկեր, իսկ վերջին ամիսներին նաև հիմնական երաշխավոր Ռուսաստանի Դաշնության հետ: Ակներև է, որ Մոսկվան խանդով է ընդունում հայ-վրացական հարաբերություններում ձեռք բերված ցանկացած նշանակալից պայմանավորվածություն: Ի դեպ, նույնը և Թբիլիսին, երբ խոսքը վերաբերում է հայ-

ռուսական համագործակցության խորացմանը: Եվ եթե հանկարծ պարզվի, որ Էրդողանին Ղարիբաշվիլու միջնորդությամբ հանդիպման հրավեր հղելու Փաշինյանի նախաձեռնությունը նախապես համաձայնեցված չի եղել Ռուսաստանի հետ, ապա վստահ կարելի է պնդել, որ հայկական կողմի համար դա անհետևանք չի մնա:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ նույն Թուրքիան ու Ադրբեջանը չափազանց մեծ ազդեցություն ունեն Վրաստանի արտաքին քաղաքականության վրա: Ավելին՝ հենց Անկարան ու Բաքուն են ամեն ինչ անում, որպեսզի Վրաստանը հանդես գա որպես Հայաստանի հետ երկխոսության միջնորդ: Դրան էր միտված, օրինակ, Ղարիբաշվիլու միջնորդությամբ 15 հայ ռազմագերիներին ազատ արձակելու և Հայաստան ուղարկելու Ալիևի որոշումը: Նույն խնդրի մասին է Նյու Յորքում վերջերս կայացած հանդիպման ընթացքում Էրդողանը խոսել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ: Վերջինս հենց այնտեղ՝ Էրդողանի ներկայությամբ, բաց տեքստով հայտարարել է, որ Վրաստանը ցանկանում է խաղաղապահ դառնալ Հարավային Կովկասում:

Թե ինչու են Թուրքիան և Ադրբեջանը ցանկանում Վրաստանին ներգրավել Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու գործում, կարծում եմ՝ հասկանալի է: Այդ կերպ թյուրքական պետությունների դաշինքը փորձում է նախ աստիճանաբար նվազեցնել Ռուսաստանի դերակատարումը տարածաշրջանային խնդիրների քննարկման գործում, ապա և ընդհանրապես այդ հարցերում Ռուսաստանը փոխարինել իր կողմից վերահսկվող Վրաստանով: Սա, իհարկե, երկարաժամկետ քաղաքականություն է, բայց Թուրքիան չի շտապում: Պաշտոնական Անկարային այս պահին մեկ բան է պետք՝ ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական զարգացումներում՝ սպասելով հետագայում տարածաշրջանն ամբողջությամբ իր ազդեցության տակ վերցնելու հնարավորություններին:

Մեծ հաշվով, դրան է ուղղված նաև Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու Էրդողանի իշխանության ցանկությունը: Թուրքիայում լավ են հասկանում, որ ընդամենը երեք տարի առաջ նրանք երազել անգամ չէին կարող այն մասին, ինչն այսօր իրականություն է դարձել: Խոսքն առաջին հերթին արցախյան հակամարտության մեջ Թուրքիայի ներգրավվածության մասին է: Դա է այն բանալին, որը թույլ կտա Անկարային հետագայում ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում և վերջապես լոկալ բնույթի տերությունից վերածվել աշխարհաքաղաքական հզոր և շատ ազդեցիկ կենտրոնի: Բայց ոչ միայն դա: Երբ գործը հասնում է Հայաստանին, Թուրքիայի առջև խնդիրների մեծ շարան է միանգամից ի հայտ գալիս: Դա և՛ Հայոց ցեղասպանության խնդիրն է, և՛ Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Գերմանիայի հետ հարաբերությունները, և՛ Ռուսաստանի ռազմական ներկայությունն իր սահմանին, և՛ Արցախի խնդիրը, և՛

Իրակլի Ղարիբաշվիլու և Նիկոլ Փաշինյանի մամլո ասուլիսը

թյուրքական աշխարհի հետ կայուն ցամաքային կապ ունենալու հնարավորությունը և այլն, և այլն: Օգտվելով այն հանգամանքից, որ Հայաստանում տեղի է ունեցել, այսպես կոչված, «թավշյա հեղափոխություն», և մեր երկիրն այդ հեղափոխության հետևանքով հրաժարվել է իր իսկ կենսական շահերը պաշտպանելու գործից, Թուրքիայի իշխանությունները 2018 թվականի երկրորդ կեսից սկսեցին մեր տարածաշրջանում ձևավորված հավասարակշռությունը խաթարելուն և իրավիճակը փոխելուն ուղղված քայլեր ձեռնարկել: Ընդ որում, Անկարան իրեն բավարարված կզգար ցանկացած արդյունքի պարագայում, միայն թե ձևավորված ստատուս-քվոն փոխվեր, և ինքը Հարավային Կովկաս մուտք գործելու հնարավորություն ստանար: Իսկ այժմ իրավիճակն արդեն այնպիսին է, որ Թուրքիան այլևս չի բավարարվում Արցախի հարցում ոչ միայն քաղաքական, այլև նույնիսկ ռազմական ներկայությամբ: Այլ խոսքով՝ Անկարան ձգտում է օգտվել պահի ընձեռած հնարավորություններից և հնարավորինս շատ խնդիրներ լուծել:

Փորձենք հասկանալ, թե որոնք են այս պահին Թուրքիայի ամենից արդիական խնդիրները: Սկսենք թերևս Ադրբեջանի հաղթանակը միջազգային պայմանագրերով ամրագրելու՝ թուրք-ադրբեջանական դաշինքի համար առաջնային և կարևոր գործից: Թե՛ Բաքվում և թե՛ Անկարայում հասկանում են, որ ադրբեջանա-արցախյան հակամարտության լուծման այսպիսի տարբերակի շուրջ միջազգային կոնսենսուս չկա: Պատճառները շատ են: Նախ՝ հակամարտության արդարացի, երկարաժամկետ և, որ ամենակարևորն է, աշխարհաքաղաքական խաղացողների շահերը հաշվի առնող լուծման տարբերակները ենթադրում էին որոշակի հավասարակշռության պահպանում: Այո՛, Միացյալ Նահանգները, Եվրոպան՝ ի դեմս Ֆրանսիայի, և Ռուսաստանը մշտապես խոսել են Արցախի ազատագրված շրջանների մի մասը Ադրբեջանին հանձնելու անհրաժեշտության մասին: Բայց առնվազն նախկին ԼՂԻՄ տարածքի ու Քաշաթաղի շրջանի հիմնական հատվածի հայապատկան լինելու մասին կոնսենսուս նշված աշխարհաքաղաքական կենտրոնների միջև կար ու շարունակում է գոյություն ունենալ: Այդ ամենը փաթեթավորված էր տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման իրավունքի և ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու հայտնի սկզբունքներով: 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում թուրք-ադրբեջանական

դաշինքը, կասկածի տակ դնելով բոլոր հիշատակված երկրների միջազգային հեղինակությունը, անտեսելով նրանց աշխարհաքաղաքական շահերը, որոշել էր արցախյան խնդիրը լուծել ուժի միջոցով: Սա մի քայլ էր, որի պատասխանը Թուրքիան և Ադրբեջանը դեռ պետք է տան: Բայց թյուրքական երկու երկրներին մինչ այս պահն այդ հանգամանքը այնքան էլ չի անհանգստացնում: Նրանք փորձում են հաջորդ քայլն էլ անել և հասնել նրան, որ Ռուսաստանը, ԱՄՆ-ն ու Եվրոպան հրաժարվեն Արցախի հարցով նախկինում ձեռք բերված ներքին պայմանավորվածություններից, աչք փակեն ուժ կիրառելու փաստի վրա (չնայած երեք աշխարհաքաղաքական կենտրոնները միշտ նշել են իրենց համար այդ սցենարի անընդունելի լինելը) և մոռանան ազգերի ինքնորոշման սկզբունքի մասին: Ահա այս խնդիրները լուծելու համար է Ադրբեջանին և Թուրքիային անհրաժեշտ, այսպես կոչված, «խաղաղության պայմանագիր» Հայաստանի հետ:

Երկրորդ խնդիրը, որն այսօր ծառացել է Թուրքիայի արտաքին քաղաքականության առջև, Ադրբեջանում թուրքական ազդեցությունը լիարժեք ու երկարաժամկետ դարձնելն է: Անկարան գիտի, որ թուրքական ռազմական պոտենցիալն Ադրբեջանին անհրաժեշտ էր Արցախում իր խնդիրները լուծելու համար: Այդ նպատակին հասնելու մղումով Իլհամ Ալիևը չափազանց մեծ զիջումներ է արել Թուրքիայի իշխանություններին՝ մինչև իսկ նրանց հանձնելով սեփական բանակի կառավարումը: Հիմա, երբ Ալիևն արդեն ունի այդ հաղթանակը, հետևաբար նաև սեփական իշխանությունը ևս մի քանի տարի (եթե չասենք՝ տասնամյակներ) երկարացնելու հնարավորություն, նա արդեն որպես իր մրցակից հենց Թուրքիային է սկսում ընկալել: Եվ որպեսզի Ադրբեջանի նախագահը չկարողանա փախչել թուրքական կարթից, Էրդողանի կառավարությունն ամեն ինչ անելու է, որպեսզի Ադրբեջանն էլ ավելի մեծ կախվածության մեջ հայտնվի թուրքական տնտեսությունից, քաղաքականությունից, ռազմական ներուժից և այլն: Իսկ դրա համար Թուրքիային Ադրբեջանի հետ կոմունիկացիաներ են պետք: Ըստ թուրք գործիչների՝ Ադրբեջանն այլևս այդքան հեռու և առանձնացված չպետք է լինի Թուրքիայից: Այդ իսկ պատճառով նրանք ամեն ինչ անում են Հայաստանի տարածքով դեպի Ադրբեջան տանող ճանապարհների և այլ ենթակառուցվածքների արագ գործարկման համար՝ հընթացս էլ, իհարկե, տնտեսական էքսպանսիա պլանավորելով արդեն մեր երկրի դեմ:

Երրորդ՝ Հարավային Կովկաս ազատ ելումուտ անելու համար Թուրքիային պետք է օր առաջ ձերբազատվել Հայոց ցեղասպանության խնդրից և ընդհանրապես Հայկական հարցից, որոնք տասնամյակներ շարունակ Թուրքիայում ընկալվել են որպես տարբեր տարածաշրջաններում, բայց առավելապես Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում, իրենց հնարավորությունները սահմանափակող գործոն: Այս խնդրի առնչությամբ ցավով պետք է նշել, որ Հայկական հարցի կարևորությունը Անկարայում տարիներ շարունակ ավելի լավ են հասկացել, քան Երևանում: Որքան էլ տարօրինակ հնչի, այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ Հայկական հարցը Թուրքիային զսպելու գործիք է ոչ թե Հայաստանի, այլ ԱՄՆ-ի, եվրոպական երկրների, Ռուսաստանի, Իրանի, նույնիսկ Իսրայելի և այլոց ձեռքին: Եվ այսօր ահա Թուրքիայի իշխանություններն այդ զսպաշապիկից ազատվելու հնարավորություն են տեսել ու փորձում են ամեն ինչ անել, որ հաջողեն այդ գործում:

Հիշատակված երեք մեծ խնդիրների լուծումը Թուրքիային հնարավորություն է տալու շատ հեշտ լուծելու իրեն հուզող ամենամեծ խնդիրը՝ Ռուսաստանի ռազմական ներկայությունը մեր տարածաշրջանում և համաշխարհային ու տարածաշրջանային այլ գերտերությունների հնարավորությունների սահմանափակումը Հարավային Կովկասում: Սա է ժամանակակից Թուրքիայի գերխնդիրը, որի լուծումը պաշտոնական Անկարան այսօր շատ իրատեսական է համարում: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանը միակ երկիրը չէ, որը մեր տարածաշրջանում իր կենսական շահերը փոխարինում է այլ առաջնահերթություններով՝ մեծ բիզնես, իշխող էլիտաների անձնական շահ և այլն: Նման վարքագիծ հաճախ նաև Ռուսաստանն է դրսևորում և նույնիսկ Միացյալ Նահանգները: Եվ սա թույլ է տվել Էրդողանի իշխանությանը մի շարք ձեռքբերումներ ունենալ Հարավային Կովկասում ու նաև գործուն քայլեր անել վերոնշյալ աշխարհաքաղաքական հարցերն ի շահ Թուրքիայի լուծելու ուղղությամբ: Սա մի գործընթաց է, որը, ցավոք, դեռևս շարունակվում է:

Այս ամենի լույսի ներքո Հայաստանի վարչապետի՝ Էրդողանի հետ սեպարատ բանակցություններ սկսելու ցանկությունն առավել քան տարակուսելի է: Ի՞նչ խնդիր է փորձում լուծել ՀՀ կառավարության ղեկավարը և ինչպե՞ս է պատրաստվում Թուրքիայի հետ հարաբերություններ կառուցելու գործընթացում պաշտպանել Հայաստանի շահը: Այս հարցերի պատասխանները դեռևս չկան: Վարչապետ Փաշինյանը միայն խոսում է, այսպես կոչված, խաղաղության օրակարգի մասին, որի բաղադրիչները նույնպես հայտնի չեն: Եթե մեր իշխանությունների միտքն այն է, որ հայության կենսական շահերի շարունակական զիջումներով հնարավոր կլինի հագեցնել Թուրքիայի և Ադրբեջանի ախորժակը, ապա նրանք չարաչար սխալվում են: Այդպես Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը միայն գրգռում են այդ ախորժակը և նպաստում թուրք-ադրբեջանական աշխարհաքաղաքական օրակարգի կյանքի կոչվելուն: Հայաստանն ու Արցախը այդ գործընթացում որևէ օգուտ չունեն և բնականաբար չեն կարող ունենալ: Բայց սա, նկատի ունեմ «տարածաշրջանում խաղաղ դարաշրջան բացելու» Փաշինյանի հռչակած մարտավարությունը, քննարկման առանձին թեմա է, որին անպայման կանդրադառնամ «Դրօշակ»-ի հաջորդ համարներում:

Իրանա-ադրբեջանական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները. նոր իրավիճակ, նոր հնարավորություններ

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո թեև իրանցի տարբեր պաշտոնյաների մակարդակով եղան Ադրբեջանին հասցեագրված շնորհավորանքներ, սակայն երկու երկրների հարաբերությունները վերջին շրջանում աննախադեպորեն լարվել են, ինչի հիմնական պատճառներից են.

- Այս տարվա հունիսին ԻԻՀ-ում տեղի ունեցած նախագահական ընտրությունները և դրանցում պահպանողականների և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) բարձր աջակցությունը վայելող Էբրահիմ Ռայիսիի հաղթանակը: Պատմությունը ցույց է տալիս, որ երբ Իրանում թուլանում են բարեփոխիչների դիրքերը, և իշխանության են գալիս պահպանողականներն ու ԻՀՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները, Իրան-Ադրբեջան հարաբերությունները սկսում են լարվել: Դրա խորքային պատճառներից մեկը պահպանողականների և ԻՀՊԿ ավելի կոշտ դիրքորոշումն է Իսրայելի և Իսրայելի հետ համագործակցող այն երկրների հանդեպ, որոնք հարևան են Իրանին: Կան, իհարկե, պատմական խորքեր ունեցող այլ հիմնարար գործոններ ևս (էթնիկական, կրոնական ևն), որոնք նույնպես ժամանակ առ ժամանակ ունենում են սուր դրսևորումներ Իրանում նշված շրջանակների՝ իշխանության լինելու տարիներին:

- Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ և դրանից հետո Ադրբեջանում Թուրքիայի ազդեցության աննախադեպ աճը, որի հետ այս տարածաշրջանի տարբեր կետերում համառ մրցակցության մեջ է Իրանի Իսլամական Հանրապետությունը: Բացի այդ՝ պատերազմից հետո Թուրքիան Այսրկովկասում ունի արդեն նաև ռազմական ներկայություն՝ ի դեմս Ադրբեջանում գործող Թուրքական հրամանատարության ծառայողական խմբի (ԹՀԾԽ), որի հրամանատար է նշանակվել ԹՀ ցամաքային զորքերի՝ գործողությունների գծով պետ, գեներալ-մայոր Բախթիյար Էրսայը, շտաբի պետ, գեներալ Էնդեր Գյուները: Թուրքական հրամանատարության ծառայողական խմբի ենթակայության տակ է գործում նաև արցախյան վերջին պատերազմից հետո ՌԴ զինծառայողների հետ Ակնայի (նախկինում՝ Ադդամ) համատեղ մոնիթորինգային կենտրոնում ծառայություն իրականացնող թուրքական անձնակազմը՝ գեներալ Աբդուլլա Գաթրջիի հրամանատարությամբ: Այսրկովկասում Թուրքիայի նման ներկայությունը լրջագույն մարտահրավեր է Իրանի համար, որը 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո արդեն մոտավորապես 200 տարի հաշտ է եղել Այսրկովկասը

ռուսական վերահսկողության տակ տեսնելու իրողության հետ: Այժմ այլ է իրերի դրությունը, և եթե ՌԴ-ն Այսրկովկասում հաստատվելու և ռազմական ներկայություն ունենալու իրավունք է տալիս Թուրքիային, բնականաբար, ըստ նոր իրողության, փոխվելու են և արդեն իսկ փոխվում են նաև Իրանի դիրքորոշումն ու գործողությունների տրամաբանությունը:

- Արցախից բռնազավթված և Իրանին սահմանակից տարածքներում տնտեսական գործունեությամբ քողարկված Իսրայելի ակտիվ ներկայությունը, Կովսականում և հարակից շրջաններում գոմշաբուծարանների կառուցումը և այլն, ինչը, թվում է, խիստ անհանգստացնող և անընդունելի է Իրանի համար:

Գորիս-Կապան մայրուղու Որոտանի հատվածում տեղի ունեցող իրադարձությունները և Իրան-Ադրբեջան հարաբերությունների սրումը

Սեպտեմբերի 12-ին ՀՀ ԱԱԾ-ն տարածեց մի հաղորդագրություն, որում մասնավորապես նշված էր. «….Սույն թվականի սեպտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ից, Գորիս-Կապան միջպետական ճանապարհի Որոտան բնակավայրի մոտ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Էյվազլի բնակավայրի հատվածում Ադրբեջանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվում է իրանական պետհամարանիշներով բեռնատարների վարորդների ու բեռի փաստաթղթերի ստուգում»: Ադրբեջանը փաստացիորեն, ոստիկանական և մաքսային անցակետեր տեղադրելով ՀՀ-ն ԻԻՀ-ի հետ կապող միջպետական ճանապարհահատվածում, նախ սկսեց իրանական պետհամարանիշներով բեռնատարների վարորդների ու բեռների փաստաթղթերի

ստուգում, ապա՝ «մաքսատուրքերի» գանձում և, չբավարարվելով այդքանով, ձերբակալեց նաև մի քանի իրանցի վարորդների, որոնց փաստաթղթերում որպես տեղափոխվող բեռների բեռնաթափման վայր նշված էր «Ստեփանակերտ, Հայաստան»:

Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, Ադրբեջանի կողմից ոչ միայն ՀՀ-ԻԻՀ միջպետական ճանապարհի փակումը, այլ նաև իրանցի վարորդների ձերբակալությունը, ըստ էության, տեղի չէին ունեցել ԱՀ ինքնուրույն որոշմամբ և ամենայն հավանականությամբ արդյունք էին թուրքական նախաձեռնության ու Թուրքիայից իջեցված հրամանի:

Իրանից հնչած հայտարարությունները, այդ թվում և՝ ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Ս. Խաթիբզադեի կոչը ադրբեջանական կողմին՝ ազատ արձակելու իրանցի վարորդներին, որևէ դրական արդյունք չտվեցին: Անարդյունք մնացին նաև Ադրբեջանում Իրանի դեսպանի երկու հանդիպումները Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքական հարցերի բաժնի ղեկավար Հիքմաթ Հաջիևի, ապա և մեկ հանդիպումը փոխվարչապետ Շահին Մուսթաֆաևի հետ, որից հետո պարզ դարձավ, որ խնդրի լուծման հարցում Ադրբեջանը ինքնուրույն որոշում կայացնելու լիազորություն չունի, և ինչպես արցախյան վերջին պատերազմի ժամանակ, այնպես էլ այժմ անհրաժեշտ է լեզու գտնել Անկարայի հետ:

Ահա այդ ամենից հետո Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում սեպտեմբերի 22-ին հանդիպեցին արդեն Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մևլյութ Չավուշօղլուն և Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլահյանը, և հանդիպումից հետո տարածվեց հաղորդագրություն, համաձայն որի՝ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Թեհրանում կազմակերպելու Իրանի, Ադրբեջանի և Թուրքիայի

ԻԻՀ Բանակի ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Քիոմարս Հեյդարի

արտաքին գործերի նախարարների հանդիպում:

Իրանի ընտրությունը. լուծո՞ւմ Թուրքիայի միջնորդությամբ, թե՞ այսրկովկասյան քաղաքականության վերանայում

Ստեղծված իրավիճակում, թվում է, Իրանն ունի երկու ճանապարհ, որոնցից մեկը Թուրքիայի մասնակցությամբ խնդրի քննարկումն ու լուծումն է և դրանով հաստատումը նախագահ Էրդողանի՝ օգոստոսի 30-ին՝ «Բայրաքթար Էկինջի» նոր ԱԹՍ-ների փորձարկման ժամանակ կատարած այն հայտարարության, որ այդուհետ այս տարածաշրջանում որևէ մեկը չի կարող անգամ մի քար տեղաշարժել առանց Թուրքիայի թույլտվության, իսկ մյուսը՝ արմատապես վերանայել իր այսրկովկասյան քաղաքականությունը, դիմել բացահայտ կոշտ քայլերի և զուգահեռաբար, օգտագործելով ստեղծված իրավիճակը որպես հնարավորություն, բաց տեքստով ձևակերպել իր դիրքորոշումը ՀՀ տարածքային ամբողջականության հանդեպ թուրք-ադրբեջանական նկրտումների և ՀՀ տարածքով Ադրբեջանի ու Թուրքիայի միջև «միջանցքային կապ» ստեղծելու հարցի շուրջ:

Ձևական առումով պահպանելով Թուրքիայի միջնորդությամբ խնդիրը լուծելու հնարավորությունը և ԱԳ նախարարների մակարդակով համաձայնելով Թեհրանում հարցը քննարկել Թուրքիայի հետ՝ Իրանն այնուամենայնիվ գնում է երկրորդ ճանապարհով ու ընտրում կոշտ դիրքորոշման և Ադրբեջանի դեմ աննախադեպ ճնշումներ գործադրելու քաղաքականությունը՝ առայժմ հետևյալ ուղղություններով՝

- մեծ ծավալի ռազմական տեխնիկայի և սպառազինության փոխադրում դեպի ադրբեջանական սահման և աննախադեպ լայնամասշտաբ գործողությունների իրականացում,
- բարձրաստիճան հոգևորականների, զինվորականների, այդ թվում և՝ ԻՀՊԿ

հրամանատարության, քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաների, փորձագետների և ազգայնական շրջանակների միջոցով քաղաքական կոշտ ուղերձների հղում ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարությանը, սուր հակաադրբեջանական և հակաթուրքական քարոզի լայնամասշտաբ ծավալում,

- Ադրբեջանում իրանական փափուկ ուժի տարբեր բաղադրիչների, այդ թվում՝ կրոնական և էթնիկական, բացահայտ ցուցադրում և Ադրբեջանի համար ներքին անվտանգային սպառնալիքներ պարունակող խնդիրների՝ հանրային օրակարգ ներմուծում,
- Ադրբեջանում իսրայելական ներկայության անթույլատրելի համարում և խիստ քննադատություն, այդ երկրի շիա հավատացյալների շրջանում սուր հակաիսրայելական քարոզչության ծավալում,
- Հայաստանի տարածաշրջանային դերի բարձրացմանը միտված հայտարարությունների տարածում և ռազմական գործիչների միջոցով ՀՀ-ի հետ ռազմական համագործակցության հնարավորությունների մասին բարձրաձայնում,
- «Զանգեզուրի միջանցք» կոչվող թուրք-ադրբեջանական ռազմավարական ծրագրի վերաբերյալ Իրանի բացասական դիրքորոշման հստակ ձևակերպում:

Այս ընթացքում Իրանի կողմից արված և վերոնշյալ կետերին անդրադարձ պարունակող հայտարարությունների մեջ հետաքրքիր են հատկապես հետևյալները.

Արտաշիր Մոթահարի *(ԻԻՀ խորհրդարանի պատգամավոր).*

«Թուրքիան, փարված Օսմանյան կայսրության վերականգնման ցնորքով, զբաղված է արկածախնդրությամբ և կրակի հետ խաղալով: Այս միջոցին Ադրբեջանն այդ փտած պարանով իրեն նետում է գեհենական անդունդի նմանող մեծ փորձության մեջ: Եթե մեր հյուսիսային հարևանը ցանկանում է դուրս գալ բարեկամական հարաբերությունների ծիրից, ապա պիտի իմանա, որ իր մայրաքաղաքի հեռավորությունը հենց Իրանի սահմանագլխից հասանելի է իրանական զինուժի հրետանու համար»:

Ալի Մոթահարի *(ԻԻՀ խորհրդարանի նախկին պատգամավոր).*

«Իրանը պետք է ամեն գնով դիմադրի Ադրբեջանի Հանրապետության, Թուրքիայի և Իսրայելի՝ «Զանգեզուրի միջանցք» ստեղծելու դավադրության համատեղ ծրագրին, որը կվերացնի հայ-իրանական սահմանը և կփակի Իրանի ճանապարհներից մեկը դեպի Եվրոպա: Մայր Իրանին դավաճանելու փոխարեն՝ Ադրբեջանի Հանրապետությունը պետք է վերադառնա իր մոր մոտ, հակառակ դեպքում նա կստանա նույն դասը, ինչ Սադամը»:

Դիաքո Հոսեյնի *(Իրանի ռազմավարական հարցերի ավագ փորձագետ).*

«Զորավարժությունները անհրաժեշտ են, բայց ոչ բավարար: Եթե Ադրբեջանի Հանրապետության և Իսրայելի վարչակարգի ապակառուցողական համագործակցությունը շարունակվի, և Իրանի մյուս կենսական շահերն անտեսվեն, ապա Հայաստանի հետ անվտանգության համաձայնագրի կնքումը, ներառյալ ռազմական ուսուցման, հրթիռներով ու անօդաչու թռչող սարքերով վերազինման և Սյունիքի մարզում ռազմական ներկայության հարցի քննարկումը, խաղաղություն ապահովելու համար, չպիտի անտեսվի»:

Քիոմարս Հեյդարի *(ԻԻՀ բանակի ցամաքային զորքերի հրամանատար, բրիգադային գեներալ).*

«Իրանը բավականին զգայուն է տարածաշրջանի երկրների պետական սահմանների փոփոխությունների նկատմամբ, և Իրանի համար դա ընդունելի չէ: Մեկ երկրի հնարավոր թուլությունը իր սահմանների պաշտպանության հարցում չի արդարացնում մեկ այլ երկրի կողմից նրա սահմանների խախտումը՝ արտաքին ուժերի օգնությամբ: Իրանը դա թույլ չի տա»:

Մոհամմադ-Ռեզա Ահմադի *(ԻԻՀ խորհրդարանի պատգամավոր).*

«Թվում է՝ Բաքվի ղեկավարությունը Թուրքիայի դոպինգով ձեռք բերած հաղթանակներից թմրել և պատրանքների մեջ է ընկել: Ձեր փոքր երկրի հնությունը մեր խորհրդարանի ամենաերիտասարդ պատգամավորի տարիքից էլ քիչ է, այնպես որ Սիմորղի (Իրանը խորհրդանշող առասպելական

Իրանի Նախագահ Իբրահիմ Ռաիսի, ԱՀ նախագահ Ալիև

թոչուն) դաշտում իզուր մի խայտառակվեք»:

Այս հայտարարություններին զուգահեռ՝ իրանական մեդիա տիրույթում տարածվեցին փորձագիտական հրապարակումներ այն մասին, որ իրանական կողմը ստացել է տեղեկություններ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ՀՀ-ի դեմ հարավային ուղղությամբ պատրաստվող հանկարծակի հարձակման, հայ-իրանական սահմանը կտրելու և այդ կերպ Ադրբեջանի, Նախիջևանի և Թուրքիայի միջև ցամաքային կապ ապահովելու մասին: Եվ թերևս հենց այդ հանգամանքով է պայմանավորված եղել ԻԻՀ-ի կողմից զորքերի ու սպառազինության կուտակումը ոչ միայն ԱՀ սահմանների թալիշաբնակ գոտու, այլև Նախիջևանի ողջ երկայնքով:

Ի՞նչ սպասել. հնարավոր զարգացումներ, ռիսկեր և հնարավորություններ

Ստեղծված իրավիճակը կարող է ունենալ զարգացման մի քանի սցենարներ, որոնք պարունակում են հայկական կողմի համար ինչպես ռիսկեր, այնպես էլ նոր հնարավորություններ:

Թուրքիայի և Իսրայելի հովանավորությամբ ՀՀ տարածքում Իրանի դեմ Ադրբեջանի բացահայտ թշնամական գործողությունները և իրանա-ադրբեջանական հարաբերություններում լարվածության պահպանումը կարող են նոր խթան հանդիսանալ հայ-իրանական հարաբերությունների խորացման և զարգացման, նոր, այդ թվում՝ ռազմական և անվտանգային ոլորտներում փոխգործակցության հաստատման և խորացման համար: Հայկական կողմի ակտիվության և նախաձեռնողականության դեպքում կա հնարավորություն՝ օգտագործելով երկկողմ ռազմավարական ընդհանուր շահերի հանգամանքը, մասնավորապես կողմերի համար հայ-իրանական սահմանի կարևորությունը հնարավոր մեգատնտեսական ծրագրերի իրականացման հարցում, ներգրավելու Իրանին հետպատերազմական Հայաստանի փլուզված անվտանգային համակարգի վերականգնման, նորոգման և ամրացման գործում՝ միաժամանակ որոշակիորեն բալանսավորելով ՌԴ անհամեմատ մեծացած ազդեցությունը ՀՀ-ում:

Բացառված չէ, որ ԱՀ-ԻԻՀ և ԻԻՀ-ԹՀ հարաբերությունների սրման և առճակատման վտանգի պայմաններում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ժամանակավորապես որդեգրվի ՀՀ-ի դեմ մեղմ քաղաքականություն, տեղի ունենա կոշտ հռետորաբանության մեղմացում, բառերի ու արտահայտությունների ավելի զգույշ ընտրություն, նաև արվեն հայկական կողմի համար համեմատաբար տանելի պայմաններով համագործակցության և խնդիրների լուծման առաջարկներ, որոնց իրական նպատակը լինելու է անվտանգային և պաշտպանական ոլորտներում ՀՀ-ԻԻՀ հնարավոր համագործակցության խաթարումը, Այսրկովկասում իրանական դերակատարության բարձրացման բացառումը: Հայկական կողմը պետք է ճիշտ գնահատի բացվող հեռանկարներն ու մարտահրավերները, զատի կարճաժամկետ հնարավորությունը երկարաժամկետից և կարողանա օգտագործել սեփական նոր ու բալանսավորված անվտանգային համակարգի ձևավորման հնարավորությունը, ինչը կարող է լավագույն ձեռքբերումը լինել հետպատերազմական Հայաստանի համար:

Թուրք-ադրբեջանական շարունակական զորավարժությունները Ադրբեջանում և Իրանի արձագանքը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Հարավկովկասյան տարածաշրջանում այսօր տեղի ունեցող իրադարձությունները լրջորեն մտահոգել են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային ուժերին: Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասը սահմանափակված է անվտանգության հավաքական պայմանագրերով և Արցախի շուրջ երկարատև հակամարտությամբ, ուստի տարածաշրջանային զարգացումների դինամիկան աստիճանաբար փոխվում է: 2020 թ. Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով փոխվեցին արցախյան հակամարտության բնույթը և տարածաշրջանային ուժերի դասավորությունը: Արդեն 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո թվում է, որ տարածաշրջանը վերածվել է զորավարժությունների թատերաբեմի: Որպես հետևանք արցախյան վերջին պատերազմի՝ Թուրքիան կարծես թե պաշտոնապես մուտք է գործել Հարավային Կովկաս և աստիճանաբար մեծացնում է իր ռազմական ու անվտանգային ներկայությունը, հատկապես Ադրբեջանի Հանրապետության տարածքում: Ասվածի համատեքստում ուշադրության են արժանի Ադրբեջանի Հանրապետության տարածքում անցկացվող Թուրքիայի, Ադրբեջանի և Պակիստանի զինված ուժերի համատեղ զորավարժությունները, որոնք հավասարապես վտանգ են ներկայացնում թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ Իրանի Իսլամական Հանրապետության և թե՛ ողջ տարածաշրջանի համար:

Արցախյան վերջին պատերազմը և Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող լայնածավալ օգնությունը՝ քաղաքական աջակցությունից մինչև զենքի մատակարարումը, ռազմական գործողությունների ղեկավարման համար թուրք բարձրաստիճան գեներալների գործուղումը, զինյալների ներգրավումը Սիրիայի հյուսիսային շրջաններից և պատերազմի ընթացքում թուրքական կործանիչների տեղակայումը Ադրբեջանում, նախանշեցին Թեհրանի համար չափազանց անընդունելի իրավիճակի ձևավորումը: Չնայած Իրանն ու Թուրքիան փորձում են խուսափել ուղղակի հակամարտությունից և անգամ երկկողմ համագործակցության առանցքներ ունեն, սակայն այս երկու պետությունների շահերը տարածաշրջանում բախման մշտական սպառնալիքի տակ են:

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի Հանրապետության տարածքում մեկնարկած առաջին զորավարժությունները կրում էին «Երեք եղբայր - 2021» անվանումը, որին մասնակցում էին Թուրքիայից և Պակիստանից ժամանած հատուկջոկատայինները: Ինչպես նշվում էր Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական

հաղորդագրության մեջ, զորավարժությունների խնդիրն էր «առավել ամրապնդել երեք երկրների բանակների միջև գոյություն ունեցող կապերը և օգնել նրանց տարածաշրջանում ահաբեկչության դեմ պայքարի նոր ուղիներ գտնելու»[1]:

Զորավարժությունների բացման արարողության ժամանակ ԱՀ հատուկ նշանակության ջոկատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հիքմեթ Միր-զոևը հայտարարել է, որ Ադրբեջանը, Թուրքիան և Պակիստանը անհիշելի ժամանակներից ոչ միայն բարեկամական, այլև եղբայրական երկրներ են, և Թուրքիան ու Պակիստանը Արցախյան երկրորդ պատերազմում բազմակողմանի աջակցություն են ցույց տվել Ադրբեջանին[2]: Այսինքն՝ դրանով ադրբեջանական կողմը հայտարարում էր, որ, բացի Թուրքիայից և սիրիացի վարձկան ահաբեկիչներից, Պակիստանի զինվորականները ևս կռվել են Ադրբեջանի բանակի կազմում:

2021 թ. սեպտեմբերի 6-ին Ադրբեջանի և Թուրքիայի միջև կնքված ռազմական համագործակցության մասին պայմանագրի համաձայն՝ Քաշաթաղի (Լաչին) շրջանում սկսվեցին համատեղ նոր զորավարժություններ: Ընդ որում, զորավարժություններն անցկացվում էին ռուս խաղաղապահների գտնվելու վայրից բառացիորեն մի քանի քայլի վրա՝ Բաքվի և Մոսկվայի միջև լարվածության աճի ֆոնին: Համաձայն պաշտոնական տեղեկատվության՝ զորավարժությունների հիմնական նպատակը մարտական գործողությունների ընթացքում փոխգործակցության և մարտական համակարգման կատարելագործումն էր, ներառյալ հրամանատարների հմտությունների զարգացումը ռազմական որոշումներ կայացնելու և ստորաբաժանումների կառավարման գործում[3]: Հատուկ ուշադրություն է դարձվել բարդ տեղանքներում ժամանակակից ռազմական տեխնիկայի և ռազմական այլ միավորների

օգտագործման հմտությունների կատարելագործմանը:

Այստեղ, սակայն, պետք է ուշադրություն դարձնել զորավարժությունների քաղաքական ազդակների վրա: Նախ, փաստորեն, առաջին անգամ էր, որ թուրքական զորքերը տեղակայվում էին այն տարածքներում, որոնք Ադրբեջանը բռնազավթել էր Արցախի Հանրապետությունից: Բացի այդ՝ զորավարժությունները տեղի են ունեցել ռուս խաղաղապահների գտնվելու վայրի անմիջական հարևանությամբ՝ Լաչինի միջանցքի հայտնի ճանապարհից 300 մետր հեռավորության վրա, որը Հայաստանը կապում է Արցախի Հանրապետության հետ և ներկայումս վերահսկվում է ռուս խաղաղապահների կողմից:

Արդեն 2021 թ. սեպտեմբերի 7-ին Կասպից ծովի ափին և ջրային տարածքներում անցկացվել են ստորջրյա հարձակման և պաշտպանական խմբերի ադրբեջանա-թուրքական հերթական համատեղ զորավարժությունները: Ադրբեջանի ՊՆ մամուլի ծառայության պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ ռազմածովային ուժերի հատուկ ստորաբաժանումները թուրք զինվորականների հետ միասին ավարտել են մարտական պատրաստության առաջադրանքները գործողությունների պլանավորման համար՝ չեզոքացնելով պայմանական հակառակորդի դիվերսիոն ու ահաբեկչական խմբերը և ոչնչացնելով նրա ժամանակավոր հենակետը[4]:

Հատկանշական է, որ սեպտեմբերի առաջին տասնօրյակում Կասպից ծովում՝ Բաքվի առափնյա ջրերում անցկացված թուրք-ադրբեջանական հերթական զորավարժություններն արժանացան Իրանի բավական կոշտ արձագանքին: Ըստ Իրանի ԱԳՆ խոսնակ Սաիդ Խաթիբզադեի՝ Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայում արձանագրված է ցանկացած պետության, բացառությամբ Ռուսաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Իրանի և Թուրքմենստանի, Կասպից ծովում ռազմական ներկայության անօրինական լինելը, ուստի թուրքական ռազմական ներկայությունն այդ տարածքում անընդունելի է, որի վերաբերյալ Իրանի ԱԳՆ համապատասխան վարչությունները իրականացնելու են հավելյալ հետազոտություն և հանդես են գալու նոր հայտարարությամբ[5]:

Իրանի ԱԳՆ խոսնակի հայտարարություններին հաջորդեց Իրանի Արդաբիլ քաղաքի ուրբաթօրյա աղոթապետ և Իրանի հոգևոր առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեիի ներկայացուցիչ Այաթոլլահ Սեյիդ Հասան Ամելիի հակաադրբեջանական հայտարարությունը: Վերջինը Ադրբեջանին խորհուրդ տվեց «չխաղալու առյուծի պոչի հետ» և կոչ արեց Հեղափոխության պահապանների կորպուսին իր ուժերի առնվազն կեսը ցույց տալ Բաքվին, այլ կերպ ասած՝ կոչ արեց ԻՀՊԿ-ին «ուժ կիրառելու հարևան պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի դեմ»:

Իրավիճակն առավել սրվեց, երբ ադրբեջանցի օրենսդիրները մի շարք կոշտ արտահայտություններով հանդես եկան Իրանի դեմ, որոնք անգամ սպառնալիքներ էին պարունակում Թեհրանի հասցեին: Մասնավորապես, ադրբեջանցի քաղաքական գործիչներից մեկը սպառնաց, որ Պակիստանի բանակը կներխուժի Թեհրան, եթե թշնամական քայլ կատարվի Բաքվի դեմ: Մեկ այլ պատգամավոր էլ սպառնաց «կտրել իրանական առյուծի պոչը»: Այս սպառնալիքներին, անշուշտ, հետևեցին Թեհրանի համարժեք պատասխանները, որոնցով Իրանը զգուշացնում էր Ադրբեջանին հնարավոր էսկալացիայի մասին: Իրանցի բազմաթիվ գործիչներ սոցիալական ցանցերում հանդես եկան ազգայնական և հակաադրբեջանական գրառումներով ու հայտարարություններով՝ «հայրական խորհուրդ» տալով Բաքվին չխաղալու մեծ պետության հետ: Մասնավորապես, Իրանի խորհրդարանի պատգամավոր և Ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության հանձնաժողովի առաջատար անդամ Ֆադա-Հոսեյն Մալեքին խորհուրդ է տվել Ադրբեջանին դադարեցնելու իր «կասկածելի քայլերը»: Նրա պնդմամբ՝ Իրանը ուշադիր հետևում է իրանա-ադրբեջանական սահմաններին տիրող իրադրությանը և «նախազգուշացնում է որոշ կասկածելի շարժումների մասին»: Ֆ. Մալեքին կոչ է արել Թուրքիային և Պակիստանին Ադրբեջանում իրենց քայլերը համաձայնեցնելու Իրանի հետ[6]: Իրանի խորհրդարանի՝ հատկապես հյուսիսային՝ Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանակից հատվածներից ընտրված բազմաթիվ պատգամավորներ նույնպես հանդես եկան ազգայնական և հակաադրբեջանական հայտարարություններով՝ քարոզչական հակամարտությունը հասցնելով լարվածության բավականին լուրջ մակարդակի՝ Բաքվին հստակ ուղերձներ հղելով, որ չպետք է հույս դնել Իրանի հյուսիսային նահանգներում բնակվող ատրպատականցիների շրջանում անջատողական շարժումներ հրահրելու վրա: Մասնավորապես, Իրանի խորհրդարանի՝ Ռաշտից ընտրված պատգամավոր Մոհամմադ Ռեզա Ահմադին թվիթերյան հետևյալ դիպուկ գրառումն է կատարել. «Թվում է՝ Բաքվի ղեկավարությունը Թուրքիայի դոպինգով ձեռք բերած հաղթանակներից թմրել և պատրանքների մեջ է ընկել: Ձեր փոքր երկրի հնությունը մեր խորհրդարանի ամենաերիտասարդ պատգամավորի տարիքից էլ քիչ է, այնպես որ Սիմորղի (Իրանը խորհրդանշող առասպելական թռչուն) դաշտում իզուր մի խայտառակվեք»[7]:

«Երեք եղբայր —2021» Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի համատեղ զորավարժությունները

Արդեն սեպտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Իրանի բանակը և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը զգալի ուժեր են տեղափոխում Ադրբեջանի հետ սահման, որտեղ մեծ զորավարժություններ են նախատեսված Արաքս գետի շրջանում: Զորավարժությունների ընթացքում օգտագործված տեխնիկան, հրապարակված տեսահոլովակները և սոցիալական ցանցերում ծավալված քննարկումները վկայում են, որ Իրանն իր հյուսիսային սահմաններին կուտակել է հիմնականում հարձակողական բնույթի տեխնիկա: Իրանական կողմը, օգտագործելով սեփական արտադրության հարվածային և հետախուզական ԱԹՍ-ներ, Բաքվին անուղղակիորեն հասկացրեց, որ պատրաստ է թուրքական ԱԹՍ-ների և Անկարայի միջամտությանը նույնպես համարժեք հակահարված տալու:

Հարկ է նշել, որ Թեհրանի և Բաքվի հարաբերություններին հավելյալ լարվածություն են հաղորդում Հայաստանի Սյունիքի մարզի «Մ-2» միջ-պետական ավտոճանապարհին (Իրան-Հայաստան) ադրբեջանցի ոստիկանների գործողությունները: Բանը հասավ նրան, որ հայկական Սյունիքի Գորիս-Կապան ճանապարհին, որի որոշ հատվածներ Արցախյան երկրորդ պատերազմից հետո անցել են Բաքվի վերահսկողության տակ, «ճանապարհային տուրքը» չվճարելու պատճառով ադրբեջանական կողմը բերման ենթարկեց իրանցի երկու վարորդի:

Ըստ էության, Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքները խարխլում են Իրանի դիրքերը Անդրկովկասում, հատկապես Սյունիքով Ադրբեջանի՝ Նախիջևան և Թուրքիա հնարավոր ելքի պարագայում: Սկզբունքորեն որոշակի հանգամանքներում Թեհրանը կարող էր բարձրացնել Նախիջևանի շրջափակման հարցը, որի գոյությունն ապահովված է իր տարածքով անցնող ճանապարհով: Առայժմ անհնար է ենթադրել իրադարձությունների նման վտանգավոր զարգացում, չնայած Նախիջևանում Ադրբեջանի և Թուրքիայի հերթական զորավարժություններին Իրանի արձագանքը որոշակի ցուցիչ է: Իհարկե, դիվանագիտությունն ու երկխոսությունը լավագույն լուծումն են, բայց ամեն ինչ տանում է նրան, որ իրանական շրջանակներում փոխվում է վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ: Իրանցի նախկին դիվանագետ և միջազգային հարաբերությունների մասնագետ Ֆերիյդուն Մաջլիսին կարծում է, որ շատ բան է սկսում կառուցվել այն իրողության գիտակցման վրա, որ «Ադրբեջանի Հանրապետությունը գնացել է այլ ճանապարհով՝ Իսրայելի հետ հարաբերությունների միջոցով սպառնալիք ստեղծելով Իրանի անվտանգության համար»[8]: Մյուս կողմից էլ ակնհայտ է, որ Բաքուն անձնատուր է եղել Անկարայի կովկասյան հավակնություններին:

Դիվանագիտական մակարդակում արդեն Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում հանդիպեց իր ադրբեջանցի և թուրք գործընկերների հետ, ըստ որի՝ կողմերը եռակողմ հանդիպման վերաբերյալ համաձայնության են եկել[9]: Իսկ Բաքվում Իրանի դեսպան Սեյեդ Աբաս Մուսավին, փորձելով մեղմել ստեղծված իրավիճակը և թեհրանյան բանակցություններից առաջ թուլացնել լարվածությունը, հայտարարեց, որ Իրան-Ադրբեջան հարաբերությունները մշտապես բարձր մակարդակի վրա են եղել[10]:

Չնայած իրանա - ադրբեջանական սահմանին զինված որևէ բախման հավանականությունը գրեթե զրոյական է, այնուամենայնիվ, իրանական զինված ուժերի այս աննախադեպ գործողությունները, դրանց հաջորդած հակաադրբեջանական քարոզչական հարձակումները և Իրանի կողմից Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ քաղաքականության փոփոխության վերաբերյալ ոչ պաշտոնական հայտարարությունները վկայում են, որ այս երկու պետությունների հարաբերություններում բավական շատ անհարթություններ կան, որոնք հիմնականում պայմանավորված են Թուրքիայի և Իսրայելի ռազմական գործոնով: Իրանի պահպանողական նոր կառավարությունը, որդեգրելով Իրանի տարածաշրջանային դերակատարության մեծացմանը միտված նոր քաղաքականություն, կարծես թե սկսում է իր ոչ ուղղակի պայքարը Անկարայի դեմ, ինչը ենթադրում է տարածաշրջանի ողջ երկայնքով իրանա-թուրքական շահերի բախում: Այս ամենի համատեքստում Թեհրանը նաև ձգտում է ուժեղացնելու իր համագործակցությունը Հայաստանի հետ, ինչի համար էլ, նույնիսկ Սյունիքում ստեղծված բարդ իրավիճակի պայմաններում, Իրանը մշտապես շեշտում է հայ-իրանական սահմանի կարևորությունը և Տաթևի հատվածով հայ-իրանական տարանցման ուղին հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերականգնելու անհրաժեշտությունը: ■

Հղումներ

1- Ипполитова А., Совместные военные учения «Три брата» начали Турция, Азербайджан и Пакистан, https://www.gazeta.ru/army/news/2021/09/15/16535048.shtml, 15.09.2021 (մուտք՝ 26.09.2021).
2- Տես Хикмет Мирзоев: С первого дня 44-дневной войны..., https://ru.axar.az/news/politika/586382.html, 12.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
3- Տես ВС Азербайджана и Турции на учениях в Лачине отработали задачи по обнаружению и уничтожению диверсионных групп, http://interfax.az/view/844510, 09.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
4- Տես Спецподразделения Азербайджана и Турции провели учения на Каспийском море, http://casp-geo.ru/spetspodrazdeleniya-azerbajdzhana-i-turtsii-proveli-ucheniya-na-kaspijskom-more/, 24.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
5- Տես МИД Ирана высказался об азербайджано-турецких учениях, https://vestikavkaza.ru/news/mid-irana-vyskazalsa-ob-azerbajdzhano-tureckih-uceniah.html, 13.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
6- Տես http://fna.ir/469a4, 24.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
7- https://twitter.com/dr_mr_ahmadi/status/1441021711403700230?s=20, 23.09.2021 (մուտք՝ 26.09.2021).
8- Тегеран меняет отношение к Баку, https://regnum.ru/news/polit/3380100.html, 24.09.2021 (մուտք՝ 26.09.2021).
9- Տես https://mfa.ir/portal/newsview/652810, 23.09.2021 (մուտք՝ 26.09.2021):
10- Տես https://azerbaijan.mfa.gov.ir/portal/NewsView/653246, 25.09.2021 (մուտք՝ 26.09.2021):

Քաղաքական բովանդակութեան վերադառնալու «Հայաստան» դաշինքի փորձը

Սյուզան Խարտալեան

Անդառնալիօրէն բևեռացուած է պատմութեան մեր այս դարաշրջանը թէ՛ համաշխարհային և թէ՛ տեղական կեանքին մէջ: Այս բևեռացումը յատկապէս մեր՝ հայ իրականութեան մէջ համատարած աւեր կը գործէ: Բևեռացում Հայաստանի մէջ, բևեռացում Սփիւռքի ամբողջ տարածքին, բևեռացում Հայաստանի և Սփիւռքի միջև կործանարար չափերու հասած է: Կը յանդգնիմ ըսելու, որ արդէն ունինք անբուժելի և վերջնական հետևանքներ:

Այն, ինչ որ անցեալ տարիներուն կը դիտուէր իբրև սոսկ հոետորական պայքար մրցակից քաղաքական գաղափարներու և իտէալներու միջև, այսօր կրնայ աւարտիլ համապարփակ քաղաքացիական պատերազմով, ներսփիւռքեան սառը պատերազմով, Սփիւռքի և հայրենիքի միջև պատերազմով: Վերջին երեսուն տարիներու նէօլիպերալ գաղափարախօսութիւնը գործարկելու հայկական փորձերը՝ փաթեթաւորուած բաց ու թափանցիկ հասարակութիւն ստեղծելու ագրեսիւ մեթոտներով, այսօր յանգած են բոլորիս համար անընմբռնելի խառնաշփոթութեան մը: Չքացած է իրարու նկատմամբ վստահութիւնը: Անհանդուրժողականութիւնը բոլոր մակարդակներու վրայ, անձնական յարաբերութիւններէն սկսած մինչև քաղաքական, ընկերային յարաբերութիւնները հիւծած, հասած են ոսկորին: Կա՛մ կը կոտրուին, կա՛մ ալ կը վերակերտուին: Վերակերտման յոյսը այսօր նուազագոյնի հասած է:

Յունիսի 20-ի խորհրդարանական ընտրութիւններուն «Հայաստան» դաշինքի մասնակցութիւնը փորձ մըն էր՝ բան մը վերականգնելու, երկրին մէջ քաղաքացիին կամքէն անկախ տեղի ունեցող մութ գործարքներու վրայ լոյս սփռելու, ընդդիմութեան ձայնը քաղաքացիին հասցնելու: Իշխանութիւններուն կողմէ պարտադրուող լռութեան պատը ճեղքելը կենսական էր, եթէ մտահոգ քաղաքացին կ'ուզէր ինչ-որ ձևով կասեցնել հակապետական մոլուցքը:

Սակայն կային նաև երկու շատ կարևոր նպատակներ՝

1. ահազանգել կեղծիքի և սուտ-փաստահէն քաղաքականութեան վտանգներու մասին և բարձրացնել գիտակցութեան մակարդակը,

2. կրկին ներմուծել ներքաղաքական մերձեցման քաղաքականութիւնը, նորոգել մեր հասարակութեան անհատներու միջև իրարհասկացողութեան ուխտը և այդպէս չէզոքացնել մոլեռանդութեան, անդրդուելի ինքնահամոզուածութեան և եսաճշդութեան համատարած երևոյթը, վերջ տալ սև-սպիտակին, հանդուրժողականութիւնը բերել առաջին պլան և հասնիլ հայութեան միասնական ուժերու լարման:

Սակայն ի՞նչ չափով այս նպատակներն իրագործուեցան, կամ հնարաւորութիւն կա՞յ դեռևս

իրագործելու՝ կը մնայ անորոշ:

Ի՞նչ տեղի ունեցաւ: Ինչո՞ւ մեր հասարակութիւնն ընտրած է ինքնակործանման ճամբան: Ինչպիսի՞ մեքանիզմներ ի գործ դրուեցան մեզ այստեղ հասցնելու համար: Մենք ունինք պառակտուած, բզկտուած հասարակութիւն պատմական այս պահուն, երբ միասնական տեսիլք ունենալը հաց ու ջուրի պէս կենսական է: Իրարու կը հակադրուին գաղափարախօսական այնպիսի էական սկզբունքներ, ինչպիսիք են ժողովրդավարութիւնը, ազգային գաղափարախօսութիւնը: Իրարու կը հակադրենք բաներ, որ կարելի չէ հակադրել:

Փաստօրէն, ՀՅԴ-ի համար ազգային գաղափարախօսութիւնը անբաժանելի է ժողովրդավարութեան սկզբունքներէն. մեզ մօտ համադրուած են ազգայինը, ընկերվարականը և ժողովրդավարականը: Սա սոսկ խօսք չէ. սա մեր էութիւնն է:

Կ'ընդգծեմ, որ անսակարկելի են ազգային տեսիլքը և ազգային գաղափարախօսութեան շաւիղը: Այդ ինծի համար գոյութենական է:

Կա՛մ հայ ենք, կա՛մ չենք: Այնպէս որ հոս քննարկման առարկայ չեմ դարձներ այդ մէկը: Սակայն ժողովրդավարութիւնը, որուն կը հաւատամ հոգով և միտքով, մեզի համար ստեղծած է լուրջ խնդիրներ: Ժողովրդավարութիւնը անդադար կատարելագործուող գործընթաց է, և աշխարհի ամէնէն զարգացած և ամէնէն ժողովրդավար երկիրները հարիւրաւոր տարիներէ ի վեր կը բախին նորանոր դժուարութիւններու:

Ի՞նչ իրավիճակ է մեզ մօտ:

Այո՛, մեզ մօտ ժողովրդավարութիւնը փխրուն, չկայացած համակարգ է, որ զարգացման կարիք ունի, և որ մինչև հիմա կը մնայ շահագործման առարկայ, քաղաքական խաղի գործիք: Շահագործման եղանակները ամէն օր «ծաղկունք»

կ'ապրին, աշխարհաքաղաքական շահերու գործիքի կը վերածուին:

Փաստօրէն, մեր հասարակութիւնը կանգնած է ժողովրդավարութեան և ժողովրդավարութեան հիմնարկներուն սպառնացող եւ դասական, եւ ոչ դասական վտանգներու առջև: Մեզի քաջածանօթ և այժմ արդիականացուած ապատեղեկատուութեան, դաւադրութեան և տգիտութեան սպառնալիքներուն աւելցած է երրորդ վտանգը՝ անհանդուրժողականութիւնը, մոլեռանդութիւնը, սեփական քաղաքական համոզուածութիւնը, սեփական անսխալականութիւնը:

Մարդը առաջընթաց կ'ունենայ միայն այն միջավայրին մէջ, ուր առողջ քննադատութիւն կը տիրէ, կը զարգանայ համակարգի մը մէջ, որ կը խրախուսէ շինիչ տարակարծութիւնը: Այսօր մեր համակարգը թափանցած են թշնամիները, գրաւած են մեր հայրենիքը տարատեսակ մակարդակներու վրայ՝ դպրոցէն մինչև համալսարան, աշխատատեղերէն մինչև ընտանիք, քաղաքական կուսակցութիւններէն մինչև Ազգային ժողով ու կառավարութիւն: Ամէն տեղ գլուխ բարձրացուցեր են մարդիկ, որոնք կը պնդեն իրենց համոզմունքի ճշմարտացիութիւնը: Անոնց համար այլակարծութեան և տարակարծութեան տեղ չկայ, իսկ այլախոհները թշնամիներ են, սևեր են, որոնք պէտք է վերացուին ամէն գնով, նոյնիսկ հայրենիքի կորուստի գնով: Այս մոլեռանդութեան, քաղաքական անհանդուրժողականութեան հետևանքներուն և վնասներուն մասին գիտենք բոլորս, նաև պարտաւոր ենք քննարկել զանոնք իրենց բոլոր երեսներով:

Կը թուի, որ խնդրահարոյցը միայն դաւադրութեան տեսաբաններն են, որոնք չեն կրնար իրականութեանը դիմակայել, վերլուծել և ընդունիլ գիտական փաստերը: Բայց դաւադրութիւնը մերկացնող՝ շղարշը պատռողներու մոլեռանդ համոզուածութիւնը նոյնքան խնդրահարոյց է և այդքան ալ չի տարբերիր դաւադրութեան տեսաբաններու անդրդուելի ինքնավստահութենէն: Քանի՞ անգամ փորձութեան մատնուեր ենք և այս կամ այն գիտական յօդուածը ուզած ենք ուղարկել մեր քրոջը կամ մօրը, բարեկամին կամ հարազատին, որ չի վստահիր կամ կը վստահի այս կամ այն քաղաքական գործիչին, օրինակի համար՝ քովիտ-19-ի դաւադրական յիմարութիւնները, պատուաստով մարդկանց «չիփաւորելու» մասին շրջող լուրերը, «Պայտընը հայերուն վերադարձուց Արևմտեան Հայաստանը», «Մաքրոնը բալիստիկ զէնքեր վաճառեց հայոց բանակին» կամ «Թուրքիան ներողութիւն խնդրեց հայերէն» յիմարապատումները և այլն:

Ապատեղեկատուութիւնը այսօր ևս ժողովրդավարութիւնը խարխլող հիմնական սպառնալիք է: Տեղեկատուական անհերևակայելի չափերու հասնող աղմուկին ու աղբին կողքին ուղղորդուած ապատեղեկատուութիւնը ազդեցիկ զէնք է հասարակութիւնը պառակտելու համար: Թիրախը սովորական քաղաքացին է, կը կուրացնէ զայն,

կը շեղէ անոր ուշադրութիւնը՝ սողոսկելով աւելցնելով անդրդուելիութեան, ամենագիտութեան և համոզուածութեան նոր տարրեր: Այս մոլուցքը կը հիւծէ մեզ, կը սպառէ մեր ուժերը, քաղաքականութիւնը կը տանի ամուլ բանավէճերու ծուղակ՝ նախկիններու, դիմակ կրելու և պատուաստի արգելքներու շուրջ ոչ բանական խօսակցութիւններու, Արցախը հայկական է, հայկական չէ, հողերը տալ կամ չտալ կեղծ օրակարգերու, այն պահուն, երբ հայ մարդը պարտաւոր է պատասխան տալ քաղաքական գերկարևոր և անյետաձգելի խնդիրներու: Մէկ կողմ ձգած ենք ժողովրդավարութեան տապալման, մարդու իրաւունքներու ոտնահարման, 2020-ի պատերազմի մութ երեսներու, բանակի կազմալուծման, անվտանգութեան չքացող համակարգի, բնակչութեան անվտանգութեանն առնչուող ամէնէն տարրական կարիքներու՝ ջուրի, ելեկտրականութեան, սնունդի անվտանգութեան, ապիկար իշխանութիւններու ձախողութիւններուն խնդիրները... շարքը երկար է:

Սակայն ժամանակը անգութ է. այս խնդիրները կը պահանջեն անյապաղ լուծումներ, բայց միևնոյն ատեն ալ կը մնան անպատասխան: Մեր ուշադրութիւնը կը շեղեն ապատեղեկատուութիւնը, անգիտութիւնը, տգիտութիւնը և մոլեռանդութիւնը: Մեծ աւեր կը գործէ մոլեռանդութեան հասնող «ես գիտեմ, ես փաստարկներ ունիմ»-ի, բոլոր հարցերուն պատասխան ունենալու մոլուցքը: Մեր հասարակութիւնը կարծես թէ բաղկացած է 3 միլիոն գիտուններէ, որոնք խիստ կառչած են արտայայտուելու իրենց իրաւունքին, սակայն կը հրաժարին այդ իրաւունքները իրացնելու անհրաժեշտ պարտականութիւններէն և քաղաքացիական պարտաւորութիւններէն: Այս անտրամաբանական իրավիճակը անդամալուծած է մեր երկիրը, և մարդիկ, քոյր, եղբայր, ծնողք, դրացի, համակերպուելով իրենց ձեռնաթափութեան, հեռուէն կը դիտեն՝ ինչպէս բոլորս միասին կը վազենք դէպի

ինքնասպանութիւն:

Անհատ քաղաքացիին սորվեցուցինք, որ ինք իրաւունքներ ունի, բայց մոռցանք յիշեցնել իր պարտաւորութիւններուն մասին: Սորվեցուցինք, որ իր խնդիրները ուրիշները պիտի լուծեն:

Իրաւունքի լուսաբանման այս գլխիվայր ներկայացումը ժամանակին լուրջի չառինք: Անհատ քաղաքացիին՝ իր իրաւունքները իրագործելու այն կազմակերպուած արշաւը, որ կար մեր երկրին մէջ վերջին 30 տարիներու ընթացքին, դժբախտաբար կը հետապնդէր այլ նպատակներ: Այս մասին կասկած չկայ այսօր: Սակայն նայինք, թէ ինչ տեղի ունեցաւ, ինչպէս բաց հասարակութեան փոփերեան գաղափարախօսութիւնը աղաւաղուած ձևով մուտք գործեց մեր երկիր: Բաց հասարակութեան մտքի թերի գործարքը՝ դիտումնաւոր թերի, արդէն կու տայ իր լեղի պտուղները:

Նէօլիպերալ և յատկապէս փաշինեանական յեղափոխութենէն ետք քարթերը արդէն բաց են: Այս ուժերը աւանդական զանգուածային լրատուութեան միջոցներու քարոզչութիւնը և ազգային-պետական շահերու պաշտպանութիւնը կը համարէին վտանգաւոր իրենց ապրելակերպին համար և կը սերմանէին այն միտքը, որ իշխանութիւնները, «նախկինները» Հայաստանը տարած են անձնաւորուած բռնակալական կարգերու: Անոնք կը քարոզէին, որ այս բռնակալ, «թալանչի» մարդոց ազդեցութիւնը և կառավարման ոճը անհամատեղելի են ժողովրդավարութեան հետ, որ անոնք ամէն օր կ'ոտնակոխեն քաղաքացիին իրաւունքները, ընկերային փոքրամասնութիւններու իրաւունքները, որ ընտանեկան բռնաբարութիւնը այս կամ այն ղեկավարին յանցանքն է: Մէկ խօսքով՝ ժողովրդավարութեան անուան տակ փաթեթաւորուեցան ամէն տեսակի խնդիրներ, ներմուծեցին ինքնաքննադատութիւն, որ այս պարագային կը նշանակէր ազգային ամէն ինչ հարցականի տակ առնել: Հարցականի տակ առնել պետական և հասարակական բոլոր կառոյցները, մերկացնել քաղաքացին և զայն յանձնել յորձանուտին: Անհատապաշտութիւն սերմանելով հասնիլ հաւաքականի կործանման:

Ես հեռու եմ այն միտքէն, որ մեր երկրէն ներս 2018-էն առաջ կը տիրէր բացարձակ ճշմարիտ ժողովրդավարութիւն: Ես ու իմ կուսակցութիւնը կը հաւատանք ու կը պաշտպանենք բոլորի՝ անհատի և փոքրամասնութիւններու անվիճելի իրաւունքները: Սակայն ժողովրդավարական ոչինչ կար փաշինեանական այս շարժման մէջ. կար միայն ժողովրդավարութեան սկզբունքներու շահարկում, հայ մարդու հաւատքի և յոյսի շահարկում:

Հայաստանի մէջ երբեք, երբեք չէ ստեղծուած բաց հասարակութիւն: Չկայ նաև հիմա: Նպատակ չկար զայն ստեղծելու: Դիպուկ էր փաշինեանական, այսպէս կոչուած, յեղափոխութենէն մի քանի ամիս անց «յեղափոխականներու» առաջարկը՝ բանալ յեղափոխութեան ցուցահանդէս, որ այցելուներուն

պիտի տար այն խաբուսիկ համոզուածութիւնը, որ իրենք «յեղափոխութեան» զանգուածներու մասնիկ են: Լուսանկարներու, թեքսթերու և այլ իրերու տեղադրումը նպատակ ունէր իւրաքանչիւր քաղաքացիի հնարաւորութիւն տալ ինքզինք տեսնելու որպէս յաղթանակի կենսական և անփոխարինելի տարր և այս ձևով հակակշիռ ապահովելու, հաւատարմութիւն ապահովելու, բան մը, որ կրնար յառաջանալ նոյն քաղաքացիին մօտ, եթէ հնարաւորութիւն ունենար հակառակին մասին տեղեկատուութիւնը: Ընդհանուր ուղերձը մանրակրկիտ մշակուած էր՝ քաղաքացիին մէջ յառաջացնել այն զգացումը, որ ինք ընտրեց իր սեփական ճանապարհը, բան մը, որ խորքին մէջ ունէր այլ հեռակայ նպատակ՝ ամրապնդել տարիներէ ի վեր մշակուող անհատապաշտութեան փորձը Հայաստանի մէջ:

Ըստ Փոփերի՝ բաց հասարակութիւն կը նշանակէ ընկերային բաց համակարգ: Այսինքն՝ երթալ դէպի համակարգ մը, որ չունի վերջնական նպատակ և չի շարժիր ըստ որոշակի օրէնքներու: Այսօր, փաստօրէն, մենք կը դիմագրաւենք նէօլիպերալներու կողմէ ստեղծուած և, այսպէս կոչուած, բաց հասարակութեան մէջ ապրելու և արարելու դժուարութիւնները և անյարմարութիւնները, անոր ստեղծած, մեղմ ըսած, քաոսը:

Ի՞նչ է բաց հասարակութիւնը:

Ժողովրդավարութեան դասական աթէնքեան ըմբռնումով՝ «ով պէտք է իշխէ» հարցին պատասխանն էր «մարդիկ՝ դեմոսը, պէտք է իշխէ»: Իւրաքանչիւր քաղաքացի կարևոր է: Քաղաքական որոշումները, ինչպիսիք են պատերազմը և խաղաղութիւնը, կ'ընդունուէին բոլոր լիիրաւ քաղաքացիներու ժողովին կողմէ: Սա այսօր կը կոչենք ուղղակի ժողովրդավարութիւն, բայց պէտք չէ մոռնալ, որ աթէնքեան քաղաքացիները կը կազմէին բնակիչներու փոքր մասը: Այստեղ կարևորն այն էր, որ գործնականին մէջ աթենացի դեմոկրատները իրենց ժողովրդավարութիւնը կը համարէին բռնակալութեան բացառման

այլընտրանք, կամայական կառավարման կասեցում ժողովրդական քուէարկութեան ճամբով:

Բայց անոնք շատ լաւ գիտէին, որ ժողովրդական քուէարկութիւնը կրնայ սխալիլ յատկապէս ամենակարևոր հարցերու՝ պատերազմի և խաղաղութեան պարագային: Աթենացիները ճիշդ էին. այո՛, ժողովրդավարական հիմքերով քուէարկութիւնը կրնայ սխալիլ և տանիլ կործանման: Դժուար է, եթէ ոչ անհնար, ունենալ սահմանադրութիւն մը, որ հարիւր տոկոսով հասարակութիւնը կը պաշտպանէ սխալներէ:

Հակառակ անոր, որ ժողովրդավարութեան գաղափարը սնուցելու եւ փայփայելու ամէնէն ուժեղ արդարացումներէն մէկն այն է, որ սխալը կանխելու համար ժողովրդավարութիւնը հիանալի գործիք է, միայն գործիք և ոչ կառավարման աստուածային իրաւունք՝ տրուած ժողովուրդին: Յիշենք փաշինեանական «պողպատէ մանդատ»-ի մասին խօսքերը՝ ժողովուրդին կողմէ իրեն տրուած. «Ժողովուրդը մեզ ընտրեր է, ինչ ուզենք, կ'ընենք»-ի ոճը միայն ժողովրդավարութեան այլասերում է. Փաշինեանը իշխելու աստուածային իրաւունք չէ ստացած մեզմէ:

Եթէ ներկայի իշխանութիւնները որդեգրած են բաց հասարակութեան փոփերեան տարբերակը՝ բոլորիս ծանօթ և շահարկուած Սորոսի աշխարհայեացքի հիմքը, ապա պէտք է նայիլ, թէ ինչ կ'ըսէ նոյն ինքը՝ Փոփերը: «Բաց հասարակութիւնը և անոր թշնամիները» գիրքով Փոփեր կ'առաջարկէ նոր հիմնախնդիր. ան նորը կը տարբերի հին՝ «ո՞վ պէտք է իշխէ» հարցէն: Նոր խնդիրը ան կը ձևակերպէ այսպէս. «Ինչպէ՞ս ստեղծել պետութիւն, ուր վատ իշխանաւորներէն հնարաւոր է ձերբազատուիլ առանց արիւնահեղութեան, առանց բռնութեան գործադրման (այստեղէն է նաև յեղափոխութիւններու՝ Արևմուտքի կողմէ ստեղծուած «թաւշեայ» կամ «գունաւոր» անուանումները):

Ըստ Փոփերի, ի տարբերութիւն հին հարցադրման, խօսքը միայն գործնականի մասին է, խնդիրը տեխնիկական է: Եւ ժամանակակից ժողովրդավարութիւնը ստեղծած է գործնական լուծումներու լաւ փորձեր, սակայն, ըստ Փոփերի, կայ մեծ խնդիր մը, այն է՝ արդի ժողովրդավար բոլոր հասարակութիւնները լուծումը կը տեսնեն պարզեցուած մէկ սկզբունքի մէջ, որ կարելի է չգործող կամ վատ գործող կառավարութիւն մը վար բերել ձայներու մեծամասնութեամբ:

Տեսականօրէն, սակայն, ժամանակակից ժողովրդավարութիւնը դեռ կը շարժի հին հարցադրումով՝ «ո՞վ պէտք է իշխէ»: Եւ եկած են այն եզրահանգման, որ ժողովուրդն է (հայկական «ժող ջան»-ը)՝ ողջ չափահաս բնակչութիւնն է իրական, վերջնական և միակ օրինական իշխանատէրը: Բայց, իհարկէ, իրականութեան մէջ ոչ մէկ տեղ՝ ո՛չ Ֆրանսայի, ո՛չ Միացեալ Նահանգներու և ո՛չ ալ Շուէյտի մէջ, վերը նշուած ժողովուրդն է, որ կ'իշխէ: Իրականութիւնը մէկ է՝ կը կառավարեն կառավարութիւնները (մեր քաղաքական այրերը, պաշտօնեաները, պետական ծառայողները, որոնց դժուար է, եթէ ոչ անհնար, պատասխանատուութեան ենթարկել իրենց վատ ու երբեմն վտանգաւոր արարքներուն համար):

Ի՞նչ հետևանքներ կրնայ ունենալ կառավարման այս պարզ և գործնական տեսութիւնը: Փոփերի բաց հասարակութիւնը գործնականի և ոչ թէ տեսութեան մասին է: Նոր հարցախնդիր դնելով և բաց հասարակութեան լուծումը առաջադրելով՝ ժողովրդավարութեան փոփերեան ընկալումը ոչ թէ ժողովուրդի իշխանութեան տեսութիւն է, այլ օրէնքի գերակայութեան մասին է՝ հետապնդելով մէկ նպատակ՝ ապահովել գործող կառավարութեան անարիւն պաշտօնանկութիւնը ձայներու մեծամասնութեամբ:

Բաց հասարակութեան աղաւաղուած և ժողովրդավարութեան միրաժին դիմաց ո՞ւր է այսօր



հայ մարդը:

Անցեալին հայ հասարակութեան կայունութիւնը և ազգային հաւաքական նպատակները կ'որոշուէին աստուածային հրամանագրով ու կ'ապահովուէին ազնուական տոհմերու կողմէ, աւելի ուշ՝ այլ կայսրութիւններու և ուժեղ պետութիւններու կողմէ: Ժողովրդավարական կարգերու հաստատումը Հայաստանի անկախացումէն ետք հայ մարդը դրած է որպէս առանձին անհատ՝ երկրի կառավարմանը մասնակցելու դժուար ու անհանգստացնող պահանջին դէմ դիմաց: Այս փոփոխութիւնը սովորական քաղաքացիին համար կ'ենթադրէ ծանր աշխատանք: Անկէ կը պահանջուի անխոնջ ու անվերջ սորվիլ սեփական փորձ-սխալի վրայ: Եւ ուրեմն առաջընթաց ու արդիւնք ապահովելու համար անկէ կ'ակնկալուի հասարակական և պետական հիմնարկները շարունակական հարուածի տակ պահելու և զանոնք մաս-մաս քանդելու և նորոգելու գործընթաց:

Ժողովրդավարութիւնը իտէալական տեսականի վարդապետութիւն չէ, և անոր յաջող իրագործումը կ'ենթադրէ իրական կեանքի մէջ փորձարկում: Հայ մարդը հրաժարած է այս առաջադրանքէն և իր գործը վստահած՝ գունաւոր յեղափոխականներու: Սորվիլ չ'ուզեր, քանի որ սորվիլը կը բացայայտէ իր իսկ թերութիւնները: Բաց հասարակութիւնը անդառնալիօրէն կորսուած է. հայ մարդը որոշած է ընտրել պարտութիւն, անկում, ինքնագլխատում:

Իսկ ի՞նչ կը պատահի, եթէ ժողովուրդ մը որոշէ և ընտրէ բռնապետ: Ի՞նչ կը պատահի, երբ անհաւանականը տեղի ունենայ այնպէս, ինչպէս պատահեցաւ մեզ մօտ: Ի՞նչ պէտք է ընել, եթէ ժողովուրդը քուէարկէ ի նպաստ բռնապետութեան: Փոփերի տեսութիւնը իհարկէ կը խուսափէ այս և այլ երկուութիւնները քննարկելէ: Հայրենի իշխանական շրջանակները կը հաւաստիացնեն, որ այդպիսի բան տեղի չ'ունենա, եթէ քուէարկութիւնը ազատ ըլլայ: Բայց չէ՞ որ այս մէկը տեղի ունեցեր է բազմաթիւ անգամներ: Եւ տեղի ունեցաւ 2018-ին, 2021-ին:

Պատասխանը մեր աչքերուն առաջ է ամէն վայրկեան, արդէն գիտենք. հայրենիքի կորուստ, մահ, պարտութիւն, աղքատութիւն, քայքայուած պետական հիմնարկներ, հետզհետէ աւելի անհանդուրժող դարձող իշխանաւորներ և հասարակութիւն մը, որ բևեռացուած իր դիրքերէն չի գիտեր ինչպէ՞ս վերադառնալ իրական կեանք:

Տարբեր երկիրներ ունին սահմանադրութիւններ, որոնց մէջ խնդիրը դիմագրաւելու համար շարադրած են խիստ պահանջներ՝ շատ աւելի, քան ձայներու մեծամասնութիւնը: Սահմանադրական դրոյթները բարեփոխելու կամ փոխելու համար, օրինակ, կը պահանջուի, այսպէս ըսած, որակեալ մեծամասնութիւն: Նման պահանջը ցոյց կու տայ մէկ բան, որ սահմանադրութիւնը կը նախատեսէ նման փոփոխութիւն: Սակայն չունի պատասխան «Ո՞վ պէտք է իշխէ» հարցին: Ինչպէ՞ս կրնանք լաւագոյնս խուսափիլ այն իրավիճակներէն, երբ վատ իշխանաւորը չկարենայ մեծ, չափազանց մեծ վնաս պատճառել:

2021 թուականի յունիսի ընտրութիւնները մեր երկիրը տարին անելի վիճակի: Մեզի յայտնի լաւագոյն լուծումը Սահմանադրութիւնն էր, որ թոյլ կու տայ մեծամասնութեան ձայներով հեռացնել կառավարութիւնը, սակայն Սահմանադրութիւնը չի խոստանար, որ մեծամասնութեան ձայները միշտ ճիշդ կ'ըլլան: Փաստը կը մնայ այն, որ ժողովրդավարական այս ոչ կատարեալ կարգը մինչ այժմ յօրինուած կարգերէն լաւագոյնն է: Եւ եկէք ընդունինք, որ արժէ՛ պայքարիլ ժողովրդավարութեան համար, թերևս նաև մեռնիլ անոր համար: Սա է «Հայաստան» դաշինքին առաքելութիւնը:

Հիմա արդէն մեր երկրին մէջ նորմալ ժողովրդավարութիւն չունինք: Սկսած ենք ապրիլ կառավարման բռնապետական պայմաններու մէջ, իսկ բռնապետներուն կարելի չէ հեռացնել առանց արիւնահեղութեան:

Մեզի համար կայ ընդամէնը երկու այլընտրանք՝ կա՛մ բռնապետութիւն, կա՛մ ժողովրդավարութեան ինչ-որ ձև: Մեր ընտրութիւնը հիմնաւորենք բացառապէս բռնապետութեան չարիքի անընդունելիութեան թեզով: Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ բռնապետը հակուած է չարաշահելու իրեն վստահուած իշխանութիւնը, այլև այն պատճառով, որ բռնապետը, նոյնիսկ բարեհոգի բռնապետը, որ ամէն վայրկեան կը յայտարարէ, որ «սիրում է» մեզ, ծունկի կու գայ մեր առջև, չի վարանիր մեզի՝ միւսներուս զրկելու պատասխանատուութենէ և հետևաբար մեր իրաւունքներէն ու պարտականութիւններէն:

Այսօր մեր ձեռքէն խլած են մեր իրաւունքներն ու պարտականութիւնները: Սա բաւարար հիմք է՝ պայքարելու ժողովրդավարութեան համար, այո՛, օրէնքի գերակայութեան համար, որ մեզի հնարաւորութիւն կու տայ ձերբազատուելու այս կառավարութենէն: Ոչ մէկ մեծամասնութիւն, ինչքան ալ «մեծ» ըլլայ ան, չի կրնար որակեալ ըլլալ օրէնքի գերակայութիւնը շրջանցելու համար: ■



Էրդողանի պաշտամունքի ձևավորումը Թուրքիայում, կամ Յենի Սուլթան Էրդողան (հոդված 1)

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Թուրք հասարակությունը, Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից ի վեր, շարունակաբար ենթարկվել է անհատի պաշտամունքի ազդեցությանը, որը կախված երկրի ղեկավարող էլիտայի քաղաքական առանձնահատկություններից և քաղաքական օրակարգի թելադրած առաջնահերթություններից՝ մշտապես ուժեղացել կամ թուլացել է: Հանրապետության հիմնադիր համարվող Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի մահից հետո որևէ գործող քաղաքական գործչի անձի պաշտամունքը երբևէ չի ընդունել հանրության նկատմամբ ճնշման այնպիսի չափեր, ինչպիսին եղել է Աթաթյուրքի իշխանության տարիներին, ընդհուպ մինչև «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալը: ԱԶԿ-ի՝ իշխանության գալուն զուգընթաց անձի պաշտամունքը աստիճանաբար տարածվում է Ռ. Թ. Էրդողանի անձի շուրջ, իսկ դրա ամբողջական տիրապետության ճանապարհին հիմնական խոչընդոտը քեմալիզմն է և Աթաթյուրքի քաղաքական ժառանգությունը՝ վերջինիս խամրող, սակայն դեռևս կենսունակ անհատի պաշտամունքով: ԱԶԿ-ի իշխող վերնախավը Էրդողանի գլխավորությամբ լուրջ ջանքեր և ռեսուրսներ է ներդնում այն փոխարինելու Էրդողան անհատի պաշտամունքով՝ անսահման և անվերապահ իշխանություն հաստատելու նպատակով, և այդ նպատակին հասնելու համար հիմնականում կիրառվում են այն մեխանիզմներն ու հնարքները, արդիական միջոցներով, որոնք ժամանակին կիրառվել են Աթաթյուրքի կողմից: Սա բերում է Աթաթյուրքի անձի պաշտամունքի աստիճանական փոխատեղման՝ Էրդողանի անձի պաշտամունքով, և այս գործընթացում ակտիվորեն կիրառվում է քաղաքական իսլամի գործոնը՝ ընդդեմ աշխարհիկ-քեմալականության:

Հասարակության իսլամականացման և քաղաքական իսլամի դիրքերի ամրապնդման համար նվազեցվում, ապա և ասպարեզից չեզոքացվում է զինվորական էլիտայի քաղաքական դերակատարությունը, քաղաքական հետապնդումների և այլ ճնշումների են ենթարկվում ընդդիմադիր ԶԼՄ-ները և ընդդիմադիր քաղաքական խմբավորումները զորօրինակ՝ գյուլենականները:

Այս ամենը հանգեցնում է Թուրքիայի քաղաքական դաշտի ավտորիտարացմանը, տոտալիտարիզմի միտումներով: Քաղաքացիական հասարակության դիմադրությունը (օրինակ՝ Գեզի այգու ցույցեր) և զինվորական էլիտայի քաղաքական վերահսկողությունը իր ձեռքը վերցնելու փորձը (2016 թվականին տապալված ռազմական հեղաշրջման փորձ) էլ ավելի սրեցին քաղաքական իրավիճակը՝ առիթ հանդիսանալով նոր քաղաքական ճնշումների ալիքի համար: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում հասարակության ճեղքում և բևեռացում՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով հետևանքներով:

Հասկանալու համար թուրքական խարիզմատիկ առաջնորդության առանձնահատկությունները, նախ և առաջ պետք է հիմնավոր և խորազնին կերպով դիտարկել մերձավորարևելյան խարիզմատիկ առաջնորդության երևույթն ընդհանրապես, որի օրգանական մասերից մեկն էլ թուրքական խարիզմատիկ առաջնորդությունն է:

Խարիզմատիկ առաջորդությունը Մերձավոր արևելքում ունի որոշակի առանձնահատկություններ, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Աշխարհաքաղաքական, մշակութային, պատմական առանձնահատկությունները այս տարածաշրջանը խարիզմատիկ առաջնորդության հետազոտողների համար վերածել են մի յուրօրինակ ուսումնասիրության դաշտի:

Հասկանալու համար մերձավորարևելյան խարիզմատիկ առաջնորդության առանձնահատկությունները, անհրաժեշտ է նախ և առաջ հայացք նետել մերձավորարևելյան երկրների պատմաքաղաքական, և, բնականաբար, էթնոկրոնական պատկերին: Այս աշխարհաքաղաքական տարածաշրջանը բաժանվում է երկու մասի՝ միապետական և հանրապետական կառավարման ձևերով: Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում անկախություն ձեռք բերած երկրները, փոքր բացառություններով, ղեկավարվում են թագավորական ընտանիքների և զինվորական էլիտաների կողմից: Հենց որ «թագավորներն» ու «գնդապետերը» եկան իշխանության, նրանց գլխավոր առաջնահերթությունը այդ իշխանությունը իրենց ձեռքում պահելն էր: Այդ նպատակով նրանք մշակեցին և իրագործեցին որոշակի ծրագրեր՝ իրենց իշխանությունը լեգիտիմացնելու և իշխողների ու իշխվողների միջև առկա անդունդը կրճատելու համար[1]: Այս ծրագրերը վերաբերվում էին անհատի պաշտամունքի կառուցարկմանը, հենվելով

ավանդական կամ խարիզմատիկ լեգիտիմության ձևավորման և կիրառման վրա:

Միապետությունների համար, ըստ այդմ, առաջնորդության և անհատի պաշտամունքի կառուցարկումը իրականացվում էր ավանդույթի վրա հիմնվելով:

Հանրապետական կառավարման կարգ ունեցող երկրների համար այդ ուղին հեղափոխական խարիզմատիկ առաջնորդի կերպարի կառուցարկումն էր: Այս գործընթացների իրականացումը ընթանում էր կոշտ և փափուկ ուժերի միջոցով և դրանց համատեղ կիրառմամբ: Կոշտ ուժը, բնականաբար, դրսևորվում էր ուժի կիրառման տարբեր ձևերով: Փափուկ ուժը հովանավորչությունն էր (նավթով հարուստ Ծոցի միապետություններում) և պոպուլիզմը (ոչ հարուստ ռազմական հանրապետություններում): Չնայած կիրառված տարբեր մեթոդներին ու տարբեր մոտեցումներին, նպատակը երկու հատվածների համար էլ նույնն էր՝ ամբողջական վերահսկողություն պետության ու իշխանության լծակների վրա, և ամբողջական վերահսկողություն քաղաքական դաշտում[2]:

Գտնվելով էներգակիրների համաշխարհային պաշարների մեծագույն մասի աշխարհագրական գոտում, այս տարածաշրջանում համեմատաբար մեծ թիվ են կազմում, այսպես կոչված «նավթային միապետությունները», ինչպիսիք են՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Բահրեյնը, Քաթարը, ԱՄԷ-ն, Օմանը: Այս երկրներում միապետությունը դոգմատիզացված իրողություն է, ինչը ունի նաև կրոնական հիմնավորում՝ պայմանավորված իսլամի գերակայությամբ: Վեբերյան ավանդական լիդերության ավելի լավ օրինակ, քան առկա է վերոնշյալ երկրներում, այսօր դժվար է գտնել: Այդ միապետությունների իշխող ընտանիքները օգտագործել են ահռելի նավթային հարստությունը ստեղծելու համար բարեկեցիկ սոցիալական համակարգ, որի արդյունքում հպատակները օգտվում են առաջնակարգ առողջապահական անվճար ծառայություններից, աշխարհի լավագույն համալսարաններից որևէ մեկում սովորելու համար ֆինանսական աջակցությունից, անվտանգության ապահովման բարձր մակարդակից և այլն[3]:

Այս «առատաձեռնությունը», անշուշտ, քաղաքական նպատակ է հետապնդում, այն է՝ առաջ բերել հպատակների բարյացակամությունն առ իշխող ընտանիքը և այնպիսի միջավայրի ստեղծումը, որ մարդիկ նման բարիքներից օգտվելով հրաժարվեն պետական իշխանության դեմ ամեն տեսակ դրժգոհության դրսևորումներից: Իշխող ընտանիքների կատարած քաղաքական հաշվարկները միաժամանակ շատ հստակ են: Քանի որ նրանք պատասխանատու են ստեղծված բարիքների բաշխման պետական ինստիտուտների համար, ժողովուրդը միայն նրանց կարող է վստահել պաշտպանելու դրանք:

Միապետական երկրներում իշխող ընտանիքները «լիազորված» են նաև պաշտպանելու իրենց

պետությունները արտաքին վտանգից: Այստեղ հիմնական դերակատարումը Միացյալ Թագավորության, իսկ բրիտանական կայսրության փլուզումից հետո՝ ԱՄՆ-ի հետ ունեցած սերտ «նավթային» դիվանագիտական հարաբերություններին են, ինչպես նաև այդ միապետությունների մշտական արևմտամետ կողմնորոշումը[4]:

Այս միապետությունների ղեկավարների և նրանց դաշնակիցների առանցքային գաղափարը կայունությունն է: Ի թիվս այլ միջոցների, կայունության համար դրական դերակատարում ունի այդ երկրների հասարակությունների պահպանողական բնույթը, որը բխում է կրոնից: Կրոնական և քաղաքական իշխանությունը, հատկապես Սաուդյան Արաբիայում, տարանջատված է, և հասարակությունը արդյունավետորեն բաժանված է երկու մասի՝ որտեղ քաղաքական իշխանությունը պատկանում է միապետներին, իսկ հանրային ոլորտը կարգավորվում է հոգևորական դասի կողմից:

Սաուդյան Արաբիայում սա շատ արդյունավետ «զիջում» է իշխող ընտանիքի կողմից: Կրոնական գործիչներին հանրային հարցերի վերաբերյալ այդքան լիազորություններ տալով, իշխող ընտանիքը նրանց միացրել է իշխանության համակարգին, և այսպիսով, երաշխավորել է կրոնական աջակցությունը իր իշխանությանը: Իշխանական էլիտայում կրոնական տարրի ներգրավումը այլ առավելություն ևս ունի: Առաջնորդի այսքան սերտ նույնացումը հոգևոր ոլորտի հետ անհավատալիորեն դժվար է դարձնում, եթե ոչ անհնար, քննադատել նրան, քանի որ նրան քննադատելը կնշանակի քննադատել կրոնը[5]:

Հորդանանում և Մարոկկոյում կրոնը ավելի մեծ դեր ունի թագավորական լեգիտիմությունը ամրապնդելու, և նրա անձի պաշտամունքը կառուցարկելու համար: Երկու միապետությունների արքայատոհմերը Մուհամմադ մարգարեի հետնորդներն են, և այս հանգամանքը նրանք արդյունավետորեն օգտագործում են իրենց իշխանության լեգիտիմացման և սեփական անձի պաշտամունքի կառուցարկման համար: Հորդանանի միապետերը Հաշեմյան տոհմից են, (Հաշեմը Մուհամեդի մեծ պապն էր)[6], և Մուհամեդ մարգարեի հետ ունեցած «արյունակցական» կապի մասին մշտական հիշատակումները անհնար են դարձնում

թագավորի նկատմամբ քննադատությունները, քանի որ նա «սովորական» թագավորը չէ, այլ Մարգարեի հետնորդը է, և նրան ուղղված քննադատությունը քննադատություն է ուղղված Մարգարեի ընտանիքին: Այսպիսի հանգամանքները ազդում են իշխանությունը առավելագույնս անձնավորված դարձնելու վրա, և դա կատարվում է կանխամտածված կերպով: Իշխանության անձնավորումը արաբական աշխարհի քաղաքական դիմագծի հիմնական հատկանիշներից է, որը դրսևորվում է մեծավ մասամբ անկախացումից հետո: Պետության գլխի նույնացումը պետության հետ անձի պաշտամունքի կառուցարկման այնպիսի արդյունավետ մեթոդ էր, որ դա կիրառվում էր թե միապետություններում, թե հանրապետություններում: Պետական իշխանության անձնավորումը առաջնորդին տալիս էր անսահմանափակ տնտեսական, քաղաքական իշխանություն և ուժի կիրառման լեգիտիմ իրավունք: Արդյունքում խամրում են հանրային և մասնավոր ոլորտների միջև բաժանարար գծերը: Ստեղծվում է այնպիսի իրադրություն, որ բոլոր ընդդիմադիր ուժերը՝ քաղաքական կուսակցությունները, արհմիությունները, ուսանողական խմբերը ճնշվում են, և պառլամենտը, եթե այդպիսին գոյություն ունի, դառնում է ղեկավարի որոշումներն ամրապնդող կցորդ կառույց[7]:

Այս ամենը հանգեցնում է անհատի պաշտամունքի զարգացմանը ընդհուպ այն աստիճանի, որ հասարակական միջավայրը վերածվում է ֆաշիստական հավաքույթի ու հայտնի «1984» վեպի ամբողջատիրական մթնոլորտի յուրահատուկ միախառնման: Առաջնորդի պատկերն ամենուր է՝ սկսած հյուրանոցների ընդունարաններից մինչև փողոցի ամեն մի անկյուն: Առաջնորդներն իրենց մեծամասշտաբ նկարներից հայրաբար կամ մեծեղբայրաբար նայում են իրենց ժողովրդին և միշտ ներկա են ամենուր[8]:

Որպես կանոն, այս համատարած պատկերները ցույց են տալիս առաջնորդին որպես ազգի հայր՝ հայրական հոգածությամբ իր ժողովրդին հսկելիս, սակայն իրականությունն այլ է: Հոգեբանական ազդեցությունը՝ տեսնելու պետության գլխին ուր էլ որ գնաս, անսահմանորեն ուժեղ է ու ազդեցիկ: Սա քարոզչության ձև է, որը ներթափանցում է մարդկանց ենթագիտակցության ոլորտ՝ անգամ աննկատ, և ձևավորում է վերջիններիս վարքագիծը անկախ նրանց ցանկությունից և գիտակցությունից[9]: Սա անհատի պաշտամունքի ձևավորման հոգեբանական կողմն է: Իսկ քաղաքական առումով անհատի պաշտամունքի կառուցարկման և կիրառման հետևանքները շատ ավելի ուժեղ են: Իշխանության անձնականացումը տարածաշրջանի երկրները պահում է խրոնիկ ինստիտուցիոնալ թերզարգացածության մեջ, և վերացնում է ցանկացած հնարավորություն դարձնելու իշխանություններին հաշվետու և պատասխանատու[10]:

Մերձավորարևելյան միապետություններում իշխանության անձնավորումը հանգեցնում է իշխող ընտանիքի անդամների կողմից գրեթե բոլոր պետական գլխավոր պաշտոնները զբաղեցնելուն: Դիվանագիտական պաշտոնները, կարևորագույն նախարարական պորտֆելները՝ ներքին գործերի, պաշտպանության, արտաքին գործերի, զբաղեցնում են միապետի որդիները, եղբայրները կամ զարմիկները և այդ ընտանիք ու իշխանական համակարգ մուտք գործելու ընդամենը երկու հնարավորություն կա՝ ծնվել այնտեղ կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի դստեր հետ ամուսնանալ[11] (Էրդողանի փեսաները դրա վառ օրինակն են):

Ռազմական էլիտայի ղեկավարման ներքո գտնվող հանրապետություններում իշխանության լեգիտիմացումը և անձի պաշտամունքի կառուցարկումը այլ հիմքի վրա է իրականացվում: Այնտեղ, որտեղ միապետությունների դեպքում շեշտադրված են ավանդույթն ու կրոնը, ռազմական հանրապետություններում շեշտադրվում են հեղափոխությունն ու ազգը/ժողովուրդը:

Ազգը օգնում է խթանել ընդհանուր ինքնության զգացումը: Մինչդեռ պահպանողական միապետությունները այդ զգացողության զարգացման

համար կիրառում են Իսլամը, ռազմականացված հանրապետություններն այդ անել չեն կարող: Այդ երկրներից շատերն ունեն մեծ քրիստոնեական համայնքներ, որոնք ևս պետք է իրենց զգան որպես նոր հասարակարգի մաս: Եգիպտոսը, օրինակ, ունի ազգային ինքնության լավ զարգացած հասարակական զգացում: Համեմատաբար նոր կազմավորված երկրները, ինչպիսիք էին Իրաքը, Սիրիան, չունեին ազգային ինքնության զգացողություն: Ուստի այդ երկրների առաջնորդները պետք է ստեղծեին այն: Հայրենասիրությունը ընձեռեց նման հնարավորություն: Կար մեկ այլ պատճառ ևս, որ հանրապետությունները ղեկավարող զինվորականությունը լեգիտիմացման միջոց տեսավ ազգը և ոչ թե կրոնը: Զինվորական էլիտան իրեն դիտում էր որպես արդիական, առաջադիմական, անգամ ծայրահեղական քաղաքական ուժ և գտնում էր, որ այդ աշխարհայացքը լավագույնս կարող է կիրառվել աշխարհիկ պետություն կառուցելու գործում[12], և այս համատեքստում կրոնը տեղ չուներ:

Ի հակադրություն նախկին իշխանության համակարգի, հետհեղափոխական արաբական երկրների առաջնորդները մարդիկ էին, ովքեր իրենց ցուցադրում և խոսում էին ինչպես փողոցի սովորական մարդիկ: Նրանք չէին ծնվել էլիտար ընտանիքներում, և կրթություն չէին ստացել արտերկրում: Նրանք իրենց առաջընթացն ապահովել էին դժվարին ճանապարհով: Այս ամենի լավագույն օրինակը Եգիպտոսի երկրորդ նախագահ Գամալ Աբդել Նասերն է[13]: Հեղափոխությունից առաջ անհնար կլիներ պատկերացնել, որ Եգիպտոսի առաջնորդը կլինի մեկը, ում պապը եղել է հողագործ-ֆելլահ, իսկ հայրը՝ գրասենյակային ծառայող: Նասերը միաժամանակ սովորական էր ու անսովոր, ինչի համար ամբոխը պաշտում էր նրան:

Նասերը հրաշալի պատկերացում ուներ քաղաքականության զգացմունքային կողմի մասին, և երբ 1954 թվականի նոյեմբերին դարձավ նախագահ, նա հմտորեն օգտագործեց զանգվածային խանդավառությունն ու հասարակական լայն աջակցությունը իր անձի պաշտամունքը կառուցարկելու, իշխանությունն իր անձի հետ նույնացնելու և այնպիսի քաղաքական համակարգ ստեղծելու համար, որտեղ դաժանաբար ճնշվում էր ցանկացած ընդդիմություն[14]: Միջինարևելյան միապետների նման Նասերը ձևավորեց անհատի պաշտամունք, որի միջոցով նույնացվեց պետության հետ: Միցել նրա հետ նշանակում էր դավաճանել հեղափոխությանը, և նրան քննադատելը հավասար էր իմպերիալիստների կողմը բռնելուն: Հավատարմությունը ազգին և հավատարմությունը Նասերին դարձավ միևնույն բանը: Նասերը արդյունավետորեն օգտագործեց Սուեզի պատերազմը այն գաղափարը ուժեղացնելու համար, որ միայն ինքը և իրեն աջակցող բանակը կարող են պաշտպանել Եգիպտոսը արտաքին հարձակումից[15]: Նասերը լավագույնս կիրառում էր պոպուլիզմի մեխանիզմները գեներացնելու իր անփոխարինելիության գաղափարը ստեղծելով Եգիպտոսի համար արտաքին թշնամիներ, ինչպիսիք էին Իսրայելը և Արևմուտքը, և ներքին թշնամիներ, ինչպիսին էր «Մուսուլման եղբայրները» կազմակերպությունը: Վերջիններիս դեմ Նասերը մղում էր անհաշտ պայքար: 1954 թվականին օրենքից դուրս հայտարարելով, Նասերը նրանց մեղադրում էր հետադիմության, Եգիպտոսի զարգացմանը խոչընդոտելու և հեղափոխության թշնամի լինելու մեջ:

Անհատի պաշտամունքի կառուցարկումը հանգեցրեց Նասերի նկատմամբ ժողովրդական մեծ համակրանքի, և դրա դրսևորումներից մեկն էլ 1956 թվականի հունիսի նախագահական ընտրություններն էին, որտեղ Նասերը հաղթեց՝ ստանալով ձայների 99,9 տոկոսը[16]:

Եգիպտոսը հետհեղափոխական արաբական հանրապետություններում անհատի պաշտամունքի կառուցարկման և կիրառման հիմնական օրինակն է: Եգիպտոսի օրինակին հետևելով, ռազմական էլիտայի ղեկավարման տակ գտնվող մյուս հանրապետությունների առաջնորդները որդեգրեցին անհատի պաշտամունքի կառուցարկման միջոցով լեգիտիմություն ստեղծելու քաղաքականությունը, որը միջոցով երկրի առաջնորդը ներկայացվում էր որպես հեղափոխության, պետության անկախության պաշտպան և ազգի մարմնացում: Խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման հիմնական մեխանիզմ շարունակում էին լինել հանրային վայրերում տեղադրված առաջնորդի մեծամասշտաբ պատկերները, թղթադրամների և մետաղադրամների վրա առաջնորդին պատկերելը, և այլ միջոցներ[17]:

Անկախություն ձեռք բերելուց հետո մերձավոր արևելքում ռազմական ռեժիմների պայմաններում հասարակության մեջ բանակը կենտրոնական դիրք էր զբաղեցնում: Այս երկրներում հասարակության մեջ ոչինչ ավելի կարևոր չէր, քան բանակը[18]:

Հղումներ

1- M. E. McMillan, From the First World War to the Arab Spring. What's Really Going On in the Middle East?. 2016, London, p 167.
2- Նույն տեղում՝ էջ 167:
3- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 168:
4- Նույն տեղում՝ էջ 168:
5- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 169:
6- Նույն տեղում՝ էջ 169:
7- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 170:
8- Նույն տեղում՝ էջ 170:
9- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 170:
10- Նույն տեղում՝ էջ 170.
11- Նույն տեղում՝ էջ 171:
12- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 172.
13- Նույն տեղում՝ էջ 174:
14- Նույն տեղում՝ էջ 174:
15- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 174.
16- Նույն տեղում՝ էջ 174-175:
17- M. E. McMillan, նույն աշխատության էջ՝ 177.
18- Նույն տեղում՝ էջ 180:

1921 թ. Կարսի «պայմանագրի» պատմաիրավական գնահատականը

Արմեն Մարուքյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բոլշևիկյան Ռուսաստանը չհապաղեց կատարելու «Բարեկամության և եղբայրության մասին» Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագրի 15-րդ հոդվածով Թուրքիային տված իր խոստումը: Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում հրավիրված կոնֆերանսում ստորագրվեց փաստաթուղթ մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Այն, որ Ռուսաստանն արդեն սկսել էր կատարել Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը և ճնշում էր գործադրում Հայաստանի վրա, որ պայմանագիր կնքի թուրքերի հետ, վկայում է այն մասին, որ բոլշևիկներն արդեն իսկ վավերացրել և ուժի մեջ էին մտցրել քեմալականների հետ կնքած մոսկովյան գործարքը: Կարսում ստորագրված «պայմանագիրը», փաստորեն, Մոսկվայի պայմանագրի ածանցյալն էր: Զևական բնույթ կրող այդ փաստաթղթով Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրենց ապօրինի գործարքին «իրավական տեսք» տալ[1]: Պետք է նշել, սակայն, որ Խորհրդային Ռուսաստանի կողմից Խորհրդային Հայաստանի նկատմամբ ճնշումների գործադրումը հակասում էր միջազգային իրավունքի պահանջներին, որոնք հետագայում կոդիֆիկացվեցին (համակարգվեցին) «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թ. Վիեննայի կոնվենցիայով: Հիշյալ կոնվենցիայի 52-րդ հոդվածում հստակ արձանագրված է. «Պայմանագիրն առ ոչինչ է, եթե դրա ստորագրումը ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք է՝ ի խախտումն միջազգային իրավունքի այն սկզբունքների, որոնք տեղ են գտել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ»[2]:

Կարսում հրավիրված կոնֆերանսի ընթացքում Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև «պայմանագիրը» ստորագրվեց Խորհրդային Ռուսաստանի կողմից լիազորված անձի՝ Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Յակով Գանեցկու մասնակցությամբ[3], որի կարգավիճակն այս գործընթացում իրավական տեսանկյունից հստակեցված չէր: Խորհրդային Ռուսաստանը Կարսի պայմանագրի ոչ պայմանավորվող և ոչ էլ միջնորդ կողմ չէր հանդիսանում, ուստի Կարսի «պայմանագրի» ստորագրմանը Գանեցկու մասնակցությունը կարող է բացատրվել միայն Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով Ռուսաստանի ստանձնած պարտավորությամբ: Գանեցկու չճշտված կարգավիճակը հիմք է տալիս կարծելու, որ նա Մոսկվայի հրահանգով Կարս էր ուղարկվել՝ վերահսկելու Հայաստանի ներկայացուցիչների՝ Ա. Մռավյանի և Պ. Մակինցյանի գործողությունները, որպեսզի Մոսկվայում կնքված քեմալա-բոլշևիկյան գործարքի պայմանավորվածությունները որևէ կերպ չխախտվեին: Կարսի կոնֆերանսի ընթացքում Հայաստանի ներկայացուցիչների վրա ներգործությունը նույնպես միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում էր: Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, այդ համաձայնությունն իրավական ուժ ունենալ չի կարող[4]:

Խորհրդային Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը Մոսկվայի պայմանագրի ստորագրումից մինչև Կարսի կոնֆերանսի հրավիրումը անընդհատ ներշնչում էր այն միտքը, որ Հայաստանի ու հայ ժողովրդի համար Մոսկվայի և Կարսի պայմանագրերը «չարյաց փոքրագույնն» են, և դա Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ փրկության միակ հնարավորությունն է, քանզի դաշնակցական կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով արդեն իսկ տարածքային մեծ զիջումներ էր արել թուրքերին[5]: Այս թեզը փորձում էին «հիմնավորել» նաև Կարսում ստորագրված փաստաթղթի 1-ին հոդվածով, որով չեղյալ էին համարվում մինչ այդ ստորագրված երկկողմ պայմանագրերը[6]. այս առումով նախ և առաջ նկատի էր առնվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Այս առիթով պետք է նշել, որ, անկախ Կարսի փաստաթղթում հիշյալ կետի ամրագրումից, Ալեքսանդրապոլի պայմանագիրը չուներ և չէր կարող ունենալ իրավական ուժ հետևյալ պատճառներով.

1. Պայմանագիրը հայկական կողմից ստորագրվել էր մինչ այդ Երևանի պայմանագրով իշխանությունը Հայհեղկոմին փոխանցած կառավարության ներկայացուցիչների կողմից, որոնք այլևս իրավասու չէին այն ստորագրելու:

2. Պայմանագիրը ստորագրվել էր թուրքական զորքերի հետագա առաջխաղացման վերջնագրի, այսինքն՝ ուժի սպառնալիքի պայմաններում, և խախտվել էր հայկական կողմի ինքնորոշման և ազատ կամարտահայտության իրավունքը:

3. Պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթի վավերագրերը պետք է փոխանակվեին մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել[7]:

Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անօրինական լինելուց բացի, անգամ չէր մտել օրինական ուժի մեջ: Չպետք է մոռանալ, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը նաև Հայաստանի նկատմամբ քեմալա-բոլշևիկյան փոխհամաձայնեցված ռազմաքաղաքական ճնշումների հետևանք էր: Մոսկվայի կոնֆերանսից մինչև Կարսի կոնֆերանսն ընկած ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլի պայմանագրի փաստարկով Հայաստանի ներկայացուցիչներին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի խախտում էր: Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածով պայմանագիրն առ ոչինչ է համարվում, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեությամբ կամ ապակողմնորոշմամբ[8]:

Կարսի փաստաթուղթը բառացիորեն կրկնում ու վերարտադրում է Մոսկվայի պայմանագրի հոդվածները՝ այդ կերպ փորձելով «օրինականացնել» Մոսկվայի քեմալա-բոլշևիկյան գործարքը: Հատկանշական է, որ Կարսի «պայմանագրի» կողմ չհանդիսացող Խորհրդային Ռուսաստանն ավելի շուտ վավերացրեց տվյալ փաստաթուղթը (1922 թ. մարտի 16), քան դրա կողմ հանդիսացող Խորհրդային Հայաստանը (1922 թ. մարտի 20)[9]:

Թվարկված կոպիտ խախտումների համակցությունը հիմք է տալիս պնդելու, որ միջազգային իրավունքի տեսանկյունից Կարսում ստորագրված փաստաթուղթը պայմանագիր համարվել չի կարող, այլ պետք է դիտարկվի որպես Մոսկվայի անօրինական գործարքի հավելված:

Քանի որ Կարսում ստորագրված դե յուրե անօրինական փաստաթղթի հիման վրա են իրականացվել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումն (դելիմիտացիա) ու սահմանանշումը (դեմարկացիա), ուստի հարկ ենք համարում միջազգային իրավունքի տեսանկյունից քննության առնել դրա հոդվածներն ու դրույթները:

Փաստաթղթի 1-ին իսկ հոդվածով, մինչ այդ պայմանավորվող կողմերի միջև ստորագրված փաստաթղթերից բացի, ուժը կորցրած են ճանաչվում նաև անդրկովկասյան հանրապետություններին վերաբերող երրորդ երկրների կողմից կնքված պայմանագրերը[10]: Սույն հոդվածի ձևակերպումներից

Կարսի բանակցությունները

հասկացվում է, որ փորձ էր արվում չեզոքացնելու Սևրի պայմանագիրը, առավել ևս, որ բացառություն է արվում միայն Կարսում ստորագրված փաստաթղթի հիմքում դրված Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի համար[11]:

Տվյալ հոդվածին, սակայն, տրամագծորեն հակասում է նույն փաստաթղթի 2-րդ հոդվածը, որով «Թուրքիան համաձայնվում է չճանաչել որևէ միջազգային պայմանագիր կամ ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ադրբեջանին ու Վրաստանին և ճանաչված չէ այդ երկրների կառավարությունների կողմից, որոնք այսօր ներկայացնում են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի խորհուրդներին»[12]: Խորհրդային Հայաստանը Մոսկվայի պայմանագիրը փաստացի ճանաչել է միայն Կարսի պայմանագրի ստորագրումով, իսկ մինչ այդ պահը Հայաստանը ոչ միայն չի ճանաչել Մոսկվայի պայմանագիրը, այլև բողոք է ներկայացրել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծել իր տարածքային հարցերը: Հայաստանի արտգործկոմ և պատվիրակության ղեկավար Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին այդ կապակցությամբ հայտարարություն է ուղղել Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինին: 1921 թ. մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին[13]:

Վերը նշվածից հետևում է, որ, ելնելով Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածից, Թուրքիան պետք է անվավեր ճանաչեր նաև Մոսկվայի պայմանագիրը, ուստի ոչ իրավաչափ էր Կարսի փաստաթղթի 1-ին հոդվածով Մոսկվայի պայմանագրի համար բացառություն անելը: Ավելին՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը կրկնում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը, որով պայմանավորվող կողմերը համաձայնում են չճանաչել ոչ մի պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից

մեկին հարկադրել են այն ընդունել[14]: Մոսկվայի պայմանագրում 15-րդ հոդվածի առկայությունը Հայաստանի նկատմամբ հարկադրանքի ամենացայտուն արտահայտությունն է, որը հստակ դրսևորվեց Կարսի կոնֆերանսի ընթացքում: Այսպիսով՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի դրույթները, փաստորեն, ոչ միայն չեզոքացնում են Կարսի պայմանագրի հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը, այլև իմաստազրկում են հենց Կարսում ստորագրված փաստաթուղթը: Հոդվածների միջև առկա այս հակասությունները խոսում են այն մասին, որ գործարքի նախաձեռնողները՝ քեմալականներն ու բոլշևիկները, ո՛չ Մոսկվայում և ո՛չ էլ առավել ևս Կարսում առանձնապես ջանք չեն գործադրել ո՛չ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ո՛չ էլ անգամ տրամաբանության տարրական կանոնները պահպանելու հարցում: Նրանք ձգտել են ժամ առաջ «օրինականացնելու» Մոսկվայում կայացած գործարքը Կարսում Հայաստանի ներկայացուցիչների ստորագրությամբ:

Պետք է նշել նաև, որ Թուրքիան ոչ միայն չի կատարել, այլև կոպտորեն խախտել է Կարսի փաստաթղթով իր ստանձնած մի շարք պարտավորություններ: Այսպես, համաձայն 14-րդ հոդվածի, պայմանավորվող կողմերը պարտավորվում էին Կարսի փաստաթղթի ստորագրման օրից հաշված 6 ամսվա ընթացքում կնքել 1918-1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին վերաբերող հատուկ համաձայնագիր[15]: Ընդ որում, փաստաթղթի 20-րդ հոդվածով նշված պարտավորությունն ուժի մեջ էր մտնում ոչ թե վավերագրերի փոխանակման պահից, այլ անմիջապես փաստաթղթի ստորագրման պահից[16]: Թուրքիան, ըստ նշված հոդվածների, մինչև 1922 թ. ապրիլի 13-ը Հայաստանի հետ պետք է կնքեր գաղթականներին վերաբերող հատուկ համաձայնագիր: Բնական է, որ Թուրքիան նշված պայմանագրի ստորագրման ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկել, որի ընթացքում ծագելու էին հայ գաղթականների իրավունքների վերականգնման ու հատուցման բազում հարցեր, որոնք չէին բխում քեմալականների շահերից: Թուրքական կողմն արդեն իսկ «լուծել էր» իր գերխնդիրը. Կարսի կոնֆերանսում Մոսկվայի գործարքին տրվել էր օրինական տեսք:

Ստանձնած պարտավորությունները չկատարելուց բացի՝ Թուրքիան նաև խախտել է Կարսի փաստաթղթի որոշակի հոդվածներ ու դրույթներ: Այսպես, 10-րդ հոդվածի համաձայն, որը Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի կրկնությունն է, կողմերը պարտավորվել են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարումն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ[17]: Ակնհայտ է, որ բոլշևիկների ու քեմալականների համար փոխշահավետ այս դրույթն ուղղված էր Խորհրդային Հայաստանում

ազգային կուսակցությունների և առաջին հերթին ՀՅ Դաշնակցության գործունեության վերականգնումը բացառելուն: Պետք է նշել, սակայն, որ Թուրքիան իր տարածքում ոչ միայն թույլ է տվել հակահայկական կառույցների առաջացումը՝ ի դեմս «Գորշ գայլերի» և ազգայնական ու իսլամիստական բնույթի այլ կազմակերպությունների, այլև մինչ օրս հովանավորում է դրանց գործունեությունը՝ ծառայեցնելով իր համաթուրանական նպատակների իրագործմանը:

Կարսի փաստաթղթի 17-րդ հոդվածով կողմերը պարտավորվել են «առանց որևէ կասեցումների ապահովել մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը»[18]: Մինչդեռ Թուրքիան 1993 թվականից առ այսօր իրականացնում է Հայաստանի շրջափակումը՝ միակողմանիորեն փակելով սահմանը, ինչով խախտում է Կարսի փաստաթղթի համապատասխան հոդվածը: Բացի այդ, Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի, Արաքսի գոտուն վերաբերող դրույթների համաձայն, Թուրքիան պարտավորվել է Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղուց 8 և 4 վերստ հեռավորության վրա գտնվող գծերով սահմանված գոտիներում չպահել կանոնավոր զորքեր[19]: Այս դրույթները թուրքական իշխանությունները խախտեցին նախ 1942 -1943 թթ., երբ զորքեր էին կուտակել հայ-թուրքական սահմանին և սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի ելքին՝ Հայաստան ներխուժելու նպատակով: Արցախյան պատերազմի ընթացքում՝ 1993 թ., Թուրքիան չբավարարվեց միայն Հայաստանի շրջափակումով, այլ կատարեց հակաօրինական հերթական քայլը՝ դիմելով «ուժի ցուցադրության»՝ սահմանի մոտ թուրքական կանոնավոր զորքեր տեղակայելով:

Թուրքիայի՝ Կարսի փաստաթղթի դրույթները խախտելու փաստերի արձանագրումից հետո հարկավոր է պարզել, թե միջազգային իրավունքի շրջանակներում իր խախտված իրավունքները վերականգնելու համար որոնք կարող են լինել Հայաստանի հնարավոր գործողությունները:

Հիմք ընդունելով Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 49-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեությամբ կամ ապակողմնորոշմամբ,

51-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է այն դեպքում, երբ պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, և 52-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե դրա ստորագրումը ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք է, Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության կողմից կարող է համարվել առ ոչինչ: Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետով՝ առ ոչինչ համարվող պայմանագրերն իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրն առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49-րդ, 50-րդ, 51-րդ կամ 52-րդ հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ[20]: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցվելու դեպքում Թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների առնչությամբ: Տվյալ պարագայում Հայաստանը պարտավոր կլինի այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմանագրի մյուս մասնակիցներին՝ Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է ոչ միայն նշված լինեն նման քայլի հիմքերը, այլև առաջարկություններ ներկայացվեն պայմանագրի ապագայի վերաբերյալ[21]: Կարսի փաստաթղթի մասնակիցները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեն Հայաստանի գրավոր ուղերձին, իսկ կողմերի միջև հակասություններ ծագելու դեպքում հարցի լուծումը պետք է հանձնվի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին:

Սակայն այս հարցում Վիեննայի կոնվենցիայի դրույթներով առաջնորդումն ու դրանց հիման վրա Կարսի փաստաթղթի առ ոչինչ հայտարարումն անուղղակիորեն կնշանակի, որ մինչ այդ քայլն անելը մենք փաստորեն ընդունել էինք դրա օրինականությունը: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այս հարցում կարող է ելնել «Tabula rasa» («մաքուր թղթի») սկզբունքից և առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում և դառնում ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս միայն նրա կողմից վավերացվելուց հետո[22] , ինչը նշանակում է, որ ՀՀ-ի կողմից չվավերացված Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունի:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ էստոպելի սկզբունքին, ապա այս հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որում նշվում է, որ պայմանագիրը չեղյալ համարելու կամ վերանայելու պահանջի ժամկետները համարվում

Կարսում թանգարանի է վերածվել այն վագոնը, որում 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրվել է չարաբաստիկ պայմանագիրը

են բաց թողնված այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնել է կատարված փաստի հետ: Իսկ երբ կողմը որոշակի գործողությունների միջոցով՝ հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն, հայտնում է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը[23]: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի առումով վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Խորհրդային Հայաստանը դեռ 1921 թ. ապրիլի 15-ին է բողոք ներկայացրել Կարսի փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ հետագայում՝ 1945 թ. հուլիսի 22-ին՝ Պոտսդամի կոնֆերանսի՝ կառավարությունների ղեկավարների վեցերորդ նիստի ժամանակ, ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի ու Վրաստանի անունից տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ՝ պահանջելով վերադարձնել Կարսն ու Արդահանը[24] , ինչը պետք է համարել Կարսի փաստաթղթի վիճարկում:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ Կարսում ստորագրված փաստաթղթի ընդունման (հատկապես Հայաստանի կողմից) հարցը բավականին արդիական էր նաև հայթուրքական վերջին արձանագրություններում: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրության մեջ նշվում էր, որ ստորագրող կողմերը վերահաստատում են երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով: Արձանագրության տեքստում սահմանի փոխադարձ ճանաչումը ոչ թե հաստատելու, այլ վերահաստատելու հանգամանքի ընդգծումը մեխանիկորեն առաջ է

քաշում հենց Կարսի փաստաթղթի վերջնական ճանաչումը, քանզի «փաստացի գոյություն ունեցող հայթուրքական սահմանի հարցը կարգավորող» այլ փաստաթուղթ ուղղակի չկա:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի համար Կարսի փաստաթղթի հետևանքների չեզոքացման որևէ քայլ կատարելուն պետք է նախորդի նախապատրաստական լուրջ աշխատանք՝ հաշվի առնելով նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները: Գաղտնիք չէ, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքներն ազդեցիկ տերությունները ծառայեցնում են իրենց շահերին ու նպատակներին՝ երբեմն նաև խախտելով կամ իրենց ձեռնտու ձևով մեկնաբանելով դրանք: Եվ եթե նույնիսկ նրանք միջազգային հարաբերություններում իրենց կատարած գործողությունները ձգտում են հիմնավորելու միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով, ապա Հայաստանի Հանրապետությունն առավել ևս չպետք է իրեն շռայլություն թույլ տա՝ հրաժարվելով պաշտպանել ոչ միայն իր, այլև ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը, մանավանդ որ մեր հարևանները վաղուց այդ իրավունքը խեղաթյուրված ձևով օգտագործում են մեր դեմ: ■

Հղումներ

1- Տես Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, Համազգայինի Վահե Սեթեան տպարան, 1976, էջ 107:
2- Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., изд. Юрид. лит., 1982, с. 86.
3- Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828 -1917) (այսուհետ՝ Հայաստանը .... փաստաթղթերում), խմբ.՝ Ջ. Կիրակոսյան, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 518:
4- Տես Международное право в документах, էջ 86:
5- Տես Հայաստանը .... փաստաթղթերում, էջ 770:
6- Տես նույն տեղում, էջ 518:
7- Տես Թորիկեան Շ., նշվ. աշխ., էջ 107:
8- Տես Международное право в документах, էջ 86:
9- Տես Խաչատրյան Կ., ՀԽՍՀ սահմանների հարցը 1921թ. խորհրդաթուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2010, N 1-2, էջ 55:
10- Տես Հայաստանը .... փաստաթղթերում, էջ 518:
11- Տես նույն տեղում, էջ 518-519:
12- Նույն տեղում:
13- Տես Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 215:
14- Տես Հայաստանը .... փաստաթղթերում, էջ 519:
15- Տես նույն տեղում, էջ 522:
16- Տես նույն տեղում:
17- Տես նույն տեղում, էջ 521:
18- Նույն տեղում, էջ 523:
19- Տես նույն տեղում, էջ 526:
20- Տես Международное право в документах, էջ 92:
21- Տես Հայաստանը .... փաստաթղթերում, էջ 91:
22- Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2005 թ. նոյեմբերի 27-ին, հոդված 6, էջ 9 -10:
23- Տես Международное право в документах, էջ 85:
24- Տես Դաշնակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Եր., 1989, էջ 168:
25- Տես Հայթուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ 19 -20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 440:



Հայաստանը ըստ Կարսի պայմանագրի

Կարսից Արցախ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայոց բազմադարյա պատմության մեջ ողբերգական, բայց առավել ամոթալի ամսաթվերից մեկը 1920 թ. հոկտեմբերի 30-ն է, այն օրը, երբ թշնամուն հանձնվեց Հայաստանի Հանրապետության գոյության համար կարևոր պատվար Կարս բերդաքաղաքը: Ինչու և ինչպես ընկավ Կարսը՝ շատ է խոսվել, հատկապես վերջին 30 տարվա ընթացքում:

Այն մասին, որ Կարսի անկման գլխավոր պատճառը դասալքությունն էր, խոսվել է բազմիցս, և որ այդ դասալքության քարոզին լծված էին հայ բոլշևիկները, նույնպես փաստ է, բայց որ ժողովուրդն ու զինվորականությունը չգիտակցեցին Կարսի կարևորությունը Հայաստանի Հանրապետության հետագա գոյության և հենց ի՛ր՝ հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության համար, քիչ է խոսվում: Ինչո՞ւ և ինչպե՞ս Սարդարապատում ավելի ծանր պայմաններում հաղթանակ տարած ժողովուրդը հրաժարվեց կռվել Կարսի համար...

Պատմական դառը ճշմարտությունն այն է, որ բերդաքաղաքի պաշտպանության կոչված հայկական զորքի երիտասարդ հրամանատարը՝ գնդապետ Մազմանյանը, հակագրոհի հրահանգ էր տվել իր զինվորներին, որոնք, սակայն, հրաժարվեցին ենթարկվել իրենց հրամանատարին ու... դիմեցին դասալքության: Այս մասին Ս. Վրացյանը գրում է. «....Համաձայն տրված հրամանի, հոկտեմբերի 30-ի առավոտյան մեր զորքերը պիտի անցնեին հակահարձակման.... Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը և տեղից չշարժվեց: Հուսահատ և անզոր գնդ. Մազմանյանը ամենքի աչքի առաջ մաուզերի երկու գնդակից ինքնասպանություն գործեց....»[1]: Սակայն անգամ պատվախնդիր սպայի ինքնասպանությունը հայոց զորքին չսթափեցրեց, և նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, Կարսն ընկավ, ինչն էլ իր կնիքը դրեց հետագա իրադարձությունների վրա, որոնք Հայաստանի համար աղետալի էին:

Կարսի անկումը շղթայական ռեակցիայի ազդեցություն ունեցավ, և մի քանի օր անց՝ նոյեմբերի սկզբներին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Լիակատար ջախջախումից խուսափելու և քիչ թե շատ պատվաբեր հաշտություն կնքելու համար նոյեմբերի 18-ին կողմերի միջև վերջնական զինադադար կնքվեց, և դադարեցվեցին ռազմական գործողությունները: Իսկ դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը իշխանությունը հանձնեց բոլշևիկներին՝ վայր դնելով իր լիազորությունները:

Թվում էր, թե Կարսում էին հավաքվել հայրենասեր բազմաթիվ հայ երիտասարդներ, բայց «Այդ «հայրենասեր» հայ երիտասարդները, հայտնվելով դիրքերում, վճռական պահին նախ սկսում էին գոռալ, թե. «....Մեր ընկեր բոլշևիկների դեմ մենք կռվել չենք ուզում, եկող թուրքերը մեր ընկերներն



են», հետո ցուցադրաբար գցում էին զենքը և դիմում փախուստի, հորդորելով մյուս զինվորներին հետևել իրենց օրինակին»[2]: Հայկական բանակի վրա, ինչպես արդեն ասացինք, իր ազդեցությունն էր ունեցել հայ բոլշևիկների քայքայիչ քարոզչությունը, որի նպատակն էր ամեն կերպ հասնել Հայաստանի Հանրապետության պարտությանը: Դրա մասին է վկայում նաև նրանց հղված «Հույժ գաղտնի» վերնագրված հեռագիրը, որն այսօր պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այդ հեռագրում կարդում ենք. «Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում.... ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝ Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի: Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի): Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացումը: Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է.

Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, դրանք են. ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը

վերադառնան թիկունք, գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց: Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից: Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիշտ կկապվի Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի:

Ծանոթություն - Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել:

Հայաստանի կոմ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան: Նո. 218, Բաքու, 1920 ՍԵՊ. 20»[3]:

Հայ բոլշևիկները, իհարկե, պարտաճանաչորեն գլուխ բերեցին իրենց հանձնարարված գործը: Հոկտեմբերի 31-ին թուրքերը Կարսում էին… Ներխուժելով Կարս՝ թուրքերը, ինչպես բնորոշ է իրենց, իսկական կոտորած կազմակերպեցին: Այդ օրերին գերված Ա. Բաբալյանի վկայությունն է մեզ փոխանցում Ս. Վրացյանը. «….Հայերը ենթարկվում էին կոտորածի, գեղեցիկ կանայք տարվում էին հարճության, տղամարդիկ քշվում էին Թուրքիայի ներսը: …Մեր գերության հինգերորդ օրը մեզ այցելեցին չորս հայեր՝ ուղեկցությամբ մի քանի տաճիկ սպաների, զարդարված կարմիր լաթերով: Կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պտտում էին հանրակացարանները և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին: Հեղկոմների անդամներ էին….»[4]: Հանուն արդարության պետք է ասենք նաև, որ Կարսի անկման մեջ իր մեղքի բաժինն ուներ նաև ռազմաճակատի հրամանատարությունը, որը անհեռատեսություն դրսևորեց և շուրջ 2500 արևմտահայ զինվորներին, որոնք չէին ընդունում ոչ թուրքերին, ոչ էլ բոլշևիկներին, Կարս քաղաքում կենտրոնացնելու փոխարեն, բաշխեց ռազմաճակատով մեկ, մինչդեռ նրանք կարող էին Կարս քաղաքում լուրջ դիմադրող ուժ լինել թուրքերի դեմ: Բացի այդ՝ վճռական պահին դեպի Կարս արշավող Կարաբեքիրի զորքին թիկունքից հարված չհասցրեց գնդապետ Հասան Փաշայանի զորամասը, կրավորական կեցվածք էր ընդունել Կարսի բերդի շտաբի պետ Վահան Տեր-Առաքելյանը, և այս համապատկերում իր բարձունքում չէր նաև ժամանակի ամենահեղինակավոր զինվորականներից մեկը՝ գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը: Կարսի հանձնումից կարճ ժամանակ անց թուրքերի ձեռքն անցավ նաև Ալեքսանդրապոլը, ինչն առաջ բերեց հայ բոլշևիկների անզուսպ ոգևորությունը, որի մասին վկայում է թուրքերին ուղղված նրանց ողջույնի խոսքը. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր

Կարսի բերդը

գյուղացիությունը՝ ազատված հայկական դարավոր լծից, հղում է եղբայրական և սրտալի ողջույնը Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը… Կեցցե Թուրքիայի կոմ. կուսը: Կեցցե Կարմիր հեղափոխական Արևելյան բանակը: Կեցցե կոմունիզմը: Կեցցե Սովետական Հայաստանը:

Ար. Տեր-Մարտիրոսյան, Մկ. Խաչիկյան

Նոյեմբեր 1920»[5]:

Կարսի հանձնումը չափազանց ծանր նստեց Հայաստանի վրա. նախ՝ երկիրը կորցրեց իր անկախությունը, ապա՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Հայաստանը զրկվեց մի շարք տարածքներից, նույն թվականի հուլիսի 5-ին Արցախը ապօրինաբար կցվեց Ադրբեջանին, Կարսի պայմանագրով Նախիջևանն արդեն տրվել էր այդ երկրին, Հայաստանին մնաց միայն Զանգեզուրը, այն էլ՝ Նժդեհի գլխավորությամբ մղված երկարատև ու հերոսական պայքարի շնորհիվ:

Կարսի ամոթից 100 տարի անց, թվում էր, թե հայ ժողովուրդը, Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը դասեր են քաղել այդ ողբերգական իրադարձություններից, բայց… Հայոց պատմության մեջ ոչ պակաս աղետալի ու ամոթալի էր 2020 թ. նոյեմբերի 9-ը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Արցախի Հանրապետության վրա: 44 օր հայկական բանակն ու կամավորները կենաց-մահու կռիվ էին տալիս հայրենիքի պաշտպանության համար, իսկ նրանց թիկունքում երկրի քաղաքական ղեկավարությունը գաղտնի գործարքների մեջ էր դարավոր թշնամու հետ: «Դրօշակ»-ի 2020 թ. 10-րդ համարում հրապարակված Կարսի անկմանը նվիրված մեր հոդվածում գրել էինք. «Այսօր Հայաստանի մերօրյա հանրապետության համար 1990-ականներին ազատագրված Արցախն ունի նույն կարևորությունը, ինչ Առաջին հանրապետության համար Կարսը, և, ցավոք սրտի, այսօր էլ կան հասարակական ու քաղաքական շրջանակներ, որոնք շարունակական քարոզչություն են տանում այն ուղղությամբ, որ «այս թուրքը նախկին թուրքը չէ», «թուրքը բարեկամ է»՝ այս կոչերը համեմելով

չափազանց գայթակղիչ խաղաղության խոստումով՝ միաժամանակ ծաղրելով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարն ու վտանգավոր համարելով ազգ-բանակ հայեցակարգը»[6]:

44 օր հաղթանակի վերաբերյալ հավաստիացումներ լսող հանրությանը հոկտեմբերի 29-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը դիմեց Շուշին պաշտպանելու կոչով. «Թշնամին գրտնվում է այստեղից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, և գերնպատակն է գրավել Շուշին, տիրանալ Շուշիին, ինչպես ասում են՝ ով տիրում է Շուշիին, տիրում է Արցախին, և ուզում եմ, որ գիտակցենք այս պահը»,- նշեց Հարությունյանը՝ կոչ անելով միավորվել ու միանալ Շուշիի պաշտպանությանը:

Ըստ նրա՝ ադրբեջանական ուժերը լրջագույն ռազմական ռեսուրս են ներդրել Շուշիի ուղղությամբ. - «Որպես Արցախի գերագույն գլխավոր հրամանատար՝ ևս մեկ անգամ կոչ եմ անում՝ միացեք, միասին պաշտպանենք մեր Շուշին, մեր Արցախը, մեր ազգային արժանապատվությունը»,- հորդորեց Արցախի նախագահը՝ շեշտելով, որ սա ոչ թե խուճապային ելույթ է, այլ հակառակը՝ ինքը հավատում է հաղթանակին»[7]:

Բերդաքաղաք Շուշիի պաշտպանությունը, ըստ պաշտոնական տվյալների, տևեց մինչև նոյեմբերի 9-ը: Մի կողմից Շուշին պաշտպանելու կոչ անող ու կամավորներ, ոստիկանական զորք և զինվորներ Շուշի ուղարկող իշխանությունը մյուս կողմից Շուշիի պաշտպանների թիկունքում այն հանձնել էր թշնամուն: Արցախի դավադրաբար հանձնումը կատարվեց Հայաստանի՝ թշնամու ձեռքին հայ բոլշևիկներից ոչ պակաս գործիք դարձած իշխանության ձեռքով, որի ղեկավարը 2020 թ. նոյեմբերի 9-ին հերոսաբար կռվող բանակի և նրա մեջքին ամուր կանգնած հայության թիկունքում դավադիր գործարքի մեջ մտավ թշնամու հետ և կապիտուլյացիոն համաձայնագիր ստորագրեց:

2020 թ. նոյեմբերի 9-ին հայ ժողովրդի թիկունքում կնքվեց, այսպես կոչված, հրադադարի համաձայնագիր, որը ստորագրեցին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն 1994 թ. մայիսի 12-ի զինադադարի պայմանագրի՝ Արցախի Հանրապետությունը նոյեմբերի 9-ի փաստաթղթի կողմ չէ, և, ի տարբերություն մայիսի 12-ի զինադադարի պայմանագրի, նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությանը դրեց ծանր դրության մեջ, Արցախի Հանրապետությունը կորցրեց իր տարածքի 75 %-ը, որի մեծ մասը պարզապես հանձնվեց թշնամուն: Այդ փաստաթղթում սահմանված է հետևյալը. «1. 2020 թվականի նոյեմբերի 10-ի մոսկովյան ժամանակով 00:00-ից Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հայտարարվում է ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին: Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

Գնդապետ Մազմանյանը

2. Ադդամի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով և Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբ, այդ թվում՝ հրաձգային զենքով զինված 1960 զինծառայող, 90 զրահամեքենա, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկա:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվում է Հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը տեղակայվելու է 5 տարի ժամկետով, որը ինքնաբերաբար երկարաձգվելու է հերթական 5-ամյա ժամկետով, եթե միայն Կողմերից որևէ մեկը տվյալ ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի սույն դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության Կողմերի կողմից համաձայնագրերի կատարման վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հրադադարի ռեժիմը վերահսկելու համար ստեղծվում է խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետությանը վերադարձնում է Քելբաջարի շրջանը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, ընդ որում շրջանցելով Շուշի քաղաքը, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար:

Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում

է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային և բեռնատար միջոցների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք և փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ:

8. Տեղի է ունենում ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ու մահացածների մարմինների փոխանակում:

9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները:

Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը»[8]:

Այս փաստաթղթով Հայաստանը ոչ միայն կորցրեց Արցախի տարածքի 75 %-ը, այլև թուրքը, ավելի քան հարյուր տարի առաջ նախ Արամի, հետո Նժդեհի շնորհիվ վիժեցված պանթուրքիզմի ծրագրին հետամուտ, հայտնվեց իր համար անհասանելի երազանք դարձած Զանգեզուրում: Շուշիի և Արցախի կորստով Հայաստանի Հանրապետությունը կանգնած է կործանման վտանգի առաջ, քանի որ Հայաստանի Հանրապետության դարպասները բացված են թշնամու առաջ, թշնամին, փաստորեն, նոյեմբերի 9-ից հետո առանց ջանք թափելու ստանում է այն ամենը, ինչ ուզում է՝ Սոթք, Որոտան, Երասխ, Նոր Այգեձոր, Կութ, և ՀՀ այլ գյուղերին իշխող բարձունքները առանց դիմադրության հանձնվել են թշնամուն: Այս ամենով չբավարարվելով՝ թշնամին պահանջում է միջանցք Մեղրիով, ինչը կկտրի Հայաստանի Հանրապետությունը Իրանի Հանրապետությունից և օղակի մեջ կվերցնի Հայաստանը:

Ինչ անել փրկելու համար Հայաստանի Հանրապետության մնացորդացը: Իհարկե, գլխավոր պայմանը պետական դավաճանություն գործած անձին պետության ղեկավարի պաշտոնից հեռացնելն է, ինչը, ինչպես տեսնում ենք, բավականին բարդ է, քանզի նա դեռ անելիքներ ունի թշնամու շահերը սպասարկելու տեսանկյունից, միաժամանակ հայ հասարակության մի որոշ հատված (թերևս արդեն ոչ մեծաթիվ) դեռևս չի ընկալել տեղի ունեցած ակնհայտ դավաճանության փաստը: Այնուամենայնիվ, հաշվարկված գործողությունների և ճիշտ քայլերի շնորհիվ դեռևս որոշակիորեն պահպանված

Շուշիի համայնապատկերը

պետական ինստիտուտների հիմքի վրա կարելի է կրկին ոտքի հանել հայկական պետականությունը, ինչը օրակարգային հարց է, և կարծում ենք՝ ոչ այնքան երկար ժամանակ անց հնարավոր կլինի ամբողջական իշխանափոխությամբ պետականության առողջացման, ինչու չէ, նաև վերականգնման գործընթացի սկիզբը դնել: Հայաստանի Հանրապետության հետագա գոյության համար անհրաժեշտ են ամուր Սյունիք և ապահով Արցախ, հետևաբար պետք է հնարավորինս արագ դասեր քաղել սխալներից և կանգնեցնել հայոց պետականության անկումը. հապաղելը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:

Ծանոթագրություններ

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 508-509:
2. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Ջինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64), էջ 317-318:
3. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
4. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 509:
5. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:
6. Մելքոնյան Ա., Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրոշակ», Եր., հոկտեմբեր, 2020, թիվ 10 (1644), էջ 44:
7. https://www.azatutyun.am/a/30919562.html.
8. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/.

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Աղբյուրներ

1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:
2. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:

բ) Գրականություն

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

գ) Մամուլ

1. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Ջինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64):
2. Մելքոնյան Ա., Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրոշակ», Եր., հոկտեմբեր, 2020, թիվ 10 (1644):

Արցախի անկախության 30-ամյա ուղին (2-րդ մաս)

Էդիկ Մինասյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ազատագրական պատերազմից հետո ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքն աշխուժացավ: 1991-1994 թթ. արցախյան ազատագրական պատերազմի տարիներին հանրապետությունում գործող բոլոր կուսակցությունները միակամ էին հաղթանակի հասնելու գործում, ուստի, անկախ գաղափարական տարաձայնություններից, գործեցին միասնաբար և հաղթանակի հասնելու վճռականությամբ:

Անցում կատարվեց բազմակուսակցական համակարգին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր Սահմանադրության ընդունումը, որը հաստատվեց 2006 թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով: ԼՂՀ Սահմանադրությունն ամրագրեց հայկական երկրորդ պետության իրավական հիմքերը:

Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց կրթական ու մշակութային նոր համակարգ: ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, համաձայն որի՝ հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվեր հայկական դպրոցներում: 1992 թ. վերակազմավորվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (1995 թվականից՝ Արցախի պետական համալսարան), որը հանրապետության կրթության և գիտության մայր հաստատությունն է: 2014-2015 ուսումնական տարվա դրությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունները 5-ն էին, որոնցից 2-ը՝ պետական, 3-ը՝ ոչ պետական: Պետական միջին մասնագիտական հաստատությունները 5-ն էին, որոնցում սովորողների թիվը 2014-2015 ուսումնական տարվա սկզբի դրությամբ 1619 էր:

ԼՂՀ-ում զարգանում էին նաև գրահրատարակչությունը և մամուլը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը վերանվանվեց «Արցախ», այնուհետև՝ «ԼՂ Հանրապետություն», ապա՝ «Ազատ Արցախ»: Հանրապետությունում սկսեցին լույս տեսնել նոր թերթեր: Հրատարակվում էին «Արցախ», «Գիտությունը և կրթությունը ԼՂՀ-ում», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսները: Հրատարակչական գործի զարգացման հետ ընդլայնվում էր գրադարանների ցանցը, ավելանում գրքային ֆոնդը: Լուրջ ուշադրություն էր դարձվում թանգարանների ստեղծմանը, արվեստի՝ թատերարվեստի, երաժշտության և պարարվեստի զարգացմանը, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանությանը[1]:

ԼՂՀ-ում գործում էին 18 թատերահամերգային

կազմակերպություններ: Արցախի արվեստի վարպետները ելույթներով հանդես են եկել ԱՊՀ և արտասահմանյան բազմաթիվ այլ երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում և այլուր:

Մշակութային համագործակցության կարևոր մասն են կազմել Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք-Արցախ մշակութային կապերը, որոնք իրականացվել են, օրինակ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի և շատ այլ ծրագրերի շրջանակներում:

Հանրապետության տարածքում հաշվվել են բազմահազար հուշարձաններ, որոնց զգալի մասը եկեղեցիներ ու խաչքարեր են: Հայ հնագետների պեղումների շնորհիվ հայտնաբերվեց Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտը (Արցախի Տիգրանակերտ), ինչը մեկ անգամ ևս փաստեց հայերի վաղնջական ներկայությունը, բնիկությունը Արցախում:

Բանակցային գործընթացը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ

2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ թուրք-հայկական Առաջին պատերազմում ձեռք բերված զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցային գործընթացները, որոնք դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Սակայն Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու պահանջներ: ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»[2]: Իսկ Լեռնային

Ղարաբաղի ղեկավարությունը բացառում էր որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից: ԼՂՀ-ն հանդես էր գալիս միմյանց նախապայմաններ չթելադրելու դիրքերից՝ առաջարկելով բանակցություններ սկսել կարգավիճակի սկզբունքային հիմքերի ճշտումից հետո: Միայն Ադրբեջան-Ղարաբաղ ուղղակի բանակցությունների միջոցով կարելի էր սահմանել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել խնդրի քաղաքական կարգավորման երկուստեք ընդունելի տարբերակ: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն չէր ճանաչում ԼՂՀ-ն որպես հակամարտող կողմ:

Արցախյան հարցն անցել է քննարկումների որոշակի ճանապարհ. 1992 թ.՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ), իսկ 1995 թ.՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) նիստերով, Հելսինկիի խորհրդաժողովում ընդունված՝ ԼՂ կարգավիճակի հարցը Մինսկում կազմակերպվելիք խորհրդաժողովում քննարկելու մասին որոշմամբ, այդ վեհաժողովը կազմակերպող, նախապատրաստող անդամ երկրների ներկայացուցիչների խմբի շրջանակներում:

1997 թվականից Արցախյան հարցը քննարկման դրվեց եռանախագահության անդամ երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջնորդությամբ:

1994 թ. հայկական կողմը ԵԱՀԿ բուդապեշտյան խորհրդաժողովում հանդես եկավ առճակատման կարգավորման օգտին՝ ներկայացնելով հայ-ադրբեջանական առճակատման օբյեկտիվ պատկերը և շեշտելով, որ Լեռնային Ղարաբաղը երբեք անկախ Ադրբեջանի մաս չի եղել: Բուդապեշտյան գագաթնաժողովում Լեռնային Ղարաբաղը օժտվեց հակամարտության լիարժեք և հավասար կողմի միջազգայնորեն ճանաչված մանդատով: ԵԱՀԿ Մինսկի խումբը մինչև 1997 թ. կեսերը նրան էր ուղարկում հակամարտության կարգավորման իր մշակած տարբերակները, որոնց վրա վետո դնելու իրավունք ուներ նաև ԼՂՀ-ն:

Խոսելով բանակցություններին Արցախի մասնակցության մասին՝ ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը գրում է. «Առաջին օրվանից ի վեր Հռոմում և Եվրոպայի այլ քաղաքներում, մինչև 1997 թ. Մոսկվայի հանդիպումը, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները ներկա են եղել բոլոր հանդիպումներին: Սակայն բոլոր այդ հանդիպումների ժամանակ ադրբեջանցիները ղարաբաղյան կողմի ներկայությունը համարել են ԼՂ համայնքի մասնակցություն և ապահովել են իրենց համարժեք ներկայացուցչի ներկայությունը:

Ադրբեջանը երբեք չէր ընդունում, որ Լեռնային Ղարաբաղը առանձին և հավասար բանակցային կողմ է՝ հակառակ մեր պնդումներին: Այդ գործընթացի վերջին հանդիպումը տեղի ունեցավ 1997 թ. մարտին: 1993 թվականից ի վեր մինչև 1997 թ. մարտը բոլոր հանդիպումներում Հայաստանը ներկայացնում էի

Արցախյան բանակցություններ

ես: Մի խոսքով, 1998 թ. ապրիլին, երբ Ռ. Քոչարյանը ստանձնեց նախագահի պաշտոնը, այն գործընթացը, որին ԼՂՀ-ն ունեցել է ֆիզիկական մասնակցություն, դադարել էր»[1],- եզրափակում է նախարարը:

Ինչ վերաբերում է երկրորդ չափանիշին՝ համանախագահների առաջարկների ներկայացմանը հավասարապես բոլոր կողմերին, ապա այդ պրակտիկան շարունակվեց նաև իշխանափոխությունից հետո, երբ 1998 թ. հոկտեմբերին ընդհանուր պետության առաջարկը ներկայացվեց նաև Ստեփանակերտին, որը, ի տարբերություն Ադրբեջանի, որը կտրուկ մերժեց այն, հետագայում ներկայացրեց իր ծավալուն դիտարկումներն այդ առաջարկի վերաբերյալ[3]: 1994 թ. գործընթացի առաջին շրջանում ծավալված բանակցություններում քննարկվում էր մի փաստաթուղթ, որի նպատակն էր վերացնել հակամարտության հետևանքները, բայց չէր քննարկվում Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի հարցը: Այս շրջանում առաջին անգամ ուղիղ բանակցություններ սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ մասին որոշում էր կայացվել 1995 թ. նոյեմբերին Բոնում կայացած Մինսկի խմբի հերթական հանդիպման ժամանակ: Թվում էր, թե այս բանակցությունների ընթացքում կմշակվի մի համաձայնագիր, որը կներառվի 1996 թ. Լիսաբոնի գագաթնաժողովի փաստաթղթում, բայց այդպես չեղավ:

Գագաթնաժողովից երկու շաբաթ առաջ ադրբեջանական կողմը հետ կանգնեց այս պայմանավորվածությունից և նույնիսկ գագաթնաժողովին ադրբեջանցիների վետոյի (արգելաքվե) սպառնալիքով ուղղակի պատանդ վերցրեց քննարկվող բոլոր փաստաթղթերը, ինչի պատճառով գործող նախագահը ստիպված համաձայնեց իր հայտարարության մեջ ներկայացնել ադրբեջանական դիրքորոշումը: Այդ հայտարարության մեջ նշվում էին խնդրի կարգավորման այնպիսի սկզբունքներ, որոնցով նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղին հատկացնել ինքնավարության բարձր կարգավիճակ Ադրբեջանի կազմում: Այդ փաստաթուղթն իրավական որևէ հիմք չուներ, քանզի ընդամենը նախագահողի հայտարարություն էր, բայց և այնպես, Հայաստանը մերժեց այն: Վետոյի

իրավունքով, որին միացավ նաև ԼՂՀ-ն, Լիսաբոնի պատճառով (1996 թ. դեկտեմբեր) Մինսկի խմբի նախաձեռնած գործընթացը առկախվեց: Դրան հաջորդած Մինսկի խմբի առաջին հանդիպումը կայացավ 1997 թ. մարտին Մոսկվայում և տևեց շատ կարճ, որովհետև Ադրբեջանը պնդեց, որ բոլոր հաջորդ բանակցությունները պետք է հիմնվեն միայն «Լիսաբոնի սկզբունքների» վրա: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները լքեցին դահլիճը: Սրանով ոչ միայն առկախվեց Մինսկի խմբի գործընթացը, այլև դադարեց Լեռնային Ղարաբաղի պաշտոնական մասնակցությունը Մինսկի խմբի բանակցություններին: Մինսկի խմբի գործընթացի ընդհատումից հետո կողմերին ներկայացվել է երկու առաջարկ. 1997 թ. մայիսից՝ փաթեթային, իսկ սեպտեմբերից՝ փուլային տարբերակները: Պետք է տարբերակել երկու առաջարկները՝ նկատի ունենալով, որ փաթեթային առաջարկն ընդգրկում էր բոլոր հարցերը, ներառյալ կարգավիճակի հարցը, սակայն այն հիմնված էր «Լիսաբոնի սկզբունքների» վրա: Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը բնականաբար մերժեցին այն: Փուլային կարգավորման առաջարկը ենթադրում էր տարածքների վերադարձ՝ առանց կարգավիճակի հարցի քննարկման, իսկ փաթեթայինը, հակառակը, սկզբում քննում էր կարգավիճակի հարցը, ապա՝ տարածքների վերադարձը և այլն: ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1997 թ. նոյեմբերի 1-ին Հայաստանի պաշտոնական մամուլում հրապարակված «Պատերազմ, թե՞ խաղաղություն: Լրջանալու պահը» հոդվածով ձգտում էր հիմնավորել Արցախի հարցում անհապաղ զիջումների գնալու անհրաժեշտությունը, սակայն հոդվածը լուրջ տարակարծություններ առաջացրեց հանրության շրջանում և վարչակազմի ներսում՝ ի վերջո հանգեցնելով նրա հրաժարականին:

Շուտով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ներկայացվեցին հայկական կողմի հայեցակարգային նոր սկզբունքները, որոնցով նախապատվությունը տրվում էր հակամարտության կարգավորման փաթեթային տարբերակին՝ վերջինիս հիմքում դնելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, նրա ոչ անկլավային վիճակը, անվտանգության միջազգային երաշխիքները: Նույն թվականի նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կողմերի քննարկմանը ներկայացրին «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքները» փաստաթուղթը, որի հիմքում ընկած էր ընդհանուր պետության գաղափարը[4]:

1998 թ. սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը: Այս փուլում, փաստորեն, միջնորդները հանգեցին, այսպես կոչված, «ընդհանուր պետության» գաղափարին: Նոր՝ «ընդհանուր պետությունը» պետք է ստեղծվեր նախկին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, ինչը, ըստ նրանց, թույլ կտար համատեղել սահմանների անձեռնմխելիությունը և ազգերի ինքնորոշման սկզբունքը[6]: Հայաստանն ու Ղարաբաղը սկզբունքորեն համաձայնեցին

Արցախյան բանակցություններ

«ընդհանուր պետության» գաղափարն ընդունել որպես բանակցությունների հիմք, իսկ Ադրբեջանը մերժեց այն: Բանակցությունների գործընթացը դարձյալ հայտնվեց փակուղում:

Ադրբեջանի ղեկավարությունը համառորեն հրաժարվում էր բանակցությունների վերսկսումից: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով, այնուամենայնիվ, 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները: Դրանք որոշակի ընդհատումներով շարունակվեցին հետագայում՝ առանց շոշափելի արդյունքների:

Ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը

20-րդ դարավերջին ղարաբաղյան ընդհատված բանակցությունները վերսկսվեցին 2001 թ. սկզբին, ինչի հետևանքով 2001 թ. ապրիլին կազմվեց Քի Վեստի փաստաթուղթը, որը որոշակի առաջընթաց արձանագրեց[7]: Այն հստակորեն ամրագրում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման փաստը, քննարկում էր առաջնային կարևորություն ունեցող հարցերի շրջանակ: Դրանցից էին Հայաստան-ԼՂՀ և Ադրբեջան-Նախիջևան կայուն հաղորդակցության հարցերը: Կարճ ժամանակ անց Ադրբեջանը հրաժարվեց բանակցություններից և առաջադրեց նորանոր պահանջներ: Ադրբեջանի նոր ղեկավարությունը սկզբում մտադիր էր սպառնալիքի լեզվով խոսել, բայց դա կարճ տևեց: 2004 թ. սկսվեցին պրահյան բանակցությունները՝ ուղղված կողմերի երկխոսության աշխուժացմանը: Նախագահները շարունակում էին հանդիպել, թեև ոչ նախկին հաճախականությամբ: Ջուգահեռաբար ընթանում էին արտգործնախարարների հանդիպումները, որոնց ժամանակ օրակարգային խնդիր էր ԼՂՀ կարգավիճակը: 2007 թ. սեղանին դրվեցին մադրիդյան հիմնական սկզբունքները[8], որոնք ներառում էին երեք կարևորագույն միջազգային նորմեր՝ տարածքային ամբողջականություն, ազգերի ինքնորոշման իրավունք և ուժի կիրառման բացառում: Համաձայն այդ սկզբունքների՝ Ղարաբաղը պետք է ունենա միջանկյալ կարգավիճակ, որը թույլ կտա արցախցիներին անվտանգ ապրել: Փախստականները պետք է վերադառնային իրենց նախկին բնակության վայրերը,

պետք է տեղակայվեին միջազգային խաղաղապահ ուժեր, և անցկացվեր Արցախի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե: Առաջ էին քաշվում նաև ազատագրված տարածքների վերադարձի և այլ հարցեր, որոնք բնականաբար ընդունելի չէին ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար: Մադրիդյան սկզբունքները՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցությունների հիմք, ընդունվեցին 2008 թ. նոյեմբերի 2-ի մոսկովյան հռչակագրով[9]: Հռչակագիրը հաստատում էր, որ հակամարտությունը պետք է լուծվի միայն քաղաքական բանակցությունների ճանապարհով: 2009 և 2010 թթ. շարունակվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցերը տարածաշրջան: 2010 թվականից բանակցությունների քննարկման փուլում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մշակված մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակը[10]: Հարկ է նշել, որ ղարաբաղյան խնդրով ցանկացած բանակցության, այդ թվում՝ նախագահների երկխոսության ժամանակ Հայաստանի Հանրապետությունը շարունակում էր պաշտպանել այն սկզբունքը, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ փաստաթուղթ անվիճելիորեն պետք է ստանա նաև ղարաբաղյան հակամարտության առանցքային կողմի՝ ԼՂՀ-ի հավանությունը: Միայն այդ դեպքում էր հնարավոր սկսել խնդրի կարգավորումը: ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը շարունակում էր մնալ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն ու դրա միջազգային ճանաչումը, ԼՂՀ բնակչության անվտանգության միջազգային երաշխիքների ապահովումը, ՀՀ-ի հետ կապը ցամաքային սահմանի առկայությամբ՝ բացառելով անկլավը: Միայն նման փաստերի ընդունումն ու դրանց ամրագրումը հնարավոր կդարձնեն խնդրի կարգավորումը:

Ի դեպ, միայն 2008-2011 թթ. ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի նախագահները եռակողմ ձևաչափով (նկատի ունենք նաև Ռուսաստանի Դաշնության նախագահին) հանդիպել են երեք անգամ Սանկտ Պետերբուրգում, երկուական անգամ՝ Մոսկվայում և Սոչիում, մեկ անգամ՝ Աստրախանում, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր. 2008 թ.՝ «Մայենդորֆի հռչակագիրը», 2010 թ.՝ Աստրախանի հայտարարությունը, և 2011 թ.՝ Սոչիի հայտարարությունը[11]:

2009 թ. հուլիսի 10-ի Ակվիլայի, 2010 թ. հունիսի 26-ի Մուսկոկայի և 2011 թ. մայիսի 26-ին Դովիլում Մեդվեդևի, Օբամայի և Սարկոզիի հանդիպումներն ու հայտարարությունները նպատակ ունեին խաղաղ ճանապարհով կարգավորելու ղարաբաղյան հակամարտությունը և, վերջին հաշվով, խնդրի լուծման ուղղությամբ հասնելու որոշակի արդյունքների ու իրավիճակի բեկման: Խնդրի լուծման առումով հատկապես որոշակի հույսեր էին կապվում 2011 թ. հունիսի 24-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում եռակողմ՝ Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի, Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հանդիպման

Արցախյան բանակցություններ

հետ, որը, սակայն, չարդարացրեց այդ հույսերը. արվեց միայն հայտարարություն այն մասին, որ, հանդիպելով Կազանում, երեք պետությունների նախագահները արձանագրեցին մի շարք հարցերի շուրջ փոխըմբռնման ձեռքբերում, որոնց լուծումը կնպաստի հիմնական սկզբունքներին հավանություն տալու համար պայմանների ստեղծմանը[12]: Չնայած այդ ամենին, հիմնարար սկզբունքների շուրջ որևէ համաձայնություն Կազանում ձեռք չբերվեց, ինչն էլ ի չիք դարձրեց այն ակնկալիքները, որ կազանյան հանդիպումը կարող էր դառնալ բեկումնային:

2011 թ. դեկտեմբերին Վիլնյուսում ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների և Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հայտարարությունը, որով վերահաստատվեցին բացառապես խաղաղ միջոցներով ու միջազգային իրավունքի հիման վրա ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման այլընտրանքի բացակայությունը, շփման գծում միջադեպերի քննության մեխանիզմի ստեղծման կարևորությունը և դիպուկահարների դուրսբերումը[13]:

2012 թ. հունվարի 23-ին ՌԴ նախագահի հրավերով Սոչիում տեղի ունեցավ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը, որի ժամանակ քննարկվեցին ԼՂՀ հակամարտության կարգավորման ընթացքն ու հեռանկարները: Նախագահները հայտարարեցին, որ բուռն բանակցությունների շնորհիվ առաջընթաց գրանցվեց ԼՂ հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման շուրջ[14]:

Ի զարգացումն 2011 թ. մարտի 5-ին Սոչիում արված համատեղ հայտարարության՝ ՀՀ, ՌԴ և Ադրբեջանի նախագահներն ի գիտություն ընդունեցին համանախագահների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի՝ շփման գծերի երկայնքով դիպուկահարների հեռացման, միջադեպերի հետաքննության անցկացման մեխանիզմի վերաբերյալ համատեղ զեկույցը, փաստաթուղթ, որը, սակայն, ադրբեջանական կողմը միշտ անտեսում էր:

Չնայած բոլոր պայմանավորվածություններին՝ Ադրբեջանը շարունակում էր խախտումները:

Պատահական չէր ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հայտարարությունը 2012 թ. մարտի 6-ին Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահի և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ հանդիպումների ժամանակ: Նա ընդգծեց, որ «Ադրբեջանը կտրականապես մերժում է վստահության կառուցման ցանկացած առաջարկ՝ ուղղված լինի դա թե՛ տարածաշրջանային համագործակցության խթանմանը, թե՛ շփման գծում լարվածության թուլացմանը: Օրինակ՝ Ադրբեջանը (չնայած պայմանավորվածությանը), ցավոք, դեմ է միջադեպերի հետաքննությանը: Ավելին՝ ոչ մի րոպե չեն դադարել Ադրբեջանի կողմից պատերազմի կոչերը: Ադրբեջանի ղեկավարությունը շարունակում է հայերի նկատմամբ ատելության սերմանումը: Բանակցություններն անհամատեղելի են պատերազմի քարոզչության, ազգատյացության և աննախադեպ չափերի սպառազինությունների ձեռքբերման հետ: Ադրբեջանի նախագահը ընդամենը մի քանի օր առաջ հայտարարեց, որ ադրբեջանցիների թիվ մեկ թշնամին աշխարհասփյուռ հայությունն է: Այս հանգամանքը պետք է արժանանա միջազգային հանրության գնահատականին: Գլխավոր քարտուղարի հետ համամիտ ենք, որ հակամարտությունը պետք է կարգավորվի բացառապես խաղաղ միջոցներով և բանակցությունների ճանապարհով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Համոզված ենք, որ ԼՂ հակամարտության վերջնական կարգավորումը հնարավոր է միայն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգման և անվտանգության համակողմանի երաշխիքների ապահովման միջոցով: Մենք բազմիցս շեշտել ենք, որ ԼՂ ժողովուրդը եվրոպական ընտանիքի մաս է, նույն արժեքների կրողը: Հայաստանը մշտապես շեշտել է ԼՂ իշխանությունների հետ ուղիղ շփումների անհրաժեշտությունը»[15]:

2012 թվականը նշանավորվեց ԱՄՆ-ի Ռոդ Այլընդ և Մասսաչուսեթս նահանգների, ինչպես նաև Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանների կողմից Արցախի Հանրապետության անկախության ճանաչման որոշումներով[16]:

2012 թ. վերահաստատվեց, որ արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի ռազմավարությունը ոչ միայն ըմբռնելի է, այլև աջակցություն է վայելում միջազգային հանրության կողմից: Դրա մասին էին վկայում 2012 թ. հունվարի 23-ին Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների համատեղ հայտարարությունը, 2012 թ. հունիսի 19-ին Լոս Կաբոսում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահների հայտարարությունը և 2012 թ. դեկտեմբերի 6-ին Դուբլինում ԵԱՀԿ ԱԴ նախարարների խորհրդին ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրների պատվիրակությունների ղեկավարների հայտարարությունը[17]:

Ադրբեջանի կողմից հրադադարի պարբերական խախտումները, սադրիչ գործողությունները Արցախի հետ շփման գծում և Հայաստանի սահմանին ոչ

Արցախյան բանակցություններ

միայն լրջորեն վնասեցին Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ բանակցային գործընթացը, այլև վտանգեցին տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը:

2012 թ. ընթացքում տեղի ունեցած զարգացումները վերահաստատեցին, որ արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանի որդեգրած ռազմավարությունը ոչ միայն ըմբռնելի է, այլև վայելում է միջազգային հանրության աջակցությունը: Այդ մասին էին վկայում նույն տարում Սոչիում, Լոս Կաբոսում և Դուբլինում ընդունված հայտարարությունները, որոնք վերահաստատեցին միջազգային հանրության՝ արդեն հինգ տարի շարունակ ԵԱՀԿ շրջանակներում արտացոլվող մոտեցումները, որոնց համահունչ էր Հայաստանի դիրքորոշումը:

Հունվարի 23-ին Սոչիում Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ և ներկայությամբ կայացած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպման ժամանակ ընդունվեց հայտարարություն, որով պատրաստակամություն հայտնվեց արագացնելու հիմնարար սկզբունքների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերումը՝ հաշվի առնելով մինչ այդ իրականացված աշխատանքը, շարունակելու շփման գծի երկայնքով միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման վերաբերյալ բանակցությունները, վստահության ամրապնդման նպատակով քայլերի ձեռնարկումը:

2012 թ. հունիսի 19-ին Լոս Կաբոսում կայացած «Մեծ քսանյակի» գագաթնաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ Վլադիմիր Պուտինի, Բարաք Օբամայի և Ֆրանսուա Օլանդի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ համատեղ հայտարարության մեջ հատուկ ընդգծվեց միայն խաղաղ ճանապարհով խնդրի կարգավորման անհրաժեշտությունը, աջակցություն հայտնվեց Սոչիում հունվարի 23-ին ընդունված հայտարարության դրույթների կենսագործմանը, վերահաստատվեցին հիմնախնդրի կարգավորման հիմքը կազմող միջազգային իրավունքի սկզբունքները՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում, ժողովուրդների իրավահավասարություն և ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, ինչպես նաև կոչ արվեց արագացնելու հիմնարար սկզբունքների հիման վրա

համաձայնության կայացումը, զերծ մնալու թշնամանքը խորացնող հայտարարություններից և քայլերից:

Դեկտեմբերի 6-7-ը Դուբլինում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները հանդես եկան հայտարարությամբ, որում, հիմնվելով Սոչիի և Լոս Կաբոսի հայտարարությունների վրա, ընդգծվեց խաղաղ ճանապարհով ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, 1994 թ. հրադադարի մասին պայմանավորվածությունն անվերապահորեն հարգելու անհրաժեշտությունը, կոչ արվեց զերծ մնալու թշնամանքը խորացնող հայտարարություններից և քայլերից:

Հայաստանը մի շարք պաշտոնական հայտարարություններով վերահաստատեց իր պատրաստակամությունը՝ հիմնվելով վերոհիշյալ փաստաթղթերում ամրագրված դրույթների վրա շարունակելու հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը:

Ադրբեջանական կողմը, ոտնահարելով վերոհիշյալ հայտարարությունները և հակառակ միջազգային հանրության բազմաթիվ կոչերին ու հորդորներին, իր թշնամական, ռազմատենչ հայտարարություններով, ապակառուցողական քայլերով, մարդկային բազմաթիվ զոհերի պատճառ դարձած կոպտագույն սադրանքներով թե՛ Արցախի հետ շփման գծում, թե՛ Հայաստանի հետ սահմանին փաստացի հակադրվեց միջնորդների՝ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին:

Բանակցային գործընթացին լրջագույն վնաս հասցրին ադրբեջանա-հունգարական տխրահռչակ գործարքի հետևանքով ադրբեջանցի մարդասպան Ռ. Սաֆարովի ազատ արձակումն ու հերոսացումը: Վերոհիշյալ գործողություններով Ադրբեջանը հարված հասցրեց տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Հայաստանը 2013 թ. շարունակեց Մինսկի խմբի համանախագահների հետ համատեղ ջանքերը՝ հիմնահարցի բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա հանգուցալուծման համար:

Հունիսի 18-ին Էնիսկիլենում կայացած «Մեծ ութնյակի» գագաթնաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը՝ ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ, մեկ անգամ ևս վերահաստատեց, որ միջազգային հանրության մոտեցումները համահունչ են Հայաստանի կողմից որդեգրված դիրքորոշմանը, որ հիմնախնդրի խաղաղ հանգուցալուծումը չունի այլընտրանք, և կարգավորման հիմնարար սկզբունքներն ու տարրերը մեկ ամբողջություն են, և դրանցից որևիցե մեկին մյուսի նկատմամբ գերակայություն տալու փորձերն անհնարին կդարձնեն հիմնախնդրի կարգավորումը[18]:

Բանակցային գործընթացին նոր թափ հաղորդելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվեց շուրջ երկու տարվա ընդմիջումից հետո՝ նոյեմբերի 19-ին, Վիեննայում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպման ժամանակ[19]: Չնայած տարվա ընթացքում ադրբեջանական կողմը շարունակում էր ռազմատենչ հայտարարությունները, սադրանքները Հայաստանի հետ սահմանին և Արցախի հետ շփման գծում, հրադադարի ռեժիմի կոպիտ խախտումները, ընդունվեց պատվիրակությունների ղեկավարների և Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը, որում նշվեց հիմնախնդրի խաղաղ, արդարացի կարգավորման գործընթացի շարունակման հանձնառությունը:

2014 թ. Հայաստանը շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ ջանքերը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը:

Ղարաբաղյան հակամարտության գոտում զինադադարի հաստատման 20-րդ տարում Ադրբեջանի կողմից ռազմատենչ հռետորաբանությունը, հրադադարի ռեժիմի բազմաթիվ կոպտագույն խախտումները, անընդմեջ կրկնվող դիվերսիոն գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ-Ադրբեջան շփման գծում նոր թափ ստացան:

ԼՂՀ պաշտպանության բանակի՝ ուսումնավարժական թռիչք կատարող ուղղաթիռի խոցումը, ուղղաթիռի անկման վայրը շուրջ տասն օր շարունակ կրակի տակ պահելը, միջազգային մարդասիրական իրավունքի խախտման Ադրբեջանի հանցավոր կեցվածքը զգալի լարվածություն առաջացրին, ինչը համապատասխան արձագանք ստացավ միջազգային հանրության կողմից:

2015 թ. ընթացքում Հայաստանը շարունակել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը: Նոր թափ ստացան Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի կոպտագույն խախտումները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ-Ադրբեջան շփման գծում, այդ թվում՝ նաև մեծ տրամաչափի զինատեսակների կիրառմամբ, ինչը հանգեցրել է բազմաթիվ մարդկային զոհերի, նաև քաղաքացիական բնակչության շրջանում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հունվարի 27-ի հատուկ հայտարարությամբ Ադրբեջանին կոչ են արել հավատարիմ մնալու հիմնախնդրի խաղաղ կարգավորման իր հանձնառությանը, մտահոգություն են հայտնել բանակցային գործընթացի, Մինսկի խմբի համանախագահների դերի և ԵԱՀԿ դիտորդների գործունեության վերաբերյալ հնչեցվող քննադատության շուրջ[20]:

Համանախագահները կոչ են արել կողմերին վերահաստատելու միայն խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով հիմնախնդրի կարգավորման հանձնառությունը, համաձայնություն տալու հրադադարի խախտումների հետաքննության

մեխանիզմի ստեղծմանը:

Դեկտեմբերի 19-ին՝ շուրջ մեկ տարվա դադարից հետո, Բեռլինում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Արհամարհելով համանախագահների հասցեական հայտարարությունները և կոչերը՝ Բաքուն տարվա ընթացքում դիմել է նոր սադրանքների՝ մեծացնելով լարվածությունը շփման գծում և Հայաստան-Ադրբեջան սահմանին, շարունակելով հիմնախնդրի կարգավորման քննարկումներն այլ հարթակներ տեղափոխելու փորձերը, համանախագահների հասցեին սուր քննադատությունը, ԵԱՀԿ գործող նախագահների անձնական ներկայացուցչի և նրա թիմի լիազորությունների ու գործունեության սահմանափակմանն ուղղված քայլերը, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման առաջարկության մերժումը:

Ադրբեջանը, արհամարհելով ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների կողմից վարվող բանակցությունների ընթացքը, ինչպես նաև 1994 թ. մայիսի 12-ի համաձայնագիրն ու կայունացման միջոցների համալիր պարունակող 1995 թ. փետրվարի 6-ի համաձայնագիրը, 2016 թ. ապրիլի 5-ից հաստատված հրադադարից հետո համաձայն էր շարունակել բանակցությունները: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության մեջ նշվում էր, որ երկու երկրների նախագահների հանդիպման խնդիրն է բանակցությունների համար բարենպաստ պայմանների ստեղծումը և «հրադադարի ռեժիմի վերահաստատումը»: Սակայն ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը նախապայմաններ էր դրել բանակցային գործընթացը սկսելու համար: Դրանք էին՝ Ադրբեջանի գործողությունները դատապարտող հասցեական հայտարարություն, շփման գծում վստահության ամրապնդման միջոցառումների իրականացում և երաշխիք, որ Ադրբեջանը չի գնա նման սադրանքի: Ըստ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հայտարարության՝ ԼՂ հակամարտության կարգավորման համար հիմք պետք է հանդիսանային մի քանի տարի բանակցային սեղանի շուրջ շրջանառված տարբերակներն ու սկզբունքները: Համակողմանի լուծումը պետք է ներառեր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումն ու հարակից ազատագրված տարածքների վերահսկողության հարցը: ՀՀ-ն հայտարարում էր, որ պատերազմի վերսկսման դեպքում կճանաչի ԼՂՀ անկախությունը[21]:

2016 թ. մայիսի 16-ին Վիեննայում, ապա հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացավ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը՝ ՌԴ նախագահ Վ. Պուտինի նախաձեռնությամբ և Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ: Դրանից հետո նախագահներ Ս. Սարգսյանը, Վ. Պուտինը և Ի. Ալիևը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում ասվում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները վերահաստատել են Վիեննայում ս. թ. մայիսի 16-ին կայացած հայ-ադրբեջանական գագաթնաժողովի պայմանավորվածությունները՝ ուղղված իրադրության կայունացման և խաղաղ գործընթացի առաջընթացին նպաստող մթնոլորտի ստեղծմանը: Նրանք համաձայնել են հակամարտության գոտում մեծացնել դիտորդների թվաքանակը: Կարևորել են հրադադարի ռեժիմի պահպանումը, բարձր մակարդակով կանոնավոր շփումները և պայմանավորվել են շարունակել դրանք նման ձևաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի[22]: Համանախագահները հրավիրվել էին ներկա գտնվելու Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման եզրափակիչ փուլին[23]: Իհարկե, Սանկտ Պետերբուրգում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը մայիսին Վիեննայում կայացած հանդիպման տրամաբանական շարունակությունն էր, որի ընթացքում ձեռք էին բերվել հետևյալ կարևոր պայմանավորվածությունները.

ա. պայմաններ ստեղծել բանակցությունների վերսկսման համար,

բ. հարաբերությունները կարգավորել բացառապես խաղաղ ճանապարհով՝ հիմք ընդունելով 1994-1995 թթ. եռակողմ անժամկետ զինադադարի համաձայնագիրը:

Ընդգծվել է հրադադարի խախտման հետաքննության մեխանիզմների ստեղծումը, որով կփաստվեն միջադեպերը ինչպես հայ-ադրբեջանական սահմանին, այնպես էլ հայ-ադրբեջանական շփման գծում: Կարևորվեց նաև ԵԱՀԿ թիմի կարողությունների ընդլայնումը[24]:

Նույնիսկ գագաթնաժողովի օրերին Ադրբեջանը լայնամասշտաբ զինավարժություններ էր անցկացնում Նախիջևանում:

2017 թ. հոկտեմբերի 16-ին Ժնևում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի և ԱՀ նախագահ Ի. Ալիևի միջև մեկ տարվա ընդմիջումից հետո կայացած հանդիպման ժամանակ ընդունվեց համատեղ հայտարարություն, և ձեռք բերվեց պայմանավորվածություն լարվածությունը թուլացնելու վերաբերյալ[25]:

2018 թ. իշխանափոխությունից հետո շարունակվեցին երկկողմ ուղղակի շփումները ՀՀ վարչապետի և ԱՀ նախագահի միջև, սակայն դրական առաջընթաց չարձանագրվեց, բանակցությունները մտան փակուղի: Թեև ՀՀ իշխանությունների կողմից առաջարկվում էր Արցախը դարձնել բանակցային կողմ, սակայն այդ ուղղությամբ գործնական քայլեր չարվեցին: Գործընթացի անարդյունավետությունը և բանակցությունների ձախողումը հանգեցրին 44-օրյա պատերազմին:

2020 թվականի ողբերգական պատերազմը արմատապես հեղաշրջեց Արցախի և նրա շուրջ ստեղծված իրավիճակը՝ հայկական կողմերի առջև դնելով նոր բարդագույն մարտահրավերներ: Այնուամենայնիվ, նորագույն պայքարի առաջին փուլում մեկ անգամ արդեն հաղթականորեն անցնելով

անհաղթահարելի թվացող փորձությունների միջով, մենք պետք է հավատանք, որ այս պայքարն ավարտված չէ և ապագայում այն մեզանից պահանջելու է երկարատև ջանքեր ու ամուր հավատ հայության արդար պահանջների իրականացման հարցում: Ջանքեր, որոնք կրկին կմիավորեն մեզ՝ որպես միասնական կամք, նպատակներ ունեցող և ազգային մեծ երազանքներ փայփայող ժողովրդի:

44-օրյա պատերազմը

2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ թուրք-հայկական պատերազմից հարյուր տարի անց, Ադրբեջանն իր ցեղակից Թուրքիայի աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ նոր պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ: Այն 1990-ական թթ.-ից ի վեր երրորդն է, որը պատմության մեջ մտավ Քառասունչորսօրյա պատերազմ անունով: Ադրբեջանա-թուրքական հորդաներն ու նրանց հավաքագրած վարձկան ահաբեկիչները Սիրիայից, Պակիստանից և այլ վայրերից տարիների ընթացքում գնված աննախադեպ քանակի սպառազինությամբ, մեծաքանակ զրահատեխնիկայի և ԱԹՍ-ների կիրառմամբ լայնամասշտաբ հարձակման անցան արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Թշնամուն հաջողվել էր պատերազմի հենց սկզբից ոչնչացնել Արցախի հակաօդային պաշտպանության ողջ համակարգը: Մարտական գործողություններն ընթանում էին հյուսիսում՝ Մարտակերտ-Թալիշ-Մատաղիս, կենտրոնում՝ Մարտունի-Ճարտար, իսկ հարավում՝ Արաքսի հովտի ողջ տարածքով, սկզբում՝ Ֆիզուլիի և Ջաբրայիլի, իսկ ապա՝ Որոտանի (Կուբաթլու) և Կովսականի (Զանգելան) ուղղություններով:

Սեպտեմբերի 27-ին և 28-ին Արաքսի հովտում և Մատաղիս-Թալիշ հատվածներում Արցախի պաշտպանական բանակին (ԱՊԲ) հաջողվեց դիմակայել հակառակորդի բոլոր հարձակումներին՝ նրան հասցնելով անձնակազմի և տեխնիկայի զգալի կորուստներ: Սեպտեմբերի 29-ից թշնամին հարձակումներ սկսեց նաև ՀՀ սահմանամերձ շրջանների վրա. Ադրբեջանի զինուժը կրակ բացեց ՀՀ ՋՈՒ Վարդենիսի զորամասի ուղղությամբ: Միաժամանակ, հյուսիսային ուղղությամբ շարունակելով օդային հարձակումները, ադրբեջանական օդուժի «Սու-25» տիպի գրոհիչները «Բայրաքթար» ԱԹՍ-ների միջոցով ռմբակոծեցին Հադրութի և Մարտունու շրջանի բնակավայրերը: Հայկական ուժերը, դիմագրավելով հակառակորդի հարձակումներին, կարողացան ոչնչացնել մեծ թվով կենդանի ուժ ու ռազմական տեխնիկա: Ըստ պաշտոնական հրապարակումների՝ պատերազմի առաջին չորս օրվա ընթացքում հայկական զինված ուժերի կողմից խոցվել էր ադրբեջանական այնքան ռազմական տեխնիկա, որքան Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ:

Հոկտեմբերի 2-ին հակառակորդը, մեծ

ուժեր կենտրոնացնելով հյուսիսարևելյան ուղղությամբ, փորձել է ճեղքել հայկական զորքերի պաշտպանությունը, սակայն առանձին հատվածներում, հատկապես «Եղնիկների» և Մատաղիսի ուղղությամբ այն ձախողվել է: Արդյունքում ոչ միայն հաջողությամբ ետ մղվեցին հակառակորդի չդադարող գրոհները, այլև գրավվեցին ռազմավարական մեծ կարևորություն ունեցող հենակետեր, դիրքեր՝ հակառակորդին պատճառելով մեծաքանակ կորուստներ: Այս ընթացքում հակառակորդը շարունակել է Ստեփանակերտ և Հադրութ քաղաքների թիրախային ռմբակոծումը, որից տուժել են մեծ թվով բնակիչներ, փլուզվել են հարյուրավոր տներ, նաև դպրոցներ ու հիվանդանոցներ: Հոկտեմբերի 6-ին Ադրբեջանի զինված ուժերը, անցնելով հարձակման հարավային ուղղությամբ՝ օգտագործելով պահեստային ուժեր և մեծաքանակ ռազմական տեխնիկա, ներառյալ տանկեր և հրետանի, որոշ առաջխաղացում ունեցան՝ միաժամանակ շարունակելով հեռահար հրետակոծության ենթարկել Ստեփանակերտն ու Շուշին: Հակառակորդը խաղաղ բնակչության նկատմամբ կիրառել է միջազգայնորեն արգելված «LAR-160» տեսակի համազարկային կայանքների կասետային արկեր: Այդ նույն ժամանակ Արցախի ՊԲ հատուկ նշանակության ստորաբաժանման և «Կամավորական շարժում» ՀԿ վաշտերի ակտիվ մասնակցությամբ հյուսիսային ուղղությամբ կազմակերպվեց հակագրոհ, և վերադարձվեց Վարանգաթաղի բարձունքը: Այս ուղղությամբ հայկական կողմը, վարելով ծանր մարտեր, ունեցավ զգալի առաջխաղացում: Հոկտեմբերի 9-ին մեկնարկեցին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունները մարդասիրական նպատակներով Արցախի հակամարտության գոտում հրադադար հայտարարելու շուրջ՝ գերիների և զոհերի աճյունների փոխանակման համար: Հանդիպման ավարտին տարածվեց արտգործնախարարների համատեղ հայտարարությունը, որով կողմերը համաձայնեցին

72 ժամ հրադադար հաստատել հոկտեմբերի 10-ից՝ ժամը 12:00-ից, մարդասիրական նկատառումներով, ռազմագերիների փոխանակման և զոհվածների աճյունների դուրսբերման համար: Սակայն հրադադարի մասին սույն պայմանավորվածությունը խախտվեց Ադրբեջանի կողմից, որը 5 րոպե անց գրոհեց Կարախամբեյլի կոչվող տեղամասի ուղղությամբ: Նույն ժամանակ ադրբեջանական կողմը դիվերսիոն-հետախուզական ներթափանցման փորձ ձեռնարկեց Հադրութի ուղղությամբ՝ սպանելով 2 բնակչի՝ մորն ու նրա հաշմանդամ որդուն, միաժամանակ հրթիռակոծեց Ստեփանակերտը:

Հրադադարի երկրորդ պայմանավորվածությունը ձեռք բերվեց հոկտեմբերի 17-ին, սակայն այն նորից խախտվեց Ադրբեջանի կողմից, որին այս դեպքում ևս սատարում էր Թուրքիան: Դեռևս հոկտեմբերի 8-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից հարվածային և ճշգրիտ կառավարվող ԱԹՍ-ներով մի քանի ժամվա ընթացքում երկու անգամ թիրախավորված հարված էր հասցվել Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցուն: Խախտելով հրադադարի պայմանավորվածությունը՝ Ադրբեջանը շարունակեց մարտական գործողությունները բոլոր երեք ուղղություններով: Հյուսիսում ադրբեջանական զինված ուժերը մի քանի փորձ են արել ճեղքելու պաշտպանությունը, հատկապես Մատաղիսի ուղղությամբ, սակայն հետ են մղվել՝ տալով զգալի կորուստներ: Կենտրոնի ուղղությամբ մի քանի դիվերսիոն խմբեր փորձել են ներթափանցել դիրքեր, սակայն հրետանին դիպուկ կրակահերթով հետ է մղել նրանց, որից հետո նրանք դիմել են փախուստի: Հարավային ուղղությամբ մարտերն ընթացել են Ջրականի տարածքում, որտեղ հակառակորդը որոշ հաջողություններ ունեցել է, սակայն չի կարողացել գրավել Խուդափերինի ջրամբարը, որը Իրանի և Արցախի սահմանային ջրամբարն է: Հոկտեմբերի 15-ին և 16-ին թշնամին հրետանու կիրառմամբ ինտենսիվ կրակ է բացել Մարտունի քաղաքի և Կարմիր շուկա բնակավայրի, Բերդաշեն համայնքի ուղղությամբ, հրետակոծվել են Ստեփանակերտը, Հադրութի և Քաշաթաղի շրջանների գյուղերը: Միաժամանակ թշնամին ԱԹՍ-ներով հարվածներ է հասցրել ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ, Արծվանիկ և Դավիթ-Բեկ բնակավայրերին՝ վնասելով քաղաքացիական ենթակառուցվածքները: Թեժ մարտեր են ընթացել նաև Մարտունու շրջանի Շեխեր և Ջիվանի գյուղերի մատույցներում: Հոկտեմբերի 23-ին թշնամին ոչմիայն հրետակոծել է Ասկերանը, այլև կրկին հարվածներ է հասցրել Մարտունի, Ստեփանակերտ և Մարտակերտ քաղաքներին: Թշնամին, գրադ կայանքից հրթիռակոծելով Քաշաթաղի շրջանի գյուղերը, կիրառել է «Սմերչ» տեսակի հրթիռներ՝ միաժամանակ շարունակելով դիվերսիոն խմբերի ներթափանցման գործողությունները: Մարտերի ընթացքում հակառակորդին հաջողվել է գրավել Ջաբրայիլն ու Կուբաթլուն և առաջանալ դեպի Հադրութ: Այս բոլոր ուղղություններով ծավալված մարտերում խիզախությամբ ու սխրագործություններով աչքի ընկան հայոց բանակի մի շարք մարտիկներ:

Չնայած հայ զինվորականների հերոսությանը՝ շարքայինից մինչև հրամանատար, թշնամին, նոր հարձակումներ ձեռնարկելով գրեթե բոլոր ուղղություններով, օգտագործելով սպառազինության և զինտեխնիկայի տեխնիկական և թվային առավելությունները, հասավ հաջողության:

Նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը՝ ժամը 12:00-ին, ՀՀ, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ[26], որով ԱՀ տարածքի մեծ մասն անցնում էր Ադրբեջանի վերահսկողության տակ՝ նախկին ԼՂԻՄ-ի տարածքից դուրս բոլոր շրջանները, իսկ ԼՂԻՄ-ի տարածքներից՝ Լաչինի միջանցքը, Շուշի քաղաքը, Հադրութի շրջանի մեծ մասը, Ասկերանի և Մարտակերտի շրջանի որոշ գյուղեր: ԼՂՀ սահմանների պահպանությունը դրվեց ռուս խաղաղապահների վրա: Ազատագրված 11500 քառ. կմ տարածքից թշնամուն զիջվեց շուրջ 9000 քառ. կմ: Այս խայտառակ համաձայնագրի պատճառով կորսվեց Արցախի տարածքի 70 %-ից ավելին: Այս պարտության պատճառները կուսումնասիրվեն, և պատմությունը կտա իր գնահատականը: ■

Հղումներ

1- Տես Մինասյան Է., նշվ. հոդ., էջ 15:
2- Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, պատմությունը, գործունեությունը և հեռանկարները, Եր., 2006, էջ 58, 62-63:
3- Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով, նախարարի օրագրից, Եր., 2013, էջ 186-187:
4- Տես նույն տեղում:
5- Տես նույն տեղում, էջ 186-187:
6- Տես նույն տեղում, էջ 180, 183-184, 187:
7- Տես Մինասյան Է., նշվ. հոդ., էջ 15:
8- Տես Օսկանյան Վ., նշվ. աշխ., էջ 190, 198-199:
9- Տես նույն տեղում, էջ 200:
10- Տես ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ՀՀ արտաքին քաղաքական գործունեության 2008 թ. ամփոփումը, թ. 4-5:
11- Տես նույն տեղում, ՀՀ ԱԳՆ 2010 թ. գործունեության հաշվետվությունը, թ. 7-8:
12- Տես ՀՀ ԱԳՆ 2010 թ. գործունեության հաշվետվությունը, թ. 7-9:
13- Տես ՀՀ ԱԳՆ 2010 թ. գործունեության հաշվետվությունը, թ. 8-9, նաև՝ «Հայաստանի Հանրապետություն», 25 հունիսի 2011:
14- Տես «Հայաստանի Հանրապետություն», 25 հունիսի 2011:
15- Տես նույն տեղում, նաև՝ ՀՀ ԱԳՆ 2012 թ. գործունեության հաշվետվությունը, թ. 4-6, «Հայաստանի Հանրապետություն», 24 հունվարի 2012:
16- Նույն տեղում:
17- Տես նույն տեղում:
18- Տես արտգործնախարարության ընթացիկ արխիվ, 2012 ՀՀ ԱԳՆ գործունեության հաշվետվություն, Եր., 2013, էջ 4-6:
18- Տես 2013 ՀՀ ԱԳՆ գործունեության հաշվետվություն, Եր., 2014, էջ 6-8:
19- Տես նույն տեղում:
20- Տես «Հայաստանի Հանրապետություն», 3 փետրվարի 2016, Էջ5
21- Տես նույն տեղում:
22- Տես նույն տեղում:
23- Տես «Հայաստանի Հանրապետություն», 21 հունիսի, 2016, էջ 3:
24- Տես նույն տեղում:
25- Տես «Հայաստանի Հանրապետություն», 3 մարտի 2017, էջ 3:
26- Հայտարարության տեքստը տես Հրապարակվել է Հայաստանի վարչապետի, ՌԴ և Ադրբեջանի նախագահների հայտարարության պաշտոնական տեքստը | ԱՐՄԵՆՊՐԵՍ Հայկական լրատվական գործակալություն (armenpress.am): https://armenpress.am/arm/news/1034480.html

Իմը

Նորեկ Գասպարյան
Գրող, Արցախի վաստակավոր լրագրող, ռեժիսոր

Չգիտեմ: Անելիքս: Ասելիքս: Բայց դե, այսպես շվար, շփոթ կանգնելն էլ մի բան չէ: Գուցե շատ խոսելուց է: Ու հոգնել եմ: Ասում են՝ լինում է նման բան: Ուզում եմ ասել՝ միշտ մի տեղ կանգնում-մնում ես: Ո՛չ առաջ, ո՛չ ետ: Դադար: Հնարավոր է՝ մե՛ծ... Մոնչում ես... Գիժ է... Չէ, մահացել-գնացել ես, չկաս, գոյություն չունես: Վերջ: Ավարտ: Ընդամենը այդքան բան, այն էլ՝ անհավատալի: Գոնե մի եկող լիներ: Նրանցից մեկը: Որ առաջ այնպես առատորեն գալիս էին... թեպետ սպասող էլ չկա... Հիշում եք, ցուցակներ, հյուրանոցներ, առանձնատներ... երկրում նեղվածք էր, հազիվ էինք տեղավորվում... լավ էր, շատ լավ էր... հեքիաթային... Բոլորն ուզում էին տեսնել մեզ... կանգնել մեր կողքին և մեր լուսանկարները տեղադրել հայտնի ու անհայտ թերթերի ու ամսագրերի առաջին էջերին... գունավոր, մեծադիր... ժամանակակից... Իսկապես լավ էր...

Մի տարիքն առած ընկեր ունեի, դժգոհը միայն նա էր, ասում էր՝ ինչ է, բան ու գործ չունեն, որ էսքան գալիս են... Հասկացանք՝ տոն է, շնորհավորելը՝ համարյա պարտադիր, բայց էսքա՞ն...

Բոլորի խոսքին չէ, որ հավատում էինք... Բայց դե, եկողին էլ չէինք ասի՝ տեղ չունենք, կամ ինչու եք եկել: Չէր ստացվի... կարևորը մենակ չէինք:

Իմ՝ այդ տարիքն առած ընկերոջը, գիտեք, ամենաշատն ինչն էր զարմացնում: Էդ եկողների կուրծքը զարդարող մեդալներն ու շքանշանները: Շատ: Շատ-շատ: Օրինակի համար, եթե փորձեին մի մեդալ էլ կախել դրանց կողքին, հաստատ տեղ չէին գտնի: Պատկերացնում եք, ընդամենը մի փոքրիկ ազատ, անմեդալ տեղ: Լավ էլ զրնգում էին, երբ մեր այդ հերոսները շարժում էին ոտքը կամ ձեռքը: Բա ո՞նց, եղբա՛յր: Մեդալը հանաք բան չէ, անցած դժվարին ու բարդ ճանապարհի վկան, մի քանի կիլոմետրից երևում է: Բայց մի անգամ էլ եմ ասում՝ վատ չէր: Կարգին ուրախանում էինք, կարևորվում, մեզ լավ զգում, տան եղած-չեղածը դնում սեղանին: Հանկարծ դժգոհ հեռացող չլինի: Անթույլատրելի բան է, մեզ ոչ սազական, էն էլ՝ նման օրը:

Չէ, չեմ ուզում ասել, որ հիմա մեզ շնորհավորող չկա: Հիմա էլ կան նման մարդիկ՝ մեր կողքին կանգնող, մեզանով հպարտացող ու հիացող, նույնիսկ մեզ հերոս համարող, մի ժամանակ թշնամու առաջ երկրի դարպասները գոց պահող, բայց...

Լավ: Կարծում եմ՝ գոնե մի օր կարելի է իրար չմեղադրել, դասերով ու խորհուրդներով չհոգնեցնել: Երկիրը չբաժանել նախկինների ու նորերի միջև: Հին Հայաստան և... նո՛ր... Հետո՛... Գուցե ամենանո՛րը, չէ՛, նորագույնը... Չասեմ, որ ես նման մեկնություններից ոչինչ չեմ հասկանում, որ դա իմ բանականության ու մտածումի տարածքներից դուրս է: Իմ ունեցած երկիրը մեկն է, չբաժանվող, ամբողջ, միայն մեկին կամ մի քանիսին չպատկանող:

Կարծեմ 92-ին էր, պատրաստվում էինք մեր կորցրած գյուղերն ու քաղաքները վերադարձնելու, և տղերքից մեկը հենց խրամատում ընդամենը մի քանի բառ դրեց իրար կողքի. «Մինչև մահը չսիրենք այնքան, ինչքան կյանքը, չենք կարողանալու հաղթել...»: Չէի հասկանում, ավելի ճիշտ՝ հասկանում էի, բայց չէի ուզում համաձայնել: Ինչպե՞ս... մահը սիրել... չէ մի՛... հնարավոր բան չէ... Ոնց որ ճիշտ չէր զինվոր ախպերս... Ոնց որ մի քիչ, շատ չէ, մի քիչ չափն անցնում էր... Մեկն էլ ասում էր, չէ՛, զարկվողը դավաճան է... Երևի նրան էլ չէին հասկանում...

Եվ դա հին Հայաստանում էր... Երկիրն ուներ միայն զինվոր և ոգի... Երբ Քարինտակ գյուղի ծայրին կուչ եկած տունը ժամերով կռիվ տվեց ու մնաց անառիկ: Իսկ տանը ընդամենը մի ջահել կին էր ու մի անչափահաս տղեկ, մայր ու որդի... ժամերով թշնամու դեմ... մեն-մենակ...

Երբ արդեն հանձնված Չլդրան գյուղում ծերունին մենակ մի քանի ժամ պաշտպանեց իր օջախը, և թշնամին, չկարողանալով գրավել այն, մատնեց կրակի... Մարդը չէր լքել հիվանդ կնոջը... Դա էլի հին Հայաստանում էր...

Երբ հրամանատարն ամեն ինչ անում էր, որպեսզի առաջին գիծ զինամթերք հասցրած 14 տարեկան տղեկը ծնողների հետ հեռանա վտանգված գյուղից, և այդ 14 տարեկան տղամարդը չի հեռանում...

Երբ մարդիկ, դեռ պատերազմը չավարտված, օրեր առաջ ազատագրված գյուղում ավերակներից քար-քար, ծվեն-ծվեն, բուռ-բուռ բարձրացնում էին քարուքանդ տունը...

Էլի մեր այդ հին Հայաստանում...

Երբ հազար անգամ զարկված ու հարություն առած հրամանատարը մարտադաշտում զինվորից առաջ էր...

Երբ թիկունքն առաջին գիծ էր...

Երբ Շուշիի որբանոցում մեծացածը, չորսին թողած, մեկնում էր ճակատ ու... չէր կարող վերադառնալ... Չորս որբ... Առանց որբանոցի... Ո՞վ է ի վիճակի գեղեցիկ պատմություններ հորինելու:

...Երեք եղբայր... Հայր ու որդի... Մի ամբողջ ընտանիք... Էլի՞...

Արցախի Հանրապետություն... Էլի այդ հին Հայաստանում...

Կարո՞ղ ես հրաժարվել... Ունեցածից... Երեսուն տարվա արարումից... Ամեն օրվա մեջ՝ չարչարանք, ցավ, խիզախում... արցունքոտ հաց... արժանապատվություն...

Ապրո՞ղը... Խենթերի ժամանակը չի ավարտվում, կամ խենթերը երբեք չեն ուշանում... Չե՞ք զգում նրանց տաք մոնչոց-շնչառությունը, չե՞ք լսում անընդհատ մոտեցող կրակ ոտնաձայնը... Դասագրքերից դուրս, խղճուկ օրենքներից ու որոշումներից անդին... Մահվան հերն անիծած... Մենակ ու միասին... Չվարժեցվող...

Զինվո՞ր... Առյուծն էլ առյուծ է... Իսկ Շուշիի գերեզմանաքարերին խենթերի պատմությունն է... Նաև հեռուներից եկած... 20-րդ դարասկզբին քաղաքը մուսուլմաններից պաշտպանող... Ուսյալ, աշխարհի գործերը մեկնող, դժբախտությունների համար ուրիշներին չմեղադրող...

– Եղբա՛յր, զինվորի նախկինը ո՞րն է... Թող խելոք մեկը բացատրի, իմանանք...

Իսկ երկիրը վերքածածկ է... մի ծունկը գետնին: Ինքն իր մեջ չտեղավորվող: Հայացքը կորցրածին...

Շուշիում գնտվող Ավան հարյուրապետի ամրոցը

Ստեփանակերտի հրապարակը

Կարոտը՝ թոնրահացի թանձր բույր, պապենական տան հոտ, տատիկների գույն-գույն շալերի ջերմություն... Դիմանալը՝ վերադարձի խորհուրդ...

ԿԱՄ

Միտքս՝ պտղավորվելու պատրաստ:

Շնորհավորե՞ք: Առանց երկմտելու: Եվ անհասկանալի հպարտությունից չենք խոսում, արածթողածից էլ: Ուղղակի մերոնցով: Մենք ու մենք: Զարկվածների հետ: Դա է ճիշտը: Ով էլ բարեհաճի ժամանել, ուրախ կլինենք: Ճիշտ է, էն առաջվա ցնծությունը չի լինի, բայց... Մեր տրամադրությանն ու մտածածին հարիր: Հնի ու նորի խաչմերուկում...

Եվ ոչի՞նչ, որ ինչ-որ՝ տեղ ինչ-որ բան մնացել է կիսատ... Շարունակող էլ չի լինելու: Հիշո՞ւմ եք՝ հունձքն առատ է, մշակը՝ պակաս... Էլի... Վաղն էլ... Գիտեք չէ՞՝ Ավան հարյուրապետի ամրոցը Շուշիում է... Ձորքն էլ՝ 6900... Դա՝ 1700-ականների սկզբին... Պինդ-պինդ, բարձր-բարձր պարիսպներին էլ՝ մանկությունս... Ձեն հանեք... Զինվորի նախկինը ո՞րն է...

Հավատաք-չհավատաք, ընդունեք-չընդունեք, ես հին Հայաստանից եմ գալիս... Շուշիից... Մի՞թե իրավունք չունեմ հպարտանալու...

Ի՞նչ երկիր կ'ուզենք կառուցել

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Անկախ անկէ, թէ ի՞նչ իրավիճակի մէջ կը գտնուի հայութիւնը այսօր, յատկապէս անկախ անկէ, թէ քաղաքական-ռազմական ու մանաւանդ հոգեբանական ի՞նչ կացութիւն կը տիրէ մեր հայրենիքէն ներս և դուրս, նաև անկախ անկէ, թէ մեր հայրենիքի պատմական տարածքին աւելի քան 90 առ հարիւրը կը մնայ բռնագրաւուած մեր թշնամիներուն կողմէ, մեր ժողովուրդին ալ գուցէ երեք քառորդը կամ աւելին կը գտնուի իր պապենական հողերէն դուրս, և համոզուած, որ ազգի մը պատմութեան թաւալումին մէջ իրավիճակները միայն ժամանակաւոր բնոյթ կը կրեն, մենք չենք կրնար դադրիլ մտածելէ մեր ապագային մասին, մեր ազգի ու մանաւանդ մեր երկրի ապագային մասին:

Այո՛, հարց տանք մենք մեզի, թէ իրապէս ի՞նչ ժողովուրդ կ'ուզենք ըլլալ, ի՞նչ տեսակ երկիր կ'ուզենք ունենալ, ինչպէ՞ս կ'ուզենք ապրիլ մեր ազգային կեանքը:

Կասկած չկայ, որ կ'ուզենք ապրիլ մեր հայրենիքին մէջ, ապրիլ խաղաղ, ապրիլ հանգիստ ու ապահով, ապրիլ մե՛ր ցանկացած ձևով ու ոճով, մանաւանդ բնական ու գործակցական յարաբերութիւններով մեր շրջապատին հետ, աշխարհի՞ն հետ: Ձերծ թշնամիին սպառնալիքներէն, ճնշումներէն և որևէ պահու անոր յարձակումին ենթարկուելու մտավախութենէն: Այլ խօսքով՝ զերծ թշնամիներով շրջապատուած ըլլալու իրավիճակէն: Աւելի ճիշտ՝ ուզելով միայն բարեկամներ, նուազագոյնը ոչ թշնամիներ ունենալ մեր բոլոր սահմաններէն անդին:

Կ'ուզենք նաև, որ մեր երկրի սահմանները ըլլան այնպէս, որ մեր համրանքին մեծամասնութիւնը կարենայ ոտքին տակ ունենալ կենսական տարածք մը, ունենայ իր կեցութիւնը ապահովելու անհրաժեշտ պայմանները՝ բնական հարստութիւնները, անոնց ի՞նք տէր կանգնելու և անոնցմէ անխափան օգտուելու հնարաւորութիւնը՝ ի՞ր իսկ կարիքները հոգալու համար, ու մանաւանդ տնտեսական միջոցները՝ այդ ընել կարենալու համար:

Կ'ուզենք կերտել երկիր, ուր կարենանք պահել-պահպանել մեր մշակութային ժառանգութիւնը, անարգել զարգացնել մեր մշակոյթը՝ մեր լուման բերելով աշխարհի քաղաքակրթութեան, ապրիլ ու գործել Արտաշէս Առաջինի օրէն իսկ պետական լեզու յայտարարուած մեր հայերէնով՝ զայն տևաբար անաղարտ ճոխացնելով ու արդիացնելով, և անո՛վ՝ Նարեկացիի լեզուով, աղօթել մեր Աստծոյն:

Կ'ուզենք կարենալ աշխատիլ ու արդարօրէն վայելել մեր աշխատանքին պտուղը՝ առանց ենթարկուելու հարստահարութիւններու, յափշտակումներու, կողոպուտներու, առանց որ ուրիշին կողմէ շահագործուի մեր քրտինքը, նաև առանց շահագործելու ուրիշին քրտինքը, բոլորս՝ հաւասար իրաւունքներով ու պարտաւորութիւններով:

Երկիր, ուր ոչ ոք կարօտ ըլլայ օրուան հացին, ոչ ոք զուրկ ըլլայ երդիքէ մը իր գլխուն վերև, ոչ ոքի զլացուին առողջական խնամք ու նուազագոյն կենսաթոշակ,

բայց մանաւանդ ոչ ոքի առջև փակ ըլլան ուսանելու, զարգանալու՝ յառաջդիմելու ուղիները:

Երկիր, ուր խրախուսուի նախաձեռնութեան ոգին, ուր յառաջդիմութիւնը կախում ունենայ աշխատանքէդ, արժանիքներէդ և ոչ՝ ծանօթութիւններէդ ու խնամիական կապերէդ, ուր «կաշառք», «նախանձ» ու «ձրիակերութիւն» բառերը արտաքսուած իսկ ըլլան մեր լեզուէն, ուր որակը և ոչ թէ նիւթական շահը ըլլայ նպատակ, ուր ինքնագերազանցումը ըլլայ մղիչ ուժ:

Երկիր, ուր արդարօրէն գնահատուի մտաւորական ներդրումը, ուր ուսուցիչ, գրող, արուեստագէտ, գիտնական թէ բուժաշխատող արժանանան պետութեան ու հաւաքականութեան անսակարկ յարգանքին ու վարձատրութեան՝ իրենց ասպարէզին յոյժ կարևորութեան համապատասխան:

Երկիր, որուն ամբողջ ներուժը՝ Սփիւռքի թէ հայրենիքի, ի սպաս դրուած ըլլայ իր կայացման, պահպանման, պաշտպանութեան ու յառաջդիմութեան:

Երկիր, որ իր կարգին իր կենսական մասնակցութիւնը բերէ իր տարագիր ժողովուրդի գոյութեան և ինքնութեան պահպանման գերմարդկային ճիգերուն՝ փոխադարձաբար զօրանալու և իրարու նեցուկ ըլլալու հեռանկարով:

Երկիր, որ կարենայ ի վերջոյ համախմբել իր տարագիր ժողովուրդը, երկիր, որ այնքան ըլլայ հրապուրիչ ու ներգրաւող, որ «ցանկապատէն անդին երևցող մարգը աւելի կանաչ» չթուի, ուր վերադառնալ-ապրիլը ոչ թէ զգացական, հայրենասիրական արարք ըլլայ, այլ իրապէս ամե՛ն տեղէ աւելի լաւ ապրելու տենչ և ակնկալութիւն:

Երկիր, որ կարենայ իր դերը խաղալ որպէս քաղաքակրթութիւններու կամուրջ Հիւսիսի ու Հարաւի միջև, Արևելքի ու Արևմուտքի միջև, ինչպէս եղած է դարերո՛ւ ու դարերո՛ւ: Կամուրջ՝ որպէս ոչ միայն մշակութային, ոչ միայն տնտեսական, այլև բնութեան պահպանման ու համամարդկային խնդիրները միասնաբար լուծելու կենսական օղակ: Երկիր, որ իր ներդրումով և մարդկային արժէքներով ու արժանիքներով վայելէ բոլորին ճանաչումն ու յարգանքը:

Եթէ կոչ կ'ընենք պայքարը շարունակելու, ահա թէ ինչի համար կ'ուզենք պայքարիլ, պայքարիլ երկար շունչով, անդեղն վճռակամութեամբ, անվհատ: ■

Հեմահեները

Արշակ Մելիքյան

Ծնվել է 1987 թ. հունվարի 27-ին Պոռոշյան ավանում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ջիվանու աշուղական դպրոցում: Սովորելուն զուգահեռ անդամագրվել է Արարատյան հայրապետական թեմին:
ՀՅԴ անդամ էր:
2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտին, մասնակցել զինվորական պատրաստության եռօրյա մարզումներին: Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնել է Արցախ և անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում:
2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվել է Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքը:
Արշակ Տիգրանի Մելիքյանը մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Արտակ Իշխանյան

Ծնվել է 1993 թ. հուլիսի 3-ին Մարտունու շրջանի Աշան գյուղում: Սովորել է տեղի Անիտա Հովսեփյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 2010 թ.:
2007 թվականից անդամակցել է ՀՅԴ պատանեկան միության Աշանի խմբին: 2010 թվականից ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անդամ էր:
2010 թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը:
2011-2013 թթ. ծառայել է Արցախի պաշտպանության բանակում:
2013 թ. շարունակել է ուսումը ԱրՊՀ ճարտարապետաշինարարական ֆակուլտետում, որն ավարտել է 2016 թ.:
2016 թ. մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին որպես հրետանավոր:
2016 թ. դեկտեմբերի 26-ին երդվել և ընդունվել է ՀՅԴ կուսակցության շարքերը:
2010-2020 թթ. ակտիվ գործունեություն է ծավալել Արցախի երիտասարդական միության շարքերում թե՛ որպես ՀՅԴ ԱԵՄ-ի կենտրոնական վարչության անդամ և թե՛ որպես Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեության «Արամ Մանուկյան» խմբի խմբապետ:
2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ պատերազմի լուրը լսելուն պես, անմիջապես մեկնել է ռազմաճակատ՝ ամրանալով Մարտունու դիրքերից մեկում: Իր առջև դրված խնդիրը վստահորեն կատարելով՝ նահատակվել է հոկտեմբերի 31-ի լույս 1-ի գիշերը անօդաչու թռչող սարքի հարվածից:
Ամուսնացած էր, ունի մեկ տղա:
Արտակ Գրիգորիի Իշխանյանը Արցախի նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» շքանշանով:

Մոսիկ Սեքլեմեան

Ծնած է Հալէպ 2 դեկտեմբեր 1992 թ.: Կրթութիւնը ստացած է Ս. Զեմպէրճեան կրթասիրաց վարժարանին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ի Նոր Գիւղի գայլիկական միաւորին: Պատանեկան տարիքէն մաս կազմած է նաև ՀՄԸՄ-ի Հալէպի ֆութպոլի խումբին և իբրև դարպասապահ մասնակցած է բազմաթիւ մրցաշարքներու:
Եղբ. Մոսիկ անդամակցած է նաև Սուրիոյ երիտասարդական միութեան և ապա՝ ՀՅԴ շարքերուն՝ խոստանալով «Եթէ հարկ ըլլայ արեան գնով» տէր կանգնիլ այն բոլոր արժէքներուն, որոնք ազգն ու հայրենիքը կը պահեն: Առ այդ ան իր մասնակցութիւնը բերած է Հալէպի հայաշատ թաղամասերու պաշտպանութեան և մարդասիրական օժանդակութեան աշխատանքներուն:
Արցախեան նորագոյն պատերազմին բոնկումէն կարճ ատեն մը ետք, հողին կանչին ընդառաջելով, իբրև «Դաշնակցութեան մարտիկ, ազգի քաջ զինուոր»՝ եղբ. Մոսիկ կը մեկնի հայրենիք և 5 նոյեմբեր 2020 թ.՝ Շուշիի պաշտպանութեան կռիւներուն, անձնուիրաբար կը զոհուի թշնամիի հարուածէն:
Ան իր հանգիստը կը գտնէ Եռաբլուրի նահատակաց պանթէոնին մէջ 19 նոյեմբեր 2020 թ.: Յետ նահատակութեան հայրենի պետութիւնը զայն կը պարգևատրէ «Արիութեան» մետալով:

Յակոբ Աստարճեան

Ծնած է Հալէպ 1991 թ.: Նախնական ուսումը ստացած է Սահակեան Ազգային վարժարանին, իսկ երկրորդական ուսումը՝ «Քարէն Եփիէ» ազգային ճեմարանին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ի շարքերուն: Եղած է գայլիկ, ապա՝ սկաուտ՝ մաս կազմելով «Շաւարշ Քրիսեան» արիական միաւորին, հասնելով մինչև առաջնորդի աստիճանին:
Ան մաս կազմած է ՀՄԸՄ-ի Հալէպի ֆութպոլի խումբին և ստանձնած է օգնական մարզիչի պարտականութիւնը:
Յակոբ մաս կազմած է Սուրիոյ երիտասարդական միութեան և ապա՝ ՀՅԴ շարքերուն:
Սուրիոյ պատերազմին իր անսակարկ ներդրումը կ'ունենայ Հալէպի հայաշատ թաղամասերու և ի մասնաւորի Նոր Գիւղ թաղամասի հսկողութեան ու պաշտպանութեան գործին:
Կենաց-մահու օրհասի պահուն, երբ խնդրոյ առարկայ էր հայ ժողովուրդի լիներութիւնը, հայրենասիրական ոգին Յակոբը կ'ուղղէ Արցախ իր հրամանատարին՝ Յարութ Բանոյեանին հետ: Ան կը մասնակցի Շուշիի պաշտպանութեան կռիւներուն և 5 նոյեմբեր 2020 թ. հերոսաբար կը նահատակուի բերդաքաղաքի մատոյցներուն:
Յակոբ յաւիտենական հանգիստը կը գտնէ Եռաբլուրի նահատակաց պանթէոնին մէջ 19 նոյեմբեր 2020 թ.: Յետ նահատակութեան հայրենի պետութիւնը զայն կը պարգևատրէ «Արիութեան» մետալով:

Յարութ Բանոյեան

Ծնած է Հալէպ 1976 թ.: Կրթութիւնը ստացած է «Քարէն Եփիէ» Ազգային ճեմարանին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ին: Եղած է գայլիկ՝ ստանալով վարիչ վեցակապետի աստիճան, ապա՝ սկաուտ՝ հասնելով մինչև առաջնորդի աստիճանին:
Եղբ. Յարութ մաս կազմած է ՀՅԴ շարքերուն:
Սուրիոյ պատերազմին՝ եղբ. Ռաֆֆի Պչաքճեանի նահատակութենէն ետք, ան Հալէպի հայաշատ թաղամասերու ինքնապաշտպանութեան ղեկավարն ու հրամանատարն էր, ոգին և շարժիչ ուժը Նոր Գիւղ թաղամասի ինքնապաշտպանութեան ուժերուն:
21 սեպտեմբեր 2019 թ. Հայաստանի վերանկախութեան տօնին առիթով հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման իր ունեցած աւանդին և ազգանուէր գործունէութեան համար եղբ. Յարութ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի հրամանագիրով ու ձեռամբ կը պարգևատրուի Հայրենիքին մատուցած ծառայութիւններու երկրորդ աստիճանի մետալով:
Իր երդումին հաւատարիմ՝ քաջարի հրամանատարը արցախեան պատերազմէն օրեր ետք իր խումբով կը փութայ մարտի դաշտ՝ համայն հայութեան սպառնացող վտանգը կասեցնելու համար: Իր ռազմական փայլուն կարողութիւններով ան թշնամին բազմիցս ետ կը մղէ խիզախաբար:
Եղբ. Յարութ կը զոհուի Շուշիի ինքնապաշտպանութեան օրհասական մարտերուն՝ 5 նոյեմբեր 2020 թ.: Հայրենի հողը զինք կը գրկէ Եռաբլուրի նահատակաց պանթէոնին մէջ 19 նոյեմբեր 2020 թ.: Յետ նահատակութեան հայրենի պետութիւնը զայն կը պարգևատրէ Հայաստանի Հանրապետութեան «Մարտական խաչ» 1-ին աստիճանի մետալով:

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

Հայաստանի Հանրապետութիւնը ունէր սահմանավէճ Վրաստանի և Ազրբէջանի հետ և հողային պահանջներ Թուրքիայից։ Ինչպէ՞ս լուծեցին այդ կենսական հարցերը հայ բոլշևիկները։

Վրաստանի հետ բարեկամութիւն հաստատելու համար նրանք հրաժարուեցին զուտ հայկական և Հայաստանի անբաժան մաս կազմող Ախալքալաքի շրջանից և հայկական Լոռիի մի մասից և այդպիսով խնդիրը փակուած յայտարարեցին։ Ուրիշ խօսքով, ամբողջապէս բաւարարեցին վրացի ազգայնականներին՝ ի վնաս Հայաստանի և հայ ժողովրդի։

Ազդրբէջանին աւելի ծայրայեղ զիջումներ արին։ Հակառակ Նարիմանովի ծանօթ յայտարարութեան, որով Խորհրդ. Ազրբէջանը հրաժարւում էր Ղարաբաղից յօգուտ Խորհրդային Հայաստանի, հայ բոլշևիկները, վերջ ի վերջոյ, համաձայնուեցին, որ Ղարաբաղի իր աւելի քան 150,000-նոց զուտ հայ բնակչութեամբ մնայ Ազրբէջանի սահմաններում, և, իբրեւ վերադիր, թոյլ տուին նաև, որ Ազրբէջանի քոչուորները ամառները օգտուին Զանգեզուրի արօտավայրերից, առանց որևէ փոխարինութեան Հայաստանին։

Այսքանն էլ բաւական չեղաւ. հայ բոլշևիկները համաձայնուեցին, որ Ազդրբէջանին տրուին նախիջևանն ու Շարուրը, որոնք նոյնիսկ ընդհանուր սահման չունին Ազրբէջանի հետ և գտնւում են Հայաստանի սրտում։

Փոխարէնը հայ բոլշևիկները ոչինչ չստացան Վրաստանից և Ազրբէջանից յօգուտ Հայաստանի։ Այս պայմաններով, ի հարկէ, առաջ էլ դժուար չէր խաղաղութիւն հաստատել։ Եթէ Երևանն ու Էջմիածինն էլ յանձնէին, խաղաղութիւնը աւելի կատարեալ ու տևական կը լինէր։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՒ
Երկրորդ տպագրութիւն, Պէյրութ, Տպարան «Համազգային» Ընկերութեան, 1953
էջ 172

2021 թ. Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ «Հայաստան» դաշինքի կազմակերպած ջահերով երթը դեպի «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ խոնարհվելու համար 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակի առջև

ԴՐՕՇԱԿ